12) մասնակցում է Աշխատակազմի կառուցվածքային, հաստիքային, ինչպես նաև պետական ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ կատարելու նախապատրաստման աշխատանքներին.

13) ապահովում է Աշխատակազմի պետական ծառայության պաշտոնների անձնագրերի, դրանցում փոփոխություններ կատարելու նախագծերի մշակման աշխատանքների իրականացումը.

14) ապահովում է Աշխատակազմի ֆինանսատնտեսական աջակցության, աշխատանքային անհրաժեշտ պայմանների, նյութական և վարչատնտեսական ապահովության հետ կապված աշխատանքները.

15) մասնակցում է ֆինանսական հաշվետվությունների կազմմանը, այդ թվում՝ նաև տրամադրում է տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակահատվածում աշխատակազմի փաստացի եկամուտների, ծախսերի և կանխատեսումների մասին.

16) ապահովում է ծախսերի կատարման ընթացքում ծագած թերությունների հայտնաբերումը, միջոցներ է ձեռնարկում ստուգումներով հայտնաբերված ֆինանսական խախտումների վերացման համար.

17) Պաշտպանին ներկայացնում է վարչատնտեսական աշխատանքների պատշաճ կազմակերպման համար առաջարկություններ.

18) ապահովում է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան գնումների գործընթացը.

19) վերահսկում է գնումների գործի կազմակերպման պատասխանատուին վերապահված լիազորությունները.

20) ստուգում է տեխնիկատնտեսական անձնակազմի կատարած աշխատանքները և անհրաժեշտության դեպքում տալիս ցուցումներ.

21) Պաշտպանին առաջարկություններ է ներկայացնում՝ Աշխատակազմի աշխատողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարգապահական տույժի ենթարկելու և խրախուսելու վերաբերյալ.

22) միջնորդություն է ներկայացնում Պաշտպանին՝ Աշխատակազմի աշխատողներին գործուղելու, արձակուրդ տրամադրելու վերաբերյալ.

23) առաջարկություններ է ներկայացնում աշխատողների փոխարինման վերաբերյալ.

24) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է Աշխատակազմին ամրացված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

25) ապահովում է Աշխատակազմի բյուջեի և միջնաժամկետ ծախսային ծրագրերի նախագծման և դրանք սահմանված ժամկետում Պաշտպանին ներկայացնելու աշխատանքների իրականացումը.

26) ապահովում է Աշխատակազմի միջնաժամկետ ծախսային ծրագրերն սահմանված կարգով իրականացնելու աշխատանքները.

27) ապահովում է Աշխատակազմի բյուջետային միջոցների ծախսերի կատարումը.

28) ապահովում է միջնաժամկետ ծախսային ծրագրերով և այլ ծրագրերով Աշխատակազմի գործունեության, ձեռքբերված արդյունքների և կատարված ծախսերի վերաբերյալ սահմանված կարգով և ժամկետներում հաշվետվությունների ներկայացումը.

29) օրենքով սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով պետությանը պատճառված վնասի համար.

30) կազմակերպում է Պաշտպանի Աշխատակազմում քննարկումների և խորհրդակցությունների անցկացման աշխատանքները.

31) իր լիազորությունների սահմաններում Պաշտպանի ստորագրությանն է ներկայացնում Պաշտպանի հրամանների, որոշումների, ինչպես նաև հանձնարարականների նախագծերը.

32) Պաշտպանի աշխատակազմում կազմակերպում է գործավարության և տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքները.

33) Պաշտպանի հանձնարարությամբ կատարում է քաղաքացիների ընդունելություն.

34) Պաշտպանին է ներկայացնում Աշխատակազմի աշխատանքային ծրագրերը.

35) այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանում է Աշխատակազմի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր.

36) ապահովում է Պաշտպանի տարեկան հաղորդման, հատուկ կամ արտահերթ զեկույցների համար նյութերի նախապատրաստումը և մասնակցում է դրանց կազմման աշխատանքներին.

37) ստորագրում է Աշխատակազմի անունից պատրաստվող փաստաթղթերը.

38) Աշխատակազմի լիազորությունների շրջանակներում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդություններ, զեկուցագրեր և այլ փաստաթղթեր, ըստ անհրաժեշտության Պաշտպանին է ներկայացնում առաջարկություններ՝ Աշխատակազմի աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր կազմավորելու համար.

39) Աշխատակազմի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված կարող է հրավիրել խորհրդակցություններ՝ դրանց մասնակից դարձնելով համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների, փորձագետների.

40) իրականացնում է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով և այլ իրավական ակտերով վերապահված գործառույթներ.

41) Աշխատակազմի ղեկավարն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):

III. ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

12. Աշխատակազմի ղեկավարին շնորհվում է Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության 1-ին դասի պետական խորհրդականի դասային աստիճան:

ՑԱՆԿ № 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ (ՊԱՐՏԱԴԻՐ) ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Աշխատանքի, կատարողականի գնահատում և կառավարում
2. Առաջնորդում և թիմի ստեղծում
3. Արդյունքների ապահովում
4. Խնդիրների լուծում
5. Հաղորդակցություն
6. Հաշվետվությունների մշակում և ներկայացում
7. Միջանձնային հարաբերություններ
8. Մտածողության ոճեր
9. Որոշումների կայացում
10. Ռազմավարական պլանավորում
11. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծում և կառավարում
12. Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային հմտություններ
13. Քաղաքականության մշակում և իրականացում

ՑԱՆԿ № 2

ՍՈՒՅՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Անձնակազմի կառավարում և զարգացում
2. Աշխատանքային պլանի մշակում
3. Արտակարգ իրավիճակների կառավարում
4. Բանակցությունների հմտություններ
5. Բողոքների բավարարում
6. Ելույթների հմտություններ
7. Ժամանակի կառավարում
8. Ծրագրերի մշակում և կառավարում
9. Կոնֆլիկտների կառավարում
10. Նպատակների սահմանում
11. Շահադրդում
12. Պատվիրակում
13. Ռեսուրսների բաշխում և կառավարում
14. Սթրեսի կառավարում
15. Փոփոխությունների կառավարում
16. Քաղաքացիների սպասարկում
17. Ֆինանսների կառավարում
18. Որոշումների և փաստաթղթերի նախապատրաստում
19. Ուսուցում գործողությունների միջոցով

Հավելված
Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպանի
2018 թվականի մայիսի 24-ի
թիվ 5-Լ հրամանի

Պաշտոնի ծածկագիր ՄԻՊԱ 1.2.2

ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) քարտուղարության (այսուհետ՝ Քարտուղարություն) ղեկավարի տեղակալի պաշտոնն ընդգրկվում է Պաշտպանի Աշխատակազմում բարձրագույն պաշտոնների խմբի 2-րդ ենթախմբում:

2. Աշխատակազմի քարտուղարության ղեկավարի տեղակալին օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Պաշտպանը:

II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Քարտուղարության ղեկավարի տեղակալն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Քարտուղարության ղեկավարին:

4. Քարտուղարության ղեկավարի տեղակալն իրեն ենթակա աշխատողներ չունի:

5. Քարտուղարության ղեկավարի տեղակալը Քարտուղարության ղեկավարի բացակայության դեպքում փոխարինում է նրան:

Քարտուղարության ղեկավարի տեղակալի բացակայության դեպքում նրան փոխարինում է Պաշտպանի աշխատակազմի քարտուղարության վերահսկողական և անձնակազմի կառավարման բաժնի պետը:

6. Քարտուղարության ղեկավարի տեղակալը՝

1) Քարտուղարության ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է Քարտուղարության ընթացիկ գործունեության կազմակերպման, ծրագրման, համակարգման, ղեկավարման և վերահսկման աշխատանքներին.

2) կատարում է Պաշտպանի և Քարտուղարության ղեկավարի հանձնարարականները.

3) պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները չկատարելու կամ ոչ

պատշաճ կատարելու, կամ լիազորությունները վերազանցելու, ինչպես նաև տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

III. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Քարտուղարության ղեկավարի տեղակալը՝

1) իր լիազորությունների շրջանակներում լուծում է Քարտուղարության առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրներ և ընդունում որոշումներ.

2) իր լիազորությունների շրջանակներում տալիս է ցուցումներ և հանձնարարականներ:

IV. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Քարտուղարության ղեկավարի տեղակալը՝

1) Աշխատակազմի ներսում շփվում է Պաշտպանի, Քարտուղարության ղեկավարի, դեպարտամենտների ղեկավարների, Պաշտպանի խորհրդականների, օգնականների, Աշխատակազմի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների հետ.

2) Քարտուղարության ղեկավարի հանձնարարությամբ Աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, բանակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով, հաշվետվություններով և այլն.

3) մասնակցում է պետական և այլ մարմինների նիստերին (խորհրդակցություններին):

V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Քարտուղարության ղեկավարի տեղակալը՝

1) Պաշտպանի և Քարտուղարության ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է Աշխատակազմի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.

2) բացահայտում, վերլուծում, գնահատում, ինչպես նաև ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ է տալիս Աշխատակազմի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրներին:

VI. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Քարտուղարության ղեկավարի տեղակալն ունի՝

1) բարձրագույն կրթություն՝ իրավագիտություն կամ տնտեսագիտություն (էկոնոմիկա) կամ կառավարում (մենեջմենթ) մասնագիտությամբ.

2) պետական ծառայության գլխավոր պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա պետական ծառայության ստաժ կամ պետական ծառայության առնվազն 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական պաշտոններում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ կամ պետական կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ.

3) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն.

4) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի, «Հանրային ծառայության մասին», «Դատական ծառայության մասին», «Պետական կառավարչական հիմնարկների մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Գնումների մասին», «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն.

5) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

6) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

7) համակարգչային հմտություններ.

8) ժամանակի կառավարման հմտություններ և ճշտապահություն.

9) սեղմ ժամկետներում հանձնարարություններ կատարելու ունակություն.

10) միջանձնային հարաբերությունների ձևավորման ունակություններ.

11) անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտություններ և ունակություններ, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտություններ և ունակություններ (ցանկեր № 1-2):

VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Քարտուղարության ղեկավարի տեղակալը՝

1) Քարտուղարության ղեկավարին առաջարկություններ է ներկայացնում Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Աշխատակազմին ամրացված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները տնօրինելու վերաբերյալ.

2) Քարտուղարության ղեկավարի հանձնարարությամբ կազմակերպում է Աշխատակազմին ամրացված գույքի օգտագործումը և օտարումը.

3) Աշխատակազմի պահպանման կարիքների համար, ինչպես նաև դրան վերապահված բյուջետային ծրագրերի շրջանակներում համակարգում է գնման գործընթացի կազմակերպման աշխատանքները.

4) Քարտուղարության ղեկավարի հանձնարարությամբ համակարգում և Քարտուղարության ղեկավարին է ներկայացնում Աշխատակազմում պետական ծառայության կիսամյակային գործունեության գնահատման արդյունքները.

5) Քարտուղարության ղեկավարի հանձնարարությամբ համակարգում է Աշխատակազմի քարտուղարության ղեկավարի ստորագրմանը ներկայացվող իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները.

6) Քարտուղարության ղեկավարի հանձնարարությամբ ստորագրում է Աշխատակազմի անունից պատրաստվող գրությունները.

7) համակարգում է Պաշտպանի աշխատակազմի ընթացիկ և կապիտալ շինարարության գնման, ինչպես նաև նախագծանախահաշվային փաստաթղթերով համապատասխան գործառույթներ իրականացնելու գործընթացը.

8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպում է Աշխատակազմի աշխատողների աշխատանքային կարգապահության վերահսկողության աշխատանքների իրականացումը.

9) Քարտուղարության ղեկավարի հանձնարարությամբ յուրաքանչյուր տարվա կտրվածքով Պաշտպանի աշխատակազմում կազմակերպում է գույքագրման և գույքի հաշվառման, ինչպես նաև օգտագործման համար ոչ պիտանի գույքի, տրանսպորտային և տեխնիկական միջոցների օտարման աշխատանքների իրականացումը.

10) իրականացնում է քաղաքացիների ընդունելություն.

11) Քարտուղարության ղեկավարի հանձնարարությամբ ապահովում է համագործակցությունը պետական իշխանության մարմինների, միջազգային, հասարակական և այլ շահագրգիռ կազմակերպությունների և անձանց հետ.

12) իր լիազորությունների շրջանակներում այլ մարմիններից և պաշտոնատար անձանցից ստանում է անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր.

13) իր լիազորությունների շրջանակներում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդություններ, զեկուցագրեր և այլ գրություններ.

14) Քարտուղարության ղեկավարի գիտությամբ կամ իր լիազորությունների շրջանակներում կարող է հրավիրել խորհրդակցություններ՝ դրանց մասնակից դարձնելով պաշտոնատար անձանց, մասնագետների և փորձագետների.

15) Քարտուղարության ղեկավարի տեղակալն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):

VIII. ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

12. Քարտուղարության ղեկավարի տեղակալին շնորհվում է Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության 2-րդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան:

ՑԱՆԿ № 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ (ՊԱՐՏԱԴԻՐ) ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Աշխատանքի, կատարողականի գնահատում և կառավարում
2. Առաջնորդում և թիմի ստեղծում
3. Արդյունքների ապահովում
4. Խնդիրների լուծում
5. Հաղորդակցություն
6. Հաշվետվությունների մշակում և ներկայացում
7. Միջանձնային հարաբերություններ
8. Մտածողության ոճեր
9. Որոշումների կայացում
10. Ռազմավարական պլանավորում
11. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծում և կառավարում
12. Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային հմտություններ
13. Քաղաքականության մշակում և իրականացում

ՑԱՆԿ № 2

ՍՈՒՅՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Անձնակազմի կառավարում և զարգացում
2. Աշխատանքային պլանի մշակում
3. Արտակարգ իրավիճակների կառավարում
4. Բանակցությունների հմտություններ
5. Բողոքների բավարարում
6. Ելույթների հմտություններ
7. Ժամանակի կառավարում
8. Ծրագրերի մշակում և կառավարում
9. Կոնֆլիկտների կառավարում
10. Նպատակների սահմանում
11. Շահադրդում
12. Պատվիրակում
13. Ռեսուրսների բաշխում և կառավարում
14. Սթրեսի կառավարում
15. Փոփոխությունների կառավարում
16. Քաղաքացիների սպասարկում
17. Ֆինանսների կառավարում
18. Որոշումների և փաստաթղթերի նախապատրաստում
19. Ուսուցում գործողությունների միջոցով

Հավելված
Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպանի
2018 թվականի մայիսի 22-ի
թիվ 1 հրամանի

Պաշտոնի ծածկագիր ՄԻՊԱ 2.1.3

Պ Ա Շ Տ Ո Ն Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) միջազգային համագործակցության վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետի պաշտոնն ընդգրկվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության գլխավոր պաշտոնների խմբի 1-ին ենթախմբում:

2. Վարչության պետին օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Պաշտպանը:

II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Վարչության պետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Պաշտպանին և Աշխատակազմի քարտուղարության ղեկավարին (այսուհետ՝ Քարտուղարության ղեկավար) այնքանով, որքանով դա բխում է նրա լիազորություններից:

4. Վարչության պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են Վարչության աշխատողները:

5. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության գլխավոր մասնագետը, իսկ դրա անհնարինության դեպքում Պաշտպանի կողմից նշանակված այլ պետական ծառայող:

6. Վարչության պետը՝

1) կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է Վարչության ընթացիկ գործունեությունը.

2) կատարում է Պաշտպանի հանձնարարականները.

3) պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները, իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ վերազանցելու, ինչպես նաև Վարչության առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

III. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Վարչության պետը՝

1) լուծում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրներ և ընդունում որոշումներ.

2) Վարչության աշխատողներին տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ:

IV. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Վարչության պետը՝

1) Աշխատակազմի ներսում շփվում է Պաշտպանի, Քարտուղարության ղեկավարի, Քարտուղարության ղեկավարի տեղակալի, դեպարտամենտների ղեկավարների, Պաշտպանի խորհրդականների, օգնականների, Աշխատակազմի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների հետ.

2) Պաշտպանի հանձնարարությամբ Աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, բանակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով, հաշվետվություններով և այլն.

3) Պաշտպանի հանձնարարությամբ մասնակցում է պետական և այլ մարմինների նիստերին (խորհրդակցություններին):

V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Վարչության պետը՝

1) Պաշտպանի հանձնարարությամբ մասնակցում է Աշխատակազմի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.

2) բացահայտում, վերլուծում, գնահատում, ինչպես նաև ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ է տալիս Վարչության առջև դրված ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրներին:

VI. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Վարչության պետն ունի՝

1) բարձրագույն կրթություն.

2) պետական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն երեք տարվա պետական ծառայության ստաժ կամ պետական ծառայության առնվազն 2-րդ դասի

առաջատար ծառայողի դասային աստիճան կամ գիտական աստիճան կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

3) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն.

4) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի, «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին», «Իրավական ակտերի մասին» օրենքների, իր լիազորությունների հետ կապված գործող այլ օրենքների, իրավական ակտերի իմացություն.

5) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

6) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

7) ժամանակի կառավարման հմտություններ և ճշտապահություն.

8) սեղմ ժամկետներում հանձնարարություններ կատարելու ունակություն.

9) համակարգչային հմտություններ.

10) միջանձնային հարաբերությունների ձևավորման ունակություններ.

11) անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտություններ և ունակություններ, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտություններ և ունակություններ (ցանկեր № 1-2):

VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Վարչության պետը՝

1) ապահովում է Պաշտպանի և Աշխատակազմի փոխհարաբերությունները դիվանագիտական ներկայացուցչությունների, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության, օտարերկրյա պետությունների լիազոր մարմինների, միջազգային կազմակերպությունների և իրավապաշտպան հաստատությունների հետ.

2) ապահովում է օտարերկրյա պետություններում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտում առկա վիճակի վերաբերյալ ուսումնասիրությունների հավաքագրումը և համապատասխան առաջարկություններ է ներկայացնում Պաշտպանին.

3) ապահովում է Աշխատակազմի և միջազգային ու օտարերկրյա կազմակերպությունների միջև միջազգային ծրագրերի հետ կապված համագործակցության աշխատանքները.

4) ապահովում է միջազգային և օտարերկրյա պատվիրակությունների հանդիպմանն ուղղված կազմակերպական աշխատանքները (օրակարգի կազմում, դիմավորում, հանդիպումների նախօրոք երկկողմանի

համաձայնեցում, անցկացում և արարողակարգի ապահովում).

5) ապահովում է օտարերկրյա պետությունների մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտում օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, ուսումնասիրությունը.

6) ապահովում է Աշխատակազմի աշխատողների արտասահմանյան գործուղումների վերաբերյալ հաշվետվությունների հավաքագրումը.

7) աջակցում է www.pashtpan.am (www.ombuds.am) ինտերնետային էջում տեղադրվող նյութերի թարգմանության աշխատանքներին.

8) ապահովում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտում օտարերկրյա պետությունների լիազոր մարմինների, միջազգային կազմակերպությունների և իրավապաշտպան հաստատությունների համագործակցությանն ուղղված աշխատանքները.

9) ապահովում է Պաշտպանի տարեկան հաղորդման, հատուկ կամ արտահերթ զեկույցների համար նյութերի նախապատրաստումը և մասնակցում է դրանց մշակման աշխատանքներին.

10) ապահովում է առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, միջնորդագրերի, զեկուցագրերի և այլ գրությունների նախապատրաստման ու մշակման աշխատանքները.

11) Պաշտպանին է ներկայացնում Վարչության աշխատանքային ծրագրերը.

12) Պաշտպանի հանձնարարությամբ ստորագրում է Վարչության անունից պատրաստվող փաստաթղթերը.

13) Պաշտպանին առաջարկություններ է ներկայացնում Վարչության աշխատողներին գնահատելու, վերապատրաստելու, խրախուսելու կամ կարգապահական տույժի ենթարկելու, ինչպես նաև գործուղելու, արձակուրդ տրամադրելու վերաբերյալ.

14) Պաշտպանին առաջարկություն է ներկայացնում Վարչության աշխատողի բացակայության դեպքում նրան փոխարինելու մասին:

Վարչության պետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):

VIII. ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

12. Վարչության պետին շնորհվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան:

ՑԱՆԿ № 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ (ՊԱՐՏԱԴԻՐ) ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Աշխատանքային պլանի մշակում
2. Արդյունքների ապահովում
3. Թիմային աշխատանք
4. Հաղորդակցություն
5. Հաշվետվությունների մշակում և ներկայացում
6. Միջանձնային հարաբերություններ
7. Մտածողության ոճեր
8. Նպատակների սահմանում
9. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծում և կառավարում
10. Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային հմտություններ

ՑԱՆԿ № 2

ՍՈՒՅՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Աշխատանքի, կատարողականի գնահատում և կառավարում
2. Առաջնորդման ոճեր
3. Բանակցությունների հմտություններ
4. Բողոքների բավարարում
5. Ելույթների հմտություններ
6. Ժամանակի կառավարում
7. Ուսուցում գործողությունների միջոցով
8. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
9. Խնդիրների լուծում
10. Ծրագրերի մշակում և կառավարում
11. Կոնֆլիկտների կառավարում
12. Շահադրդում
13. Որոշումների կայացում
14. Որոշումների և փաստաթղթերի նախապատրաստում
15. Պատվիրակում
16. Ռեսուրսների բաշխում և կառավարում
17. Սթրեսի կառավարում
18. Փոփոխությունների կառավարում
19. Քաղաքականության մշակում և իրականացում

Հավելված
Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպանի
2018 թվականի մայիսի 24-ի
թիվ 9-Ն հրամանի

Պաշտոնի ծածկագիր ՄԻՊԱ 2.1-4

Պ Ա Շ Տ Ո Ն Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) քաղաքացիական, սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանության դեպարտամենտի, սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանության (այսուհետ՝ Դեպարտամենտ) սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանության վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետի պաշտոնն ընդգրկվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության գլխավոր պաշտոնների խմբի 1-ին ենթախմբում:

2. Վարչության պետին օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Պաշտպանը:

II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Վարչության պետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Պաշտպանին, Դեպարտամենտի ղեկավարին և Աշխատակազմի քարտուղարության ղեկավարին (այսուհետ՝ Քարտուղարության ղեկավար) այնքանով, որքանով դա բխում է նրա լիազորություններից:

4. Վարչության պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են Վարչության աշխատողները:

5. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալը, իսկ դրա անհնարինության դեպքում Պաշտպանի կողմից նշանակված այլ պետական ծառայող:

6. Վարչության պետը՝

1) կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է Վարչության ընթացիկ գործունեությունը.

2) կատարում է Պաշտպանի և Դեպարտամենտի ղեկավարի հանձնարարականները.

3) պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները, իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ վերազանցելու, ինչպես նաև Վարչության առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

III. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Վարչության պետը՝

1) լուծում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրներ և ընդունում որոշումներ.

2) Վարչության աշխատողներին տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ:

IV. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Վարչության պետը՝

1) Աշխատակազմի ներսում շփվում է Պաշտպանի, Քարտուղարության ղեկավարի, Քարտուղարության ղեկավարի տեղակալի, դեպարտամենտների ղեկավարների, Պաշտպանի խորհրդականների, օգնականների, Աշխատակազմի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների հետ.

2) Պաշտպանի կամ Դեպարտամենտի ղեկավարի հանձնարարությամբ Աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, բանակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով, հաշվետվություններով և այլն.

3) Պաշտպանի կամ Դեպարտամենտի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է պետական և այլ մարմինների նիստերին (խորհրդակցություններին):

V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Վարչության պետը՝

1) Պաշտպանի կամ Դեպարտամենտի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է Աշխատակազմի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.

2) բացահայտում, վերլուծում, գնահատում, ինչպես նաև ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ է տալիս Վարչության առջև դրված ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրներին:

VI. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Վարչության պետն ունի՝

1) բարձրագույն կրթություն՝ իրավագիտություն մասնագիտությամբ.

2) պետական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն երեք տարվա պետական ծառայության ստաժ կամ պետական ծառայության առնվազն 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ գիտական աստիճան կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

3) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն.

4) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ, ընտանեկան, աշխատանքային և քաղաքացիական օրենսգրքերի, «Իրավական ակտերի մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին», «Պետական կենսաթոշակների մասին», «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, իր լիազորությունների հետ կապված գործող այլ օրենքների, իրավական ակտերի իմացություն.

5) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

6) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

7) ժամանակի կառավարման հմտություններ և ճշտապահություն.

8) սեղմ ժամկետներում հանձնարարություններ կատարելու ունակություն.

9) համակարգչային հմտություններ.

10) միջանձնային հարաբերությունների ձևավորման ունակություններ.

11) անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտություններ և ունակություններ, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտություններ և ունակություններ (ցանկեր № 1-2):

VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Վարչության պետը՝

1) ապահովում է Վարչությանը մակագրված դիմում-բողոքների ուսումնասիրության և քննարկման պատշաճ ընթացքը.

2) Պաշտպանի կամ Դեպարտամենտի ղեկավարի հանձնարարությամբ իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ տեղեկությունների

հիման վրա կազմակերպում է արագ արձագանքման այց և մասնակցում դրան.

3) պլանավորում և կազմակերպում է ըստ անհրաժեշտության այցեր պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններ կամ կազմակերպություններ.

4) այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից և կազմակերպություններից ստանում է Վարչության առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկություններ, պարզաբանումներ, նյութեր և փաստաթղթեր.

5) իրականացնում է սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանության ոլորտի ներպետական օրենսդրության, միջազգային փորձի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային վճիռների և այլ միջազգային փաստաթղթերի և հանձնարարականների ուսումնասիրում, պատրաստում զեկույցներ և տեղեկանքներ.

6) իրականացնում է սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանությանը վերաբերող ներպետական իրավական ակտերում օրենսդրական խնդիրների (բացերի) վերհանում և վերլուծություն, անհրաժեշտության դեպքում նախապատրաստում է համապատասխան պետական մարմիններին ուղղված գրությունների (առաջարկների) նախագծեր.

7) իրականացնում է քաղաքացիների ընդունելություն.

8) քաղաքացիներին տրամադրում է իրավաբանական խորհրդատվություն՝ իրենց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության իրավական միջոցների և ընթացակարգերի վերաբերյալ.

9) ապահովում է Վարչության գործառույթներին առնչվող «թեժ գծի» կամ այլ հեռախոսահամարով ստացված տեղեկությունների հավաքագրումը, վերլուծումը և հանձնումն Աշխատակազմի քարտուղարության արագ արձագանքման և դիմումների ընդունման վարչությանը.

10) ապահովում է Պաշտպանի տարեկան հաղորդման կամ արտահերթ հրապարակային զեկույցների համար նյութերի նախապատրաստումը և մասնակցում է տարեկան հաղորդման և արտահերթ զեկույցների կազմման աշխատանքներին.

11) անհրաժեշտության դեպքում ապահովում է Պաշտպանի՝ սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանությանն առնչվող հատուկ հրապարակային զեկույցների համար նյութերի նախապատրաստումը և մասնակցում է դրանց կազմման աշխատանքներին.

12) ապահովում է առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, միջնորդագրերի, զեկուցագրերի և այլ գրությունների կազմման աշխատանքները.

13) Դեպարտամենտի ղեկավարին է ներկայացնում Վարչության աշխատանքային ծրագրերը.

14) Պաշտպանի կամ Դեպարտամենտի ղեկավարի հանձնարարությամբ ստորագրում է Վարչության անունից պատրաստվող փաստաթղթերը.

15) Դեպարտամենտի ղեկավարին առաջարկություններ է ներկայացնում Վարչության աշխատողներին գնահատելու, վերապատրաստելու, խրախուսելու կամ կարգապահական տույժի ենթարկելու, ինչպես նաև գործուղելու, արձակուրդ տրամադրելու վերաբերյալ.

16) Դեպարտամենտի ղեկավարին առաջարկություն է ներկայացնում Վարչության աշխատողի բացակայության դեպքում նրան փոխարինելու մասին.

17) կատարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Պաշտպանի լիազորությունների հիման վրա տրված Պաշտպանի հանձնարարությունները:

Սույն կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով նախատեսված գործառույթներն իրականացվում են Պաշտպանի որոշման հիման վրա:

Վարչության պետն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):

VIII. ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

12. Վարչության պետին շնորհվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան:

ՑԱՆԿ № 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ (ՊԱՐՏԱԴԻՐ) ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Աշխատանքային պլանի մշակում
2. Արդյունքների ապահովում
3. Թիմային աշխատանք
4. Հաղորդակցություն
5. Հաշվետվությունների մշակում և ներկայացում
6. Միջանձնային հարաբերություններ
7. Մտածողության ոճեր
8. Նպատակների սահմանում
9. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծում և կառավարում
10. Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային հմտություններ

ՑԱՆԿ № 2

ՍՈՒՅՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Աշխատանքի, կատարողականի գնահատում և կառավարում
2. Առաջնորդման ոճեր
3. Բանակցությունների հմտություններ
4. Բողոքների բավարարում
5. Ելույթների հմտություններ
6. Ժամանակի կառավարում
7. Ուսուցում գործողությունների միջոցով
8. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
9. Խնդիրների լուծում
10. Ծրագրերի մշակում և կառավարում
11. Կոնֆլիկտների կառավարում
12. Շահադրդում
13. Որոշումների կայացում
14. Որոշումների և փաստաթղթերի նախապատրաստում
15. Պատվիրակում
16. Ռեսուրսների բաշխում և կառավարում
17. Սթրեսի կառավարում
18. Փոփոխությունների կառավարում
19. Քաղաքականության մշակում և իրականացում

Հավելված
Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպանի
2018 թվականի մայիսի 24-ի
թիվ 24 հրամանի

Պաշտոնի ծածկագիր ՄԻՊԱ-2.1-5

ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՎ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի (այսուհետ՝ Դեպարտամենտ) քրեական արդարադատության ոլորտում իրավունքների պաշտպանության վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետի պաշտոնն ընդգրկվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության գլխավոր պաշտոնների խմբի 1-ին ենթախմբում:

2. Վարչության պետին օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Պաշտպանը:

II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Վարչության պետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Պաշտպանին, Դեպարտամենտի ղեկավարին և Աշխատակազմի քարտուղարության ղեկավարին (այսուհետ՝ Քարտուղարության ղեկավար) այնքանով, որքանով դա բխում է նրա լիազորություններից:

4. Վարչության պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են Վարչության աշխատողները:

5. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալը, իսկ դրա անհնարինության դեպքում Պաշտպանի կողմից նշանակված այլ պետական ծառայող:

6. Վարչության պետը՝

1) կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է Վարչության ընթացիկ գործունեությունը.

2) կատարում է Պաշտպանի և Դեպարտամենտի ղեկավարի հանձնարարականները.

3) պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները, իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ վերազանցելու, ինչպես նաև Վարչության առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

III. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Վարչության պետը՝

1) լուծում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրներ և ընդունում որոշումներ.

2) Վարչության աշխատողներին տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ:

IV. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Վարչության պետը՝

1) Աշխատակազմի ներսում շփվում է Պաշտպանի, Քարտուղարության ղեկավարի, Քարտուղարության ղեկավարի տեղակալի, դեպարտամենտների ղեկավարների, Պաշտպանի խորհրդականների, օգնականների, Աշխատակազմի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների հետ.

2) Պաշտպանի կամ Դեպարտամենտի ղեկավարի հանձնարարությամբ Աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, բանակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով, հաշվետվություններով և այլն.

3) Պաշտպանի կամ Դեպարտամենտի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է պետական և այլ մարմինների նիստերին (խորհրդակցություններին):

V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Վարչության պետը՝

1) Պաշտպանի կամ Դեպարտամենտի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է Աշխատակազմի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.

2) բացահայտում, վերլուծում, գնահատում, ինչպես նաև ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ է

տալիս Վարչության առջև դրված ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրներին:

VI. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Վարչության պետն ունի՝

1) բարձրագույն կրթություն՝ իրավագիտություն մասնագիտությամբ.

2) պետական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն երեք տարվա պետական ծառայության ստաժ կամ պետական ծառայության առնվազն 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ գիտական աստիճան կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

3) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն.

4) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի, Հայաստանի Հանրապետության քրեական, քրեական դատավարության և քրեակատարողական օրենսգրքերի, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին», «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշման, իր լիազորությունների հետ կապված գործող այլ օրենքների, իրավական ակտերի իմացություն.

5) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

6) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

7) ժամանակի կառավարման հմտություններ և ճշտապահություն.

8) սեղմ ժամկետներում հանձնարարություններ կատարելու ունակություն.

9) համակարգչային հմտություններ.

10) միջանձնային հարաբերությունների ձևավորման ունակություններ.

11) անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտություններ և ունակություններ, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտություններ և ունակություններ (ցանկեր № 1-2):

VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Վարչության պետը՝

1) ապահովում է Վարչությանը մակագրված դիմում-բողոքների ուսումնասիրության և քննարկման պատշաճ ընթացքը.

2) Պաշտպանի կամ Դեպարտամենտի ղեկավարի հանձնարարությամբ իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա կազմակերպում է արագ արձագանքումներ և մասնակցում դրանց.

3) Պաշտպանի կամ Դեպարտամենտի ղեկավարի հանձնարարությամբ պլանավորում և կազմակերպում է այցեր պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններ կամ կազմակերպություններ, ներառյալ՝ ազատությունից զրկման վայրեր.

4) Պաշտպանի կամ Դեպարտամենտի ղեկավարի հանձնարարությամբ այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանում է Վարչության առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկություններ, պարզաբանումներ, նյութեր և փաստաթղթեր, այդ նպատակով տալիս է հանձնարարություններ.

5) իրականացնում է քաղաքացիների ընդունելություն.

6) քաղաքացիներին տրամադրում է իրավաբանական խորհրդատվություն՝ իրենց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության իրավական միջոցների և ընթացակարգերի վերաբերյալ.

7) ապահովում է Վարչության գործառույթներին առնչվող «թեժ գծի» կամ այլ հեռախոսահամարով ստացված տեղեկությունների հավաքագրումը, վերլուծումը և հանձնումն Աշխատակազմի քարտուղարության արագ արձագանքման և դիմումների ընդունման վարչությանը.

8) ապահովում է Պաշտպանի տարեկան հաղորդման, հատուկ կամ արտահերթ զեկույցների համար նյութերի նախապատրաստումը և մասնակցում է դրանց մշակման աշխատանքներին.

9) ապահովում է առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, միջնորդագրերի, զեկուցագրերի և այլ գրությունների նախապատրաստման ու մշակման աշխատանքները.

10) Դեպարտամենտի ղեկավարին է ներկայացնում Վարչության աշխատանքային ծրագրերը.

11) Պաշտպանի կամ Դեպարտամենտի ղեկավարի հանձնարարությամբ ստորագրում է Վարչության անունից պատրաստվող փաստաթղթերը.

12) Դեպարտամենտի ղեկավարին առաջարկություններ է ներկայացնում Վարչության աշխատողներին գնահատելու, վերապատրաստելու, խրախուսելու կամ կարգապահական տույժի ենթարկելու, ինչպես նաև գործուղելու, արձակուրդ տրամադրելու վերաբերյալ.

13) Դեպարտամենտի ղեկավարին առաջարկություն է ներկայացնում Վարչության աշխատողի բացակայության դեպքում նրան փոխարինելու մասին.

14) կատարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Պաշտպանի լիազորությունների հիման վրա տրված Պաշտպանի հանձնարարությունները:

Սույն կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով նախատեսված գործառույթներն իրականացվում են Պաշտպանի որոշման հիման վրա:

Վարչության պետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):

VIII. ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

12. Վարչության պետին շնորհվում է Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան:

ՑԱՆԿ № 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՎ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ (ՊԱՐՏԱԴԻՐ) ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Աշխատանքային պլանի մշակում
2. Արդյունքների ապահովում
3. Թիմային աշխատանք
4. Հաղորդակցություն
5. Հաշվետվությունների մշակում և ներկայացում
6. Միջանձնային հարաբերություններ
7. Մտածողության ոճեր
8. Նպատակների սահմանում
9. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծում և կառավարում
10. Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային հմտություններ

ՑԱՆԿ № 2

ՍՈՒՅՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Աշխատանքի, կատարողականի գնահատում և կառավարում
2. Առաջնորդման ոճեր
3. Բանակցությունների հմտություններ
4. Բողոքների բավարարում
5. Ելույթների հմտություններ
6. Ժամանակի կառավարում
7. Ուսուցում գործողությունների միջոցով
8. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
9. Խնդիրների լուծում
10. Ծրագրերի մշակում և կառավարում
11. Կոնֆլիկտների կառավարում
12. Շահադրդում
13. Որոշումների կայացում
14. Որոշումների և փաստաթղթերի նախապատրաստում
15. Պատվիրակում
16. Ռեսուրսների բաշխում և կառավարում
17. Սթրեսի կառավարում
18. Փոփոխությունների կառավարում
19. Քաղաքականության մշակում և իրականացում

Հավելված
Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպանի
2018 թվականի մայիսի 2-ի
թիվ 6 - Ե հրամանի

Պաշտոնի ծածկագիր ՄԻՊԱ-2.1-6

ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) հետազոտական և կրթական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) ղեկավարի պաշտոնն ընդգրկվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության գլխավոր պաշտոնների խմբի 1-ին ենթախմբում:

2. Կենտրոնի ղեկավարին օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Պաշտպանը:

II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Կենտրոնի ղեկավարն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Պաշտպանին և Աշխատակազմի քարտուղարության ղեկավարին (այսուհետ՝ Քարտուղարության ղեկավար) այնքանով, որքանով դա բխում է նրա լիազորություններից:

4. Կենտրոնի ղեկավարին անմիջականորեն ենթակա և հաշվետու են Կենտրոնի աշխատողները:

5. Կենտրոնի ղեկավարի բացակայության դեպքում նրան փոխարինում է Կենտրոնի ղեկավարի տեղակալը, իսկ դրա անհնարինության դեպքում Պաշտպանի կողմից նշանակված այլ պետական ծառայող:

6. Կենտրոնի ղեկավարը՝

1) կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է Կենտրոնի ընթացիկ գործունեությունը.

2) կատարում է Պաշտպանի հանձնարարականները.

3) պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները, իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ վերազանցելու, ինչպես նաև Կենտրոնի առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

III. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Կենտրոնի ղեկավարը՝

1) լուծում է Կենտրոնի առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրներ և ընդունում որոշումներ.

2) Կենտրոնի աշխատողներին տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ:

IV. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Կենտրոնի ղեկավարը՝

1) Աշխատակազմի ներսում շփվում է Պաշտպանի, Քարտուղարության ղեկավարի, Քարտուղարության ղեկավարի տեղակալի, դեպարտամենտների ղեկավարների, Պաշտպանի խորհրդականների, օգնականների, Աշխատակազմի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների հետ.

2) Պաշտպանի հանձնարարությամբ Աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, բանակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով, հաշվետվություններով և այլն.

3) Պաշտպանի հանձնարարությամբ մասնակցում է պետական և այլ մարմինների նիստերին (խորհրդակցություններին):

V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Կենտրոնի ղեկավարը՝

1) Պաշտպանի հանձնարարությամբ մասնակցում է Աշխատակազմի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.

2) բացահայտում, վերլուծում, գնահատում, ինչպես նաև ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ է տալիս Կենտրոնի առջև դրված ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրներին:

VI. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Կենտրոնի ղեկավարն ունի՝

1) բարձրագույն կրթություն՝ իրավագիտություն մասնագիտությամբ.

2) պետական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն երեք տարվա պետական ծառայության ստաժ կամ պետական ծառայության առնվազն 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ գիտական

աստիճան կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

3) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն.

4) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի, իր լիազորությունների հետ կապված գործող այլ օրենքների, իրավական ակտերի իմացություն.

5) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

6) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

7) ժամանակի կառավարման հմտություններ և ճշտապահություն.

8) սեղմ ժամկետներում հանձնարարություններ կատարելու ունակություն.

9) համակարգչային հմտություններ.

10) միջանձնային հարաբերությունների ձևավորման ունակություններ.

11) անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտություններ և ունակություններ, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտություններ և ունակություններ (ցանկեր № 1-2):

VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Կենտրոնի ղեկավարը՝

1) համակարգում է Կենտրոնի աշխատանքները, սահմանում վերջնաժամկետներ.

2) Պաշտպանին ներկայացնում է Կենտրոնի աշխատանքային ծրագրերը.

3) համակարգում է Պաշտպանին Կարծիքի ներկայացված, ինչպես նաև հանրային քննարկման ներկայացված իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրության աշխատանքները, անհրաժեշտության դեպքում վերլուծության արդյունքների հիման վրա պատրաստում տեղեկանքներ.

4) համակարգում է օրենսդրական խնդիրների (բացերի) վերհանման և վերլուծության աշխատանքները, անհրաժեշտության դեպքում նախապատրաստում է համապատասխան պետական մարմիններին ուղղված գրությունների/առաջարկների նախագծեր.

5) համակարգում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական և վարչական դատարանների դիմումների կազմման աշխատանքները, Պաշտպանի հանձնարարությամբ դատարանում ապահովում է ներկայացուցչություն.

6) իրականացնում է քաղաքացիների ընդունելություն.

7) քաղաքացիներին տրամադրում է իրավաբանական խորհրդատվություն՝ իրենց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ

պաշտպանության իրավական միջոցների և ընթացակարգերի վերաբերյալ.

8) մասնակցում է հասարակական կազմակերպությունների, պետական մարմինների ներկայացուցիչների, միջազգային փորձագետների և այլ անձանց հետ հանդիպումներին և քննարկումներին.

9) համակարգում է Պաշտպանի տարեկան հաղորդման նախապատրաստական աշխատանքները, ինչպես նաև մասնակցում է հատուկ կամ արտահերթ զեկույցների նախապատրաստման և դրանց կազմման աշխատանքներին.

10) Պաշտպանի հանձնարարությամբ ապահովում է ներկայացուցչություն պետական և միջազգային կազմակերպություններում և աշխատանքային խմբերում.

11) ստորագրում է Կենտրոնի անունից պատրաստվող փաստաթղթերը.

12) նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

13) համակարգում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը վերաբերող գիտատեսական և կիրառական նյութերի, ձեռնարկների, տեղեկագրերի, մենագրությունների, ժողովածուների և այլ տեղեկատվական-վերլուծական աշխատությունների մշակման, ինչպես նաև հրատարակման աշխատանքները.

14) Պաշտպանին առաջարկություններ է ներկայացնում իր անմիջական ենթակայության տակ գտնվող աշխատողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատելու, վերապատրաստելու, խրախուսելու կամ կարգապահական տույժի ենթարկելու, ինչպես նաև գործուղելու, արձակուրդ տրամադրելու վերաբերյալ.

15) համապատասխան առաջարկություններ է ներկայացնում Կենտրոնի աշխատողների բացակայության դեպքում նրանց փոխարինելու մասին.

16) ծանոթանում է իր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերին, ստանում դրանց պատճենները.

17) պատասխանատվություն է կրում ստորաբաժանման գործառույթների արդյունավետ իրականացման համար.

18) կատարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Պաշտպանի լիազորությունների հիման վրա տրված Պաշտպանի հանձնարարությունները:

Կենտրոնի ղեկավարն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):

VIII. ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

12. Կենտրոնի ղեկավարին շնորհվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան:

ՑԱՆԿ № 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ (ՊԱՐՏԱԴԻՐ) ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Աշխատանքային պլանի մշակում
2. Արդյունքների ապահովում
3. Թիմային աշխատանք
4. Հաղորդակցություն
5. Հաշվետվությունների մշակում և ներկայացում
6. Միջանձնային հարաբերություններ
7. Մտածողության ոճեր
8. Նպատակների սահմանում
9. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծում և կառավարում
10. Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային հմտություններ

ՑԱՆԿ № 2

ՍՈՒՅՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Աշխատանքի, կատարողականի գնահատում և կառավարում
2. Առաջնորդման ոճեր
3. Բանակցությունների հմտություններ
4. Բողոքների բավարարում
5. Ելույթների հմտություններ
6. Ժամանակի կառավարում
7. Ուսուցում գործողությունների միջոցով
8. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
9. Խնդիրների լուծում
10. Ծրագրերի մշակում և կառավարում
11. Կոնֆլիկտների կառավարում
12. Շահադրդում
13. Որոշումների կայացում
14. Որոշումների և փաստաթղթերի նախագծեր նախապատրաստում
15. Պատվիրակում
16. Ռեսուրսների բաշխում և կառավարում
17. Սթրեսի կառավարում
18. Փոփոխությունների կառավարում
19. Քաղաքականության մշակում և իրականացում

Հավելված
Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպանի
2018 թվականի մայիսի 24-ի
թիվ 2-Լ հրամանի

Պաշտոնի ծածկագիր ՄԻՊԱ-2.1-7

Պ Ա Շ Տ Ո Ն Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԵՎ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) քարտուղարության արագ արձագանքման և դիմումների ընդունման վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետի պաշտոնն ընդգրկվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության գլխավոր պաշտոնների խմբի 1-ին ենթախմբում:

2. Վարչության պետին օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Պաշտպանը:

II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Վարչության պետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Պաշտպանին և Աշխատակազմի քարտուղարության ղեկավարին (այսուհետ՝ Քարտուղարության ղեկավար):

4. Վարչության պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են Վարչության աշխատողները:

5. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալը, իսկ դրա անհնարինության դեպքում Պաշտպանի կողմից նշանակված այլ պետական ծառայող:

6. Վարչության պետը՝

1) կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է Վարչության ընթացիկ գործունեությունը.

2) կատարում է Քարտուղարության ղեկավարի հանձնարարականները.

3) պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները, իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ վերազանցելու, ինչպես նաև Վարչության առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

III. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Վարչության պետը՝

1) լուծում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրներ և ընդունում որոշումներ.

2) Վարչության աշխատողներին տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ:

IV. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Վարչության պետը՝

1) Աշխատակազմի ներսում շփվում է Պաշտպանի, Քարտուղարության ղեկավարի, Քարտուղարության ղեկավարի տեղակալի, դեպարտամենտների ղեկավարների, Պաշտպանի խորհրդականների, օգնականների, Աշխատակազմի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների հետ.

2) Պաշտպանի կամ Քարտուղարության ղեկավարի հանձնարարությամբ Աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, բանակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով, հաշվետվություններով և այլն.

3) Պաշտպանի կամ Քարտուղարության ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է պետական և այլ մարմինների նիստերին (խորհրդակցություններին):

V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Վարչության պետը՝

1) Պաշտպանի կամ Քարտուղարության ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է Աշխատակազմի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.

2) բացահայտում, վերլուծում, գնահատում, ինչպես նաև ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ է տալիս Վարչության առջև դրված ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրներին:

VI. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Վարչության պետն ունի՝

1) բարձրագույն կրթություն՝ իրավագիտություն մասնագիտությամբ.

2) պետական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն երեք տարվա պետական ծառայության ստաժ կամ պետական ծառայության առնվազն 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ գիտական

աստիճան կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

3) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն.

4) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի, «Փոստային կապի մասին», «Պետական սուրհանդակային կապի մասին», «Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, իր լիազորությունների հետ կապված գործող այլ օրենքների, իրավական ակտերի իմացություն.

5) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

6) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

7) ժամանակի կառավարման հմտություններ և ճշտապահություն.

8) սեղմ ժամկետներում հանձնարարություններ կատարելու ունակություն.

9) համակարգչային հմտություններ.

10) միջանձնային հարաբերությունների ձևավորման ունակություններ.

11) անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտություններ և ունակություններ, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտություններ և ունակություններ (ցանկեր № 1-2):

VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Վարչության պետը՝

1) ապահովում է փաստաթղթաշրջանառության, այդ թվում՝ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության արդյունավետ կազմակերպման աշխատանքները.

2) ապահովում է Աշխատակազմի «թեժ գծի» շուրջօրյա աշխատանքը.

3) ապահովում է «թեժ գծի» հեռախոսահամարով ստացված՝ մարդու իրավունքների և ազատությունների խախտումների վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումը, վերլուծումը և վիճակագրության վարումը.

4) ապահովում է «թեժ գծով» կամ այլ հեռախոսահամարներով ստացված՝ իրավաբանական խորհրդատվություն և արագ արձագանքում պահանջող հեռախոսազանգերի վերահասցեագրումը համապատասխան ստորաբաժանումներին.

5) Պաշտպանին դիմելու ընթացակարգերի, Պաշտպանի լիազորությունների վերաբերյալ քաղաքացիներին տրամադրում է խորհրդատվություն, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ իրավաբանական խորհրդատվություն.

6) ապահովում է Աշխատակազմում ստացված ամբողջ թղթակցության՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով ընդունման, հաշվառման, էլեկտրոնային կառավարման «Mulberry» համակարգով համակարգչային և

պատկերամուտով մուտքագրման, համապատասխան մատյանների վարման աշխատանքները, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ձեռնարկում է էլեկտրոնային կառավարման «Mulberry» համակարգի անվտանգության ապահովման լրացուցիչ միջոցներ.

7) Պաշտպանի կամ Քարտուղարության ղեկավարի հանձնարարությամբ կատարում կամ կազմակերպում է քաղաքացիների ընդունելություն.

8) իրականացնում է Պաշտպանին հասցեագրված բողոքների ընդունման և հաշվառման, դրանց ժամկետների պահպանման հետ կապված աշխատանքները.

9) հետևում է գրանցված փաստաթղթերի կատարման ժամկետներին և այդ մասին պարբերաբար ներկայացնում տեղեկատվություն Պաշտպանին և Քարտուղարության ղեկավարին.

10) ապահովում է ելից փաստաթղթերի էլեկտրոնային և թղթային առաքումն էլեկտրոնային կառավարման «Mulberry» համակարգի, փոստի և սուրհանդակային ծառայության միջոցով.

11) համակարգում է Աշխատակազմում վիճակագրական աշխատանքների իրականացումը.

12) ապահովում է վիճակագրական տվյալների ամսական, եռամսյակային, կիսամյակային և տարեկան վիճակագրական ցուցանիշների հավաքագրումը.

13) ապահովում է Պաշտպանի տարեկան հաղորդման, հատուկ կամ արտահերթ զեկույցների համար նյութերի տրամադրումը և մասնակցում է դրանց կազմման աշխատանքներին.

14) օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպում է Աշխատակազմի արխիվային փաստաթղթերի հաշվառման, պահպանման, վարման և արխիվ փոխանցելու հետ կապված աշխատանքները.

15) Պաշտպանի հանձնարարությամբ այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից և կազմակերպություններից ստանում է Վարչության առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկություններ, նյութեր և փաստաթղթեր.

16) ապահովում է առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, միջնորդագրերի, զեկուցագրերի և այլ գրությունների կազմման աշխատանքները.

17) կազմակերպում է Վարչության աշխատանքները, իր իրավասության շրջանակներում տալիս է հանձնարարականներ Վարչության աշխատողներին՝ վերահսկելով դրանց ժամանակին և պատշաճ որակով կատարումը.

18) Պաշտպանին, Քարտուղարության ղեկավարին առաջարկություններ է ներկայացնում իր անմիջական ենթակայության տակ գտնվող աշխատողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատելու, վերապատրաստելու, խրախուսելու կամ կարգապահական տույժի ենթարկելու, ինչպես նաև գործուղելու, արձակուրդ տրամադրելու վերաբերյալ.

19) համապատասխան առաջարկություններ է ներկայացնում Վարչության աշխատողների բացակայության դեպքում նրանց փոխարինելու մասին.

20) Պաշտպանին և Քարտուղարության ղեկավարին է ներկայացնում Վարչության աշխատանքային ծրագրերը.

21) ստորագրում է Վարչության անունից պատրաստվող փաստաթղթերը.

22) Վարչության լիազորությունների շրջանակներում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ:

Վարչության պետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):

VIII. ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

12. Վարչության պետին շնորհվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան:

ՑԱՆԿ № 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԵՎ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ (ՊԱՐՏԱԴԻՐ) ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Աշխատանքային պլանի մշակում
2. Արդյունքների ապահովում
3. Թիմային աշխատանք
4. Հաղորդակցություն
5. Հաշվետվությունների մշակում և ներկայացում
6. Միջանձնային հարաբերություններ
7. Մտածողության ոճեր
8. Նպատակների սահմանում
9. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծում և կառավարում
10. Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային հմտություններ

ՑԱՆԿ № 2

ՍՈՒՅՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Աշխատանքի, կատարողականի գնահատում և կառավարում
2. Առաջնորդման ոճեր
3. Բանակցությունների հմտություններ
4. Բողոքների բավարարում
5. Ելույթների հմտություններ
6. Ժամանակի կառավարում
7. Ուսուցում գործողությունների միջոցով
8. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
9. Խնդիրների լուծում
10. Ծրագրերի մշակում և կառավարում
11. Կոնֆլիկտների կառավարում
12. Շահադրդում
13. Որոշումների կայացում
14. Որոշումների և փաստաթղթերի նախապատրաստում
15. Պատվիրակում
16. Ռեսուրսների բաշխում և կառավարում
17. Սթրեսի կառավարում
18. Փոփոխությունների կառավարում
19. Քաղաքականության մշակում և իրականացում

Հավելված
Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպանի
2018 թվականի մայիսի 04-ի
թիվ 04-Լ հրամանի

Պաշտոնի ծածկագիր ՄԻՊԱ-2.1-8

ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ՖԻՆԱՆՍԻՍՏ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) քարտուղարության (այսուհետ՝ Քարտուղարություն) ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետի պաշտոնն ընդգրկվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության գլխավոր պաշտոնների խմբի 1-ին ենթախմբում:

2. Վարչության պետին օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Պաշտպանը:

II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Վարչության պետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Պաշտպանին և Քարտուղարության ղեկավարին (այսուհետ՝ Քարտուղարության ղեկավար):

4. Վարչության պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են Վարչության աշխատողները:

5. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալը-գլխավոր հաշվապահը, իսկ դրա անհնարինության դեպքում Պաշտպանի կողմից նշանակված այլ պետական ծառայող:

6. Վարչության պետը՝

1) կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է Վարչության ընթացիկ գործունեությունը.

2) կատարում է Քարտուղարության ղեկավարի հանձնարարականները.

3) պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները, իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ վերազանցելու, ինչպես նաև Վարչության առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

III. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Վարչության պետը՝

1) լուծում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրներ և ընդունում որոշումներ.

2) Վարչության աշխատողներին տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ:

IV. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Վարչության պետը՝

1) Աշխատակազմի ներսում շփվում է Պաշտպանի, Քարտուղարության ղեկավարի, Քարտուղարության ղեկավարի տեղակալի, դեպարտամենտների ղեկավարների, Պաշտպանի խորհրդականների, օգնականների, Աշխատակազմի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների հետ.

2) Պաշտպանի կամ Քարտուղարության ղեկավարի հանձնարարությամբ Աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, բանակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով, հաշվետվություններով և այլն.

3) Պաշտպանի կամ Քարտուղարության ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է պետական և այլ մարմինների նիստերին (խորհրդակցություններին):

V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Վարչության պետը՝

1) Պաշտպանի կամ Քարտուղարության ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է Աշխատակազմի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.

2) բացահայտում, վերլուծում և գնահատում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ կամ ապահովում այդ աշխատանքների կատարումը:

VI. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Վարչության պետն ունի՝

1) բարձրագույն կրթություն՝ տնտեսագիտություն մասնագիտությամբ.

2) պետական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն երեք տարվա պետական ծառայության ստաժ կամ պետական ծառայության առնվազն 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ գիտական աստիճան կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

3) «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված հանրային հատվածի հաշվապահի որակավորում.

4) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն.

5) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի, «Գնումների մասին», «Բյուջետային համակարգի մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, իր լիազորությունների հետ կապված գործող այլ օրենքների, իրավական ակտերի իմացություն.

6) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

7) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

8) ժամանակի կառավարման հմտություններ և ճշտապահություն.

9) սեղմ ժամկետներում հանձնարարություններ կատարելու ունակություն.

10) համակարգչային հմտություններ.

11) միջանձնային հարաբերությունների ձևավորման ունակություններ.

12) անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտություններ և ունակություններ, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտություններ և ունակություններ (ցանկեր № 1-2):

VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Վարչության պետը՝

1) իրականացնում է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի, «Գնումների մասին», «Բյուջետային համակարգի մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված գործառույթներ.

2) իրականացնում է Աշխատակազմում ֆինանսաբյուջետային գործընթացի ապահովմանն ուղղված կանոնակարգված գործունեություն.

3) Աշխատակազմի հիմնական ռազմավարական ծրագրերի շրջանակներում իրականացնում է միջնաժամկետ ծախսային ծրագրերի և առաջիկա տարվա բյուջեի նախագծի կազմման և մշակման աշխատանքները.

4) Պաշտպանի հաստատմանն է ներկայացնում բյուջետային ծրագրերի ծախսային նախահաշիվները.

5) կազմակերպում է Աշխատակազմի հաշվապահական հաշվառման վարումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումն ու ներկայացումը համապատասխան մարմիններին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում.

6) կազմակերպում է Աշխատակազմի ակտիվների և պարտավորությունների հաշվառման աշխատանքները, միջոցներ է ձեռնարկում Աշխատակազմին հատկացված դրամական միջոցների արդյունավետ օգտագործման ուղղությամբ.

7) կազմակերպում է սոցիալական փաթեթի հատկացման գործընթացի հետ կապված աշխատանքները.

8) կազմակերպում է գնումների պլանավորումը և գնումների գործընթացը.

9) իրականացնում է բյուջեի կատարողականի վերլուծություն՝ արդյունքների մասին տեղեկատվությունը պարբերաբար ներկայացնելով Պաշտպանին և Քարտուղարության ղեկավարին.

10) իրականացնում է Աշխատակազմում կառուցվածքային բարեփոխումների իրականացման, նյութատեխնիկական հագեցվածության, տեխնիկական և տեխնոլոգիական զարգացման քաղաքականության ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքները.

11) բյուջետային գործընթացի ապահովման նպատակով իրականացնում է օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթներ.

12) կազմակերպում է Վարչության աշխատանքները, իր իրավասության շրջանակներում տալիս է հանձնարարականներ Վարչության աշխատողներին՝ վերահսկելով դրանց ժամանակին և պատշաճ որակով կատարումը.

13) Պաշտպանին, Քարտուղարության ղեկավարին առաջարկություններ է ներկայացնում իր անմիջական ենթակայության տակ գտնվող աշխատողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատելու, վերապատրաստելու, խրախուսելու կամ կարգապահական տույժի ենթարկելու, ինչպես նաև գործուղելու, արձակուրդ տրամադրելու վերաբերյալ.

14) համապատասխան առաջարկություններ է ներկայացնում Վարչության աշխատողների բացակայության դեպքում նրանց փոխարինելու մասին.

15) Պաշտպանին և Քարտուղարության ղեկավարին է ներկայացնում Վարչության աշխատանքային ծրագրերը.

16) այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանում է Վարչության առջև դրված գործառույթների և

խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր.

17) ստորագրում է Վարչության անունից պատրաստվող փաստաթղթերը.

18) Վարչության լիազորությունների շրջանակներում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

Վարչության պետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):

VIII. ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

12. Վարչության պետին շնորհվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան:

ՑԱՆԿ № 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ՖԻՆԱՆՍԻՍՏԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ (ՊԱՐՏԱԴԻՐ) ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Աշխատանքային պլանի մշակում
2. Արդյունքների ապահովում
3. Թիմային աշխատանք
4. Հաղորդակցություն
5. Հաշվետվությունների մշակում և ներկայացում
6. Միջանձնային հարաբերություններ
7. Մտածողության ոճեր
8. Նպատակների սահմանում
9. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծում և կառավարում
10. Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային հմտություններ

ՑԱՆԿ № 2

ՍՈՒՅՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Աշխատանքի, կատարողականի գնահատում և կառավարում
2. Առաջնորդման ոճեր
3. Բանակցությունների հմտություններ
4. Բողոքների քավարարում
5. Ելույթների հմտություններ
6. Ժամանակի կառավարում
7. Ուսուցում գործողությունների միջոցով
8. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
9. Խնդիրների լուծում
10. Ծրագրերի մշակում և կառավարում
11. Կոնֆլիկտների կառավարում
12. Շահադրդում
13. Որոշումների կայացում
14. Որոշումների և փաստաթղթերի նախապատրաստում
15. Պատվիրակում
16. Ռեսուրսների բաշխում և կառավարում
17. Սթրեսի կառավարում
18. Փոփոխությունների կառավարում
19. Քաղաքականության մշակում և իրականացում

Հավելված
Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպանի
2018 թվականի մայիսի 31-ի
թիվ 1 հրամանի

Պաշտոնի ծածկագիր ՄԻՊԱ-21-9

Պ Ա Շ Տ Ո Ն Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) քարտուղարության (այսուհետ՝ Քարտուղարություն) ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետի տեղակալ-գլխավոր հաշվապահի պաշտոնն ընդգրկվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության գլխավոր պաշտոնների խմբի 1-ին ենթախմբում:

2. Վարչության պետի տեղակալին օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Պաշտպանը:

II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Վարչության պետի տեղակալ-գլխավոր հաշվապահն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Քարտուղարության ղեկավարին և Վարչության պետին:

4. Վարչության պետի տեղակալ-գլխավոր հաշվապահին իրեն ենթակա աշխատողներ չունի:

5. Վարչության պետի տեղակալ-գլխավոր հաշվապահի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետը կամ Վարչության գնումների մասնագետը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ Պաշտպանի կողմից նշանակված այլ պետական ծառայող:

Վարչության պետի տեղակալ-գլխավոր հաշվապահը Վարչության պետի բացակայության դեպքում փոխարինում է նրան:

6. Վարչության պետի տեղակալ-գլխավոր հաշվապահը՝

1) Վարչության պետի հանձնարարությամբ կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է Վարչության ընթացիկ գործունեությունը, ինչպես նաև օժանդակում է Վարչության ավելի ցածր պաշտոն զբաղեցնող աշխատողների աշխատանքներին, համակարգում նրանց աշխատանքները.

2) կատարում է Քարտուղարության ղեկավարի և Վարչության պետի հանձնարարականները.

3) պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները, իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ վերազանցելու, ինչպես նաև Վարչության առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

III. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Վարչության պետի տեղակալ-գլխավոր հաշվապահը Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրների լուծմանը և որոշումների ընդունմանը:

IV. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Վարչության պետի տեղակալ-գլխավոր հաշվապահը՝

1) Աշխատակազմի ներսում շփվում է Պաշտպանի, Քարտուղարության ղեկավարի, Քարտուղարության ղեկավարի տեղակալի, դեպարտամենտների ղեկավարների, Պաշտպանի խորհրդականների, օգնականների, Աշխատակազմի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների հետ.

2) Քարտուղարության ղեկավարի կամ Վարչության պետի հանձնարարությամբ Աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, բանակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով, հաշվետվություններով և այլն.

3) Քարտուղարության ղեկավարի կամ Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է պետական և այլ մարմինների նիստերին (խորհրդակցություններին):

V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Վարչության պետի տեղակալ-գլխավոր հաշվապահը՝

1) Քարտուղարության ղեկավարի կամ Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է Աշխատակազմի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.

2) բացահայտում, վերլուծում և գնահատում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ կամ ապահովում այդ աշխատանքների կատարումը:

VI. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Վարչության պետի տեղակալ-գլխավոր հաշվապահն ունի՝

1) բարձրագույն կրթություն՝ տնտեսագիտություն մասնագիտությամբ.

2) պետական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն երեք տարվա պետական ծառայության ստաժ կամ պետական ծառայության առնվազն 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ գիտական աստիճան կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

3) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն.

4) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին», «Բյուջետային համակարգի մասին», «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, իր լիազորությունների հետ կապված գործող այլ օրենքների, իրավական ակտերի իմացություն.

5) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

6) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

7) ժամանակի կառավարման հմտություններ և ճշտապահություն.

8) համակարգչային հմտություններ.

9) սեղմ ժամկետներում հանձնարարականներ կատարելու ունակություն.

10) միջանձնային հարաբերությունների ձևավորման ունակություններ.

11) անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտություններ և ունակություններ, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտություններ և ունակություններ (ցանկեր № 1-2):

VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Վարչության պետի տեղակալ-գլխավոր հաշվապահը՝

1) իրականացնում է Աշխատակազմի հաշվապահական հաշվառման վարումը՝ «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին», «Բյուջետային համակարգի մասին», «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին», «Գանձապետական համակարգի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքներին, հաշվապահական հաշվառման ստանդարտներին և Աշխատակազմի հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխան.

2) իր լիազորությունների շրջանակներում ստորագրում է հաշվապահական հաշվառման փաստաթղթերը՝ երկրորդ կարգի ստորագրության իրավունքով.

3) իրականացնում է ամսական, եռամսյակային և տարեկան ֆինանսական և վիճակագրական հաշվետվությունների, կազմման և ամփոփման աշխատանքները.

4) իրականացնում է Աշխատակազմի ակտիվների և պարտավորությունների հաշվառում, մատակարարների հետ փոխադարձ հաշվարկների վերաբերյալ ակտերի կազմում և ձևակերպում.

5) իրականացնում է սոցիալական փաթեթի հատկացման գործընթացի հետ կապված աշխատանքները.

6) ապահովում է ծախսերի կատարման ընթացքում ծագած թերությունների հայտնաբերումը.

7) իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև Վարչության պետի հանձնարարությամբ նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ.

8) կատարում է Պաշտպանի, Քարտուղարության ղեկավարի և Վարչության պետի այլ հանձնարարականները.

9) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Վարչության պետի տեղակալ-գլխավոր հաշվապահն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):

VIII. ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

12. Վարչության պետի տեղակալ-գլխավոր հաշվապահին շնորհվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան:

ՑԱՆԿ № 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ (ՊԱՐՏԱԴԻՐ) ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Աշխատանքային պլանի մշակում
2. Արդյունքների ապահովում
3. Թիմային աշխատանք
4. Հաղորդակցություն
5. Հաշվետվությունների մշակում և ներկայացում
6. Միջանձնային հարաբերություններ
7. Մտածողության ոճեր
8. Նպատակների սահմանում
9. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծում և կառավարում
10. Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային հմտություններ

ՑԱՆԿ № 2

ՍՈՒՅՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱՈ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Աշխատանքի, կատարողականի գնահատում և կառավարում
2. Առաջնորդման ոճեր
3. Բանակցությունների հմտություններ
4. Բողոքների բավարարում
5. Ելույթների հմտություններ
6. Ժամանակի կառավարում
7. Ուսուցում գործողությունների միջոցով
8. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպ վարում
9. Խնդիրների լուծում
10. Ծրագրերի մշակում և կառավարում
11. Կոնֆլիկտների կառավարում
12. Շահադրդում
13. Որոշումների կայացում
14. Որոշումների և փաստաթղթերի նախապատրաստո
15. Պատվիրակում
16. Ռեսուրսների բաշխում և կառավարում
17. Սթրեսի կառավարում
18. Փոփոխությունների կառավարում
19. Քաղաքականության մշակում և իրականացում

Հավելված
Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպանի
2018 թվականի մայիսի ___-ի
թիվ ___-Լ հրամանի

Պաշտոնի ծածկագիր ՄԻՊԱՇ-2.1-10

Պ Ա Շ Տ Ո Ն Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ և ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) քաղաքացիական, սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանության դեպարտամենտի (այսուհետ՝ Դեպարտամենտ) երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետի պաշտոնն ընդգրկվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության գլխավոր պաշտոնների խմբի 1-ին ենթախմբում:

2. Բաժնի պետին օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Պաշտպանը:

II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Բաժնի պետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Պաշտպանին, Դեպարտամենտի ղեկավարին և Աշխատակազմի քարտուղարության ղեկավարին (այսուհետ՝ Քարտուղարության ղեկավար) այնքանով, որքանով դա բխում է նրա լիազորություններից:

4. Բաժնի պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:

5. Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մասնագետը, իսկ դրա անհնարինության դեպքում Պաշտպանի կողմից նշանակված այլ պետական ծառայող:

6. Բաժնի պետը՝

1) կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է Բաժնի ընթացիկ գործունեությունը.

2) կատարում է Պաշտպանի և Դեպարտամենտի ղեկավարի հանձնարարականները.

3) պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները, իրեն վերապահված

լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ վերազանցելու, ինչպես նաև Բաժնի առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

III. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Բաժնի պետը՝

1) լուծում է Բաժնի առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրներ և ընդունում որոշումներ.

2) Բաժնի աշխատողներին տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ:

IV. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Բաժնի պետը՝

1) Աշխատակազմի ներսում շփվում է Պաշտպանի, Քարտուղարության ղեկավարի, Քարտուղարության ղեկավարի տեղակալի, դեպարտամենտների ղեկավարների, Պաշտպանի խորհրդականների, օգնականների, Աշխատակազմի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների հետ.

2) Պաշտպանի կամ Դեպարտամենտի ղեկավարի հանձնարարությամբ Աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, բանակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով, հաշվետվություններով և այլն.

3) Պաշտպանի կամ Դեպարտամենտի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է պետական և այլ մարմինների նիստերին (խորհրդակցություններին):

V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Բաժնի պետը՝

1) Պաշտպանի կամ Դեպարտամենտի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է Աշխատակազմի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.

2) բացահայտում, վերլուծում, գնահատում, ինչպես նաև ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ է տալիս Բաժնի առջև դրված ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրներին:

VI. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Բաժնի պետն ունի՝

1) բարձրագույն կրթություն.

2) պետական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն երեք տարվա պետական ծառայության ստաժ կամ պետական ծառայության առնվազն 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ գիտական աստիճան կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական, կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ,

3) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն.

4) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի, «Երեխայի իրավունքների մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի, «Երեխայի իրավունքների մասին», «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի, իր լիազորությունների հետ կապված գործող այլ օրենքների, իրավական ակտերի իմացություն.

5) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

6) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

7) ժամանակի կառավարման հմտություններ և ճշտապահություն.

8) սեղմ ժամկետներում հանձնարարություններ կատարելու ունակություն.

9) համակարգչային հմտություններ.

10) միջանձնային հարաբերությունների ձևավորման ունակություններ.

11) անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտություններ և ունակություններ, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտություններ և ունակություններ (ցանկեր № 1-2):

VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Բաժնի պետը՝

1) ապահովում է Բաժնին մակագրված դիմում-բողոքների ուսումնասիրության և քննարկման պատշաճ ընթացքը.

2) Պաշտպանի կամ Դեպարտամենտի ղեկավարի հանձնարարությամբ իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա կազմակերպում է արագ արձագանքման այց և մասնակցում դրան.

3) պլանավորում և կազմակերպում է պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության այցեր պետական կամ

տեղական ինքնակառավարման մարմիններ կամ կազմակերպություններ, ներառյալ՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատություններ.

4) այցի արդյունքների ամփոփման հիման վրա, երեխաների իրավունքների խախտումների կանխարգելման և պաշտպանության նպատակով իրավասու մարմիններին և կազմակերպություններին Պաշտպանի կողմից առաջարկություններ ներկայացնելու համար՝ ապահովում է համապատասխան փաստաթղթի նախագծի մշակումը.

5) այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանում է Բաժնի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկություններ, պարզաբանումներ, նյութեր և փաստաթղթեր.

6) իրականացնում է երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի ներպետական օրենսդրության, միջազգային փորձի, «Երեխայի իրավունքների մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային վճիռների և այլ միջազգային փաստաթղթերի և հանձնարարականների ուսումնասիրում, պատրաստում զեկույցներ և տեղեկանքներ.

7) իրականացնում է երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի ներպետական իրավական ակտերում օրենսդրական խնդիրների (բացերի) վերհանում և վերլուծություն, անհրաժեշտության դեպքում նախապատրաստում է համապատասխան պետական մարմիններին ուղղված գրությունների (առաջարկների) նախագծեր.

8) ապահովում է երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում գործող հասարակական, բարեգործական, կազմակերպությունների, հիմնադրամների հետ համագործակցությունը.

9) իրականացնում է քաղաքացիների ընդունելություն.

10) քաղաքացիներին տրամադրում է իրավաբանական խորհրդատվություն՝ իրենց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության իրավական միջոցների և ընթացակարգերի վերաբերյալ.

11) ապահովում է Բաժնի գործառույթներին առնչվող «թեժ գծի» կամ այլ հեռախոսահամարով ստացված տեղեկությունների հավաքագրումը, վերլուծումը և հանձնումն Աշխատակազմի քարտուղարության արագ արձագանքման և դիմումների ընդունման վարչությանը.

12) ապահովում է Պաշտպանի տարեկան հաղորդման կամ արտահերթ հրապարակային զեկույցների համար նյութերի նախապատրաստումը և մասնակցում է տարեկան հաղորդման և արտահերթ զեկույցների կազմման աշխատանքներին.

13) անհրաժեշտության դեպքում ապահովում է Պաշտպանի՝ երեխայի իրավունքներին առնչվող հատուկ հրապարակային զեկույցների համար նյութերի նախապատրաստումը և մասնակցում է դրանց կազմման աշխատանքներին.

14) ապահովում է առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, միջնորդագրերի, զեկուցագրերի և այլ գրությունների կազմման աշխատանքները.

15) Դեպարտամենտի ղեկավարին է ներկայացնում Բաժնի աշխատանքային ծրագրերը.

16) Պաշտպանի կամ Դեպարտամենտի ղեկավարի հանձնարարությամբ ստորագրում է Բաժնի անունից պատրաստվող փաստաթղթերը.

17) Դեպարտամենտի ղեկավարին առաջարկություններ է ներկայացնում Բաժնի աշխատողներին գնահատելու, վերապատրաստելու, խրախուսելու կամ կարգապահական տույժի ենթարկելու, ինչպես նաև գործուղելու, արձակուրդ տրամադրելու վերաբերյալ.

18) Դեպարտամենտի ղեկավարին առաջարկություն է ներկայացնում Բաժնի աշխատողի բացակայության դեպքում նրան փոխարինելու մասին.

19) կատարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Պաշտպանի լիազորությունների հիման վրա տրված Պաշտպանի հանձնարարությունները:

Սույն կետի 3-րդ և 5-րդ ենթակետերով նախատեսված գործառույթներն իրականացվում են Պաշտպանի որոշման հիման վրա:

Բաժնի պետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):

VIII. ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

12. Բաժնի պետին շնորհվում է Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան:

ՑԱՆԿ № 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ և ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ (ՊԱՐՏԱԴԻՐ) ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Աշխատանքային պլանի մշակում
2. Արդյունքների ապահովում
3. Թիմային աշխատանք
4. Հաղորդակցություն
5. Հաշվետվությունների մշակում և ներկայացում
6. Միջանձնային հարաբերություններ
7. Մտածողության ոճեր
8. Նպատակների սահմանում
9. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծում և կառավարում
10. Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային հմտություններ

ՑԱՆԿ № 2

ՍՈՒՅՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Աշխատանքի, կատարողականի գնահատում և կառավարում
2. Առաջնորդման ոճեր
3. Բանակցությունների հմտություններ
4. Բողոքների բավարարում
5. Ելույթների հմտություններ
6. Ժամանակի կառավարում
7. Ուսուցում գործողությունների միջոցով
8. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
9. Խնդիրների լուծում
10. Ծրագրերի մշակում և կառավարում
11. Կոնֆլիկտների կառավարում
12. Շահադրդում
13. Որոշումների կայացում
14. Որոշումների և փաստաթղթերի նախապատրաստում
15. Պատվիրակում
16. Ռեսուրսների բաշխում և կառավարում
17. Սթրեսի կառավարում
18. Փոփոխությունների կառավարում
19. Քաղաքականության մշակում և իրականացում

Հավելված
Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպանի
2018 թվականի մայիսի ___-ի
թիվ ___-Լ հրամանի

Պաշտոնի ծածկագիր ՄԻՊԱ-21-11

ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) ներքին աուդիտի բաժնի (այսուհետ՝ Բաժին) ղեկավարի պաշտոնն ընդգրկվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության գլխավոր պաշտոնների խմբի 1-ին ենթախմբում:

2. Բաժնի պետին օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Պաշտպանը:

II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Բաժնի պետն Աշխատակազմի ներքին աուդիտի կազմակերպման և իրականացման համար պատասխանատու պաշտոնատար անձ է:

4. Բաժնի պետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Պաշտպանին, ինչպես նաև Աշխատակազմի քարտուղարության ղեկավարին (այսուհետ՝ Քարտուղարության ղեկավար) այնքանով, որքանով դա բխում է նրա լիազորություններից:

5. Բաժնի պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:

6. Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մասնագետը:

7. Բաժնի պետը՝

1) կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է Բաժնի ընթացիկ գործունեությունը.

2) կատարում է Պաշտպանի հանձնարարականները.

3) իր աշխատանքային պարտականությունների իրականացման ընթացքում պարտավոր է՝ գաղտնիություն, ցուցաբերել անաղարտ, օբյեկտիվ և պատշաճ մասնագիտական վերաբերմունք, Պաշտպանին հայտնել շահերի բախման մասին, բավարար կերպով հավաքել բոլոր փաստերը, չքողարկել անօրինականություններն ու ստանդարտների հետ անհամապատասխանությունները և

ձեռք բերված տեղեկատվությունը չօգտագործել անձնական կամ շահադիտական նպատակներով.

4) ցուցաբերում է անկախություն՝ լրացնելով աուդիտորի անկախության հայտարարագիրը.

5) պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները, իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ վերազանցելու, ինչպես նաև Բաժնի առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

III. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. Բաժնի պետը՝

1) լուծում է Բաժնի առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրներ և ընդունում որոշումներ.

2) Բաժնի աշխատողներին տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ:

IV. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

9. Բաժնի պետը՝

1) Աշխատակազմի ներսում շփվում է Պաշտպանի, Քարտուղարության ղեկավարի, Քարտուղարության ղեկավարի տեղակալի, դեպարտամենտների ղեկավարների, Պաշտպանի խորհրդականների, օգնականների, Աշխատակազմի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների հետ.

2) Պաշտպանի հանձնարարությամբ Աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, բանակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով, հաշվետվություններով և այլն.

3) Պաշտպանի հանձնարարությամբ մասնակցում է պետական և այլ մարմինների նիստերին (խորհրդակցություններին).

V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

10. Բաժնի պետը՝

1) Պաշտպանի հանձնարարությամբ մասնակցում է Աշխատակազմի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.

2) բացահայտում, վերլուծում, գնահատում, ինչպես նաև ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ է տալիս

Բաժնի առջև դրված ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրներին:

VI. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Բաժնի պետն ունի՝

1) բարձրագույն կրթություն.

2) ներքին աուդիտի մասնագիտական որակավորում.

3) պետական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն երեք տարվա պետական ծառայության ստաժ կամ պետական ծառայության առնվազն 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ գիտական աստիճան կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

4) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն.

5) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի, «Ներքին աուդիտի մասին», «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին», «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1233-Ն, 2013 թվականի օգոստոսի 8-ի 896-Ն, 2014 թվականի փետրվարի 13-ի թիվ 176-Ն որոշումների, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն, 2014 թվականի օգոստոսի 21-ի թիվ 541-Ն, 2012 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 1096-Ն, 2012 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 1050-Ն, 2012 թվականի փետրվարի 23-ի թիվ 165-Ն, 2011 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 974-Ն հրամանների, իր լիազորությունների հետ կապված գործող այլ օրենքների, իրավական ակտերի իմացություն.

6) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

7) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

8) համակարգչային հմտություններ.

9) ժամանակի կառավարման հմտություններ և ճշտապահություն.

10) սեղմ ժամկետներում հանձնարարություններ կատարելու ունակություն.

11) միջանձնային հարաբերությունների ձևավորման ունակություններ.

12) անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտություններ և ունակություններ, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտություններ և ունակություններ (ցանկեր № 1-2):

VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12. Բաժնի պետը՝

1) մշակում և Պաշտպանի քննարկմանն է ներկայացնում ներքին աուդիտի կանոնակարգը, ռազմավարական և տարեկան ծրագրերը և դրանց փոփոխությունները.

2) ուղղորդում է ներքին աուդիտի աշխատանքների իրականացումը, այդ թվում՝ աուդիտորական առաջադրանքի աշխատանքային ծրագրերի կազմումը, աշխատանքների կազմակերպումը, առաջադրանքի իրականացումը և առաջադրանքի նկատմամբ վերահսկումը.

3) ապահովում է աուդիտորական առաջադրանքների հաշվետվությունների, եզրակացությունների և առաջարկությունների ներկայացումը Պաշտպանին.

4) կազմում և Պաշտպանին է ներկայացնում ներքին աուդիտի տարեկան հաշվետվությունը.

5) պատրաստում և Պաշտպանի միջոցով լիազոր մարմնին է ներկայացնում աուդիտի տարեկան ամփոփ հաշվետվությունը.

6) գնահատում է աուդիտորական առաջադրանքի արդյունքներով ձեռնարկված միջոցառումները և մոնիթորինգի է ենթարկում դրանց ընթացքը.

7) կազմակերպում է Բաժնի որակի երաշխավորման և բարելավման ծրագրի իրականացումն, այդ թվում՝ իրականացնում է Բաժնի ներքին գնահատումներ.

8) գնահատում է ներքին աուդիտի ռեսուրսների անհրաժեշտությունը և Պաշտպանին է ներկայացնում առաջարկություններ՝ աուդիտի գործընթացում փորձագետների ներգրավման վերաբերյալ.

9) մշակում և իրականացնում է ներքին աուդիտորների մասնագիտական վերապատրաստման ծրագրեր՝ երաշխավորելով նրանց շարունակական մասնագիտական վերապատրաստումը և անհրաժեշտ գիտելիքների ու փորձի առկայությունը.

10) նախանշում է աշխատակազմի Բաժնի առջև ծառացած խնդիրները և Պաշտպանի քննությանը ներկայացնում դրանց կարգավորմանն ուղղված համապատասխան առաջարկություններ.

11) ապահովում է ժամանակավորապես իրեն տրամադրված փաստաթղթերի անվնաս պահպանումը և աուդիտի ենթարկվող միավորին վերադարձնում դրանց բնօրինակները.

12) ապահովում է Բաժնին առնչվող փաստաթղթերի պահպանումը և դրանց արխիվացումը.

13) անհրաժեշտության դեպքում խորհրդակցելով Լիազոր մարմնի հետ, Բաժնի գործունեության համար մշակում է առանձին մեթոդաբանություն.

14) իրականացնում է ներքին աուդիտի օրենսդրությամբ և ստանդարտներով նախատեսված այլ գործառույթներ և պարտականություններ.

15) իրավունք ունի հաղորդակցվել աուդիտի ենթարկվող միավորների ղեկավարների և աշխատակիցների հետ, աջակցություն ստանալ, պատասխանատու

աշխատակիցներից պահանջել աուդիտի համար անհրաժեշտ ցանկացած տվյալ.

16) Պաշտպանին ներկայացնում է զեկուցումներ աուդիտի իրականացման սահմանափակումների՝ խոչընդոտների և խնդիրների վերաբերյալ.

17) իրավունք ունի օգտվելու աուդիտի իրականացման համար անհրաժեշտ Աշխատակազմի ողջ էլեկտրոնային տեղեկատվությունից և գրանցումներից, այդ թվում գաղտնի տեղեկատվությունից՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված գաղտնի տվյալների հասանելիության կարգի.

18) այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանում է բաժնի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր.

19) ստորագրում է բաժնի անունից պատրաստվող փաստաթղթերը.

20) բաժնի լիազորությունների շրջանակներում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

21) բաժնի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված, Պաշտպանի գիտությամբ, կարող է հրավիրել խորհրդակցություններ՝ դրանց մասնակից դարձնելով համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների և փորձագետների.

22) ապահովում է Պաշտպանի տարեկան հաղորդման, հատուկ կամ արտահերթ զեկույցների համար նյութերի նախապատրաստումը և մասնակցում է դրանց կազմման աշխատանքներին.

23) կազմակերպում է Բաժնի աշխատանքները, իր իրավասության շրջանակներում տալիս է հանձնարարականներ Բաժնի աշխատողներին՝ վերահսկելով դրանց ժամանակին և պատշաճ որակով կատարումը.

24) Պաշտպանին առաջարկություններ է ներկայացնում իր անմիջական ենթակայության տակ գտնվող աշխատողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատելու, վերապատրաստելու, խրախուսելու կամ կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ.

25) համապատասխան առաջարկություններ է ներկայացնում Բաժնի աշխատողների բացակայության դեպքում նրանց փոխարինելու մասին.

Բաժնի պետն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչության (այսուհետ՝ Վարչություն) առաջատար մասնագետի պաշտոնն ընդգրկվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ ենթախմբում:

2. Վարչության առաջատար մասնագետին օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Պաշտպանը:

II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Վարչության առաջատար մասնագետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

4. Վարչության առաջատար մասնագետն իրեն ենթակա աշխատողներ չունի:

5. Վարչության առաջատար մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալը կամ Վարչության մյուս առաջատար մասնագետը, իսկ դրա անհնարինության դեպքում Պաշտպանի կողմից նշանակված այլ պետական ծառայող:

Վարչության առաջատար մասնագետը Վարչության պետի տեղակալի, Վարչության առաջատար մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:

6. Վարչության առաջատար մասնագետը՝

1) Վարչության աշխատանքների կազմակերպման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.

2) կատարում է Վարչության պետի հանձնարարականները.

3) պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ լիազորությունները

վերազանցելու, ինչպես նաև տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

III. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Վարչության առաջատար մասնագետը Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրների լուծմանը և որոշումների ընդունմանը:

IV. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Վարչության առաջատար մասնագետը՝

1) Վարչության ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում.

2) Աշխատակազմի ներսում շփվում է Պաշտպանի, Աշխատակազմի քարտուղարության ղեկավարի, Աշխատակազմի քարտուղարության ղեկավարի տեղակալի, դեպարտամենտների ղեկավարների, Պաշտպանի խորհրդականների, օգնականների, Աշխատակազմի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների հետ.

3) Վարչության պետի հանձնարարությամբ իր գործառույթներն իրականացնելիս Աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով, հաշվետվություններով և այլն.

4) Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է պետական և այլ մարմինների նիստերին (խորհրդակցություններին):

V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Վարչության առաջատար մասնագետը՝

1) Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է Աշխատակազմի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.

2) բացահայտում, վերլուծում և գնահատում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ կամ ապահովում այդ աշխատանքների կատարումը:

VI. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Վարչության առաջատար մասնագետն ունի՝

1) բարձրագույն կրթություն՝ իրավագիտություն մասնագիտությամբ.

2) պետական ծառայության պաշտոններում երկու տարվա ստաժ կամ պետական ծառայության առնվազն 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

3) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն.

4) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի, Հայաստանի Հանրապետության քրեական, քրեական դատավարության և քրեակատարողական օրենսգրքերի, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին», «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշման, իր լիազորությունների հետ կապված գործող այլ օրենքների, իրավական ակտերի իմացություն.

5) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

6) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

7) ժամանակի կառավարման հմտություններ և ճշտապահություն.

8) սեղմ ժամկետներում հանձնարարություններ կատարելու ունակություն.

9) համակարգչային հմտություններ.

10) միջանձնային հարաբերությունների ձևավորման ունակություններ.

11) անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտություններ և ունակություններ, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտություններ և ունակություններ (ցանկեր № 1-2):

VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Վարչության առաջատար մասնագետը՝

1) իրականացնում է պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության այցեր ազատությունից զրկման վայրեր, այդ թվում՝ դրանց հարակից շինություններ կամ կառույցներ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ

արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը կանխարգելելու նպատակով.

2) խորհրդապահական (կոնֆիդենցիալ) կարգով և անարգել տեսակցում և առանձնազրույցներ է ունենում ազատությունից զրկման վայրերում գտնվող անձանց հետ, ինչպես նաև համապատասխան հաստատությունների աշխատակիցների կամ նշված վայրում գտնվող կամ համապատասխան տեղեկություն ունեցող ցանկացած այլ անձի հետ, անհրաժեշտության դեպքում ներգրավում է թարգմանիչ, օգտագործում տեխնիկական միջոցներ, այդ թվում՝ տեսանկարահանող և չափիչ սարքեր.

3) այցի արդյունքների ամփոփման հիման վրա, ազատությունից զրկման ցանկացած վայրում գտնվող անձանց պահման պայմանները բարելավելու, ինչպես նաև խոշտանգումները և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը կանխարգելելու նպատակով իրավասու մարմիններին և կազմակերպություններին Պաշտպանի կողմից առաջարկություններ ներկայացնելու համար՝ մշակում է համապատասխան փաստաթղթի նախագիծ.

4) ստանում է տեղեկություններ ազատությունից զրկման վայրերի քանակի և տեղակայման, ինչպես նաև այնտեղ գտնվող անձանց քանակի վերաբերյալ.

5) պահանջում և ստանում է տեղեկություններ և պարզաբանումներ ազատությունից զրկման վայրում գտնվող անձանց նկատմամբ վերաբերմունքի, նրանց պահման պայմանների, ինչպես նաև իրենց լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ցանկացած այլ հարցի վերաբերյալ.

6) ծանոթանում է իր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերին, ստանում դրանց պատճենները.

7) մասնակցում է Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցի, ինչպես նաև կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության ոլորտին առնչվող արտահերթ զեկույցների նախապատրաստման աշխատանքներին.

8) Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է Պաշտպանի տարեկան հաղորդման, հատուկ կամ արտահերթ զեկույցների համար նյութերի նախապատրաստումը և մասնակցում է դրանց մշակման աշխատանքներին.

9) իրականացնում է համակարգային օրենսդրական խնդիրների վերլուծություն և նախապատրաստում է օրենսդրական բնույթի առաջարկությունների նախագծեր.

10) կազմում է ազատությունից զրկված անձանց իրավունքներին առնչվող օրենսդրական նախագծերի վերաբերյալ կարծիքներ.

11) Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է Վարչության աշխատանքային ծրագրերի մշակմանը.

12) իրականացնում է իր լիազորություններին առնչվող «թեժ գծի» կամ այլ հեռախոսահամարով ստացված տեղեկությունների հավաքագրումը, վերլուծումը և

հանձնումը Աշխատակազմի քարտուղարության արագ արձագանքման և դիմումների ընդունման վարչությանը.

13) Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, միջնորդագրերի, զեկուցագրերի և այլ գրությունների նախապատրաստման ու մշակման աշխատանքները.

14) կատարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ամրագրված Պաշտպանի լիազորությունների հիման վրա տրված Պաշտպանի հանձնարարությունները:

Սույն կետի 1-ին և 2-րդ, ինչպես նաև 4-6 ենթակետերով նախատեսված գործառույթներն իրականացվում են Պաշտպանի որոշման հիման վրա:

Վարչության առաջատար մասնագետն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):

ՑԱՆԿ № 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ (ՊԱՐՏԱԴԻՐ) ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Թիմային աշխատանք
2. Հաղորդակցություն
3. Հաշվետվությունների մշակում և ներկայացում
4. Միջանձնային հարաբերություններ
5. Մտածողության ոճեր
6. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծում և կառավարում
7. Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային հմտություններ

ՑԱՆԿ № 2

ՍՈՒՅՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Աշխատանքային պլանի մշակում
2. Բանակցությունների հմտություններ
3. Ելույթների հմտություններ
4. Խնդիրների լուծում
5. Ծրագրերի մշակում և կառավարում
6. Կառավարման ներածություն
7. Նպատակների սահմանում
8. Որոշումների և փաստաթղթերի նախապատրաստում

Հավելված
Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպանի
2018 թվականի մայիսի -ի
թիվ -Լ հրամանի

Պաշտոնի ծածկագիր ՄԻՊԱ-4.1-54

ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ և ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) քարտուղարության արագ արձագանքման և դիմումների ընդունման վարչության (այսուհետ՝ Վարչություն) մասնագետի պաշտոնն ընդգրկվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության կրտսեր պաշտոնների խմբի 1-ին ենթախմբում:

2. Վարչության մասնագետին օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Պաշտպանը:

II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Վարչության մասնագետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

4. Վարչության մասնագետն իրեն ենթակա աշխատողներ չունի:

5. Վարչության մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության առաջատար մասնագետը կամ մյուս մասնագետը, իսկ դրա անհնարինության դեպքում Պաշտպանի կողմից նշանակված այլ պետական ծառայող:

Վարչության մասնագետը Վարչության առաջատար մասնագետի կամ Վարչության մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:

6. Վարչության մասնագետը՝

1) Վարչության աշխատանքների կազմակերպման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.

2) կատարում է Վարչության պետի հանձնարարականները.

3) պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ լիազորությունները վերազանցելու, ինչպես նաև տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

III. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Վարչության մասնագետը Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրների լուծմանը և որոշումների ընդունմանը:

IV. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Վարչության մասնագետը՝

1) Վարչության ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում.

2) Աշխատակազմի ներսում շփվում է Պաշտպանի, Քարտուղարության ղեկավարի, Քարտուղարության ղեկավարի տեղակալի, դեպարտամենտների ղեկավարների, Պաշտպանի խորհրդականների, օգնականների, Աշխատակազմի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների հետ.

3) Վարչության պետի հանձնարարությամբ Աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, բանակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով, հաշվետվություններով և այլն.

4) Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է պետական և այլ մարմինների նիստերին (խորհրդակցություններին):

V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Վարչության մասնագետը՝

1) Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է Աշխատակազմի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.

2) բացահայտում, վերլուծում և գնահատում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ կամ ապահովում այդ աշխատանքների կատարումը:

VI. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Վարչության մասնագետն ունի՝

1) բարձրագույն կրթություն.

2) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն.

3) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի, իրավական ակտերի իմացություն.

4) համակարգչային հմտություններ.

5) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

6) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

7) սեղմ ժամկետներում հանձնարարություններ կատարելու ունակություն.

8) ժամանակի կառավարման հմտություններ և ճշտապահություն.

9) միջանձնային հարաբերությունների ձևավորման ունակություններ.

10) անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտություններ և ունակություններ, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտություններ և ունակություններ (ցանկեր № 1-2):

VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Վարչության մասնագետը՝

1) իրականացնում է քաղաքացիների ընդունելություն.

2) Պաշտպանին դիմելու ընթացակարգերի և Պաշտպանի լիազորությունների վերաբերյալ քաղաքացիներին տրամադրում է խորհրդատվություն.

3) ընդունում է հեռախոսազանգեր և իրավաբանական խորհրդատվություն պահանջող հեռախոսազանգերը վերահասցեագրում է Աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներին.

4) մուտքագրում է Աշխատակազմի աշխատողների կողմից բանավոր (այցելության և հեռախոսազանգերի միջոցով) իրավաբանական խորհրդատվությունների արդյունքում կազմված տիպային թերթիկի բովանդակությունը.

5) մուտքագրում է Աշխատակազմի աշխատողների կողմից «թեժ գծով» ստացված՝ իրավաբանական խորհրդատվություններ և արագ արձագանքում պահանջող հեռախոսազանգերի հիման վրա կազմված ամփոփագրերը.

6) իրականացնում է Պաշտպանի կողմից ստորագրված փաստաթղթերի փոստային առաքումը.

7) Վարչության պետի հանձնարարությամբ նախապատրաստում է տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

8) կատարում է Վարչության պետի այլ հանձնարարությունները.

Վարչության մասնագետն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):

VIII. ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

12. Վարչության մասնագետին շնորհվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան:

ՑԱՆԿ № 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ (ՊԱՐՏԱԴԻՐ) ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Թիմային աշխատանք
2. Հաղորդակցություն
3. Հաշվետվությունների մշակում և ներկայացում
4. Միջանձնային հարաբերություններ
5. Մտածողության ոճեր
6. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծում և կառավարում
7. Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային հմտություններ

ՑԱՆԿ № 2

ՍՈՒՅՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Խնդիրների լուծում
2. Բանակցությունների հմտություններ
3. Ելույթների հմտություններ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպանի
2020 թվականի փետրվարի 11-ի
թիվ 3-Լ հրամանի

Պաշտոնի ծածկագիր ՄԻՊԱ-3.1-54

Պ Ա Շ Տ Ո Ն Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ և ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) քարտուղարության արագ արձագանքման և դիմումների ընդունման վարչության (այսուհետ՝ Վարչություն) առաջատար մասնագետի պաշտոնն ընդգրկվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության առաջատար պաշտոնների խմբի 1-ին ենթախմբում:

2. Վարչության առաջատար մասնագետին օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Պաշտպանը:

II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Վարչության առաջատար մասնագետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

4. Վարչության առաջատար մասնագետն իրեն ենթակա աշխատողներ չունի:

5. Վարչության առաջատար մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է գլխավոր մասնագետներից կամ մասնագետներից մեկը, իսկ դրա անհնարինության դեպքում Պաշտպանի կողմից նշանակված այլ պետական ծառայող:

Վարչության առաջատար մասնագետը Վարչության Վարչության գլխավոր մասնագետի կամ մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:

6. Վարչության առաջատար մասնագետը՝

1) Վարչության աշխատանքների կազմակերպման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.

2) կատարում է Վարչության պետի հանձնարարականները.

3) պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ լիազորությունները վերազանցելու, ինչպես նաև տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

III. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Վարչության առաջատար մասնագետը Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրների լուծմանը և որոշումների ընդունմանը:

IV. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Վարչության առաջատար մասնագետը՝

1) Վարչության ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում.

2) Աշխատակազմի ներսում շփվում է Պաշտպանի, Քարտուղարության ղեկավարի, Քարտուղարության ղեկավարի տեղակալի, դեպարտամենտների ղեկավարների, Պաշտպանի խորհրդականների, օգնականների, Աշխատակազմի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների հետ.

3) Վարչության պետի հանձնարարությամբ Աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, բանակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով, հաշվետվություններով և այլն.

4) Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է պետական և այլ մարմինների նիստերին (խորհրդակցություններին):

V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Վարչության առաջատար մասնագետը՝

1) Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է Աշխատակազմի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.

2) բացահայտում, վերլուծում, գնահատում, ինչպես նաև ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ է տալիս Վարչության առջև դրված ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրներին:

VI. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Վարչության առաջատար մասնագետն ունի՝

1) բարձրագույն կրթություն.

2) պետական ծառայության պաշտոններում երկու տարվա ստաժ կամ պետական ծառայության առնվազն 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

3) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն.

4) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի, իր լիազորությունների հետ կապված գործող այլ օրենքների, իրավական ակտերի իմացություն.

5) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

6) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

7) ժամանակի կառավարման հմտություններ և ճշտապահություն.

8) սեղմ ժամկետներում հանձնարարություններ կատարելու ունակություն.

9) համակարգչային հմտություններ.

10) միջանձնային հարաբերությունների ձևավորման ունակություններ.

11) անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտություններ և ունակություններ, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտություններ և ունակություններ (ցանկեր № 1-2):

VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Վարչության առաջատար մասնագետը՝

1) իրականացնում է քաղաքացիների ընդունելություն.

2) Պաշտպանին դիմելու ընթացակարգերի և Պաշտպանի լիազորությունների վերաբերյալ քաղաքացիներին տրամադրում է խորհրդատվություն.

3) ընդունում է հեռախոսազանգեր և իրավաբանական խորհրդատվություն պահանջող հեռախոսազանգերը վերահասցեագրում է Աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներին.

4) մուտքագրում է Աշխատակազմի աշխատողների կողմից բանավոր (այցելության և հեռախոսազանգերի միջոցով) իրավաբանական խորհրդատվությունների արդյունքում կազմված տիպային թերթիկների բովանդակությունը.

5) մուտքագրում է Աշխատակազմի աշխատողների կողմից «թեժ գծով» ստացված՝ իրավաբանական խորհրդատվություններ և արագ արձագանքում պահանջող հեռախոսազանգերի հիման վրա կազմված ամփոփագրերը.

6) իրականացնում է Պաշտպանի կողմից ստորագրված փաստաթղթերի փոստային առաքում.

7) Վարչության պետի հանձնարարությամբ նախապատրաստում է տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

8) կատարում է Վարչության պետի այլ հանձնարարությունները,

Վարչության առաջատար մասնագետն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):

ՑԱՆԿ № 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ և ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ (ՊԱՐՏԱԴԻՐ) ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Թիմային աշխատանք
2. Հաղորդակցություն
3. Հաշվետվությունների մշակում և ներկայացում
4. Միջանձնային հարաբերություններ
5. Մտածողության ոճեր
6. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծում և կառավարում
7. Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային հմտություններ

ՑԱՆԿ № 2

ՍՈՒՅՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Աշխատանքային պլանի մշակում
2. Բանակցությունների հմտություններ
3. Ելույթների հմտություններ
4. Խնդիրների լուծում
5. Ծրագրերի մշակում և կառավարում
6. Կառավարման ներածություն
7. Նպատակների սահմանում
8. Որոշումների և փաստաթղթերի նախապատրաստում

Հավելված
Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպանի
2018 թվականի մայիսի ___-ի
թիվ ___-Լ հրամանի

Պաշտոնի ծածկագիր ՄԻՊԱ-4.1-55

ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ և ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) քարտուղարության (այսուհետ՝ Քարտուղարություն) արագ արձագանքման և դիմումների ընդունման վարչության (այսուհետ՝ Վարչություն) մասնագետի պաշտոնն ընդգրկվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության կրտսեր պաշտոնների խմբի 1-ին ենթախմբում:

2. Վարչության մասնագետին օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Պաշտպանը:

II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Վարչության մասնագետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

4. Վարչության մասնագետն իրեն ենթակա աշխատողներ չունի:

5. Վարչության մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության առաջատար մասնագետը կամ մյուս մասնագետը, իսկ դրա անհնարինության դեպքում Պաշտպանի կողմից նշանակված այլ պետական ծառայող:

Վարչության մասնագետը Վարչության առաջատար մասնագետի կամ Վարչության մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:

6. Վարչության մասնագետը՝

1) Վարչության աշխատանքների կազմակերպման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.

2) կատարում է Վարչության պետի հանձնարարականները.

3) պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ լիազորությունները

վերազանցելու, ինչպես նաև տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

III. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Վարչության մասնագետը Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրների լուծմանը և որոշումների ընդունմանը:

IV. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Վարչության մասնագետը՝

1) Վարչության ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում.

2) Աշխատակազմի ներսում շփվում է Պաշտպանի, Քարտուղարության ղեկավարի, Քարտուղարության ղեկավարի տեղակալի, դեպարտամենտների ղեկավարների, Պաշտպանի խորհրդականների, օգնականների, Աշխատակազմի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների հետ.

3) Վարչության , պետի հանձնարարությամբ Աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, բանակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով, հաշվետվություններով և այլն.

4) Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է պետական և այլ մարմինների նիստերին (խորհրդակցություններին):

V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Վարչության մասնագետը՝

1) Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է Աշխատակազմի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.

2) բացահայտում, վերլուծում և գնահատում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ կամ ապահովում այդ աշխատանքների կատարումը:

VI. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Վարչության մասնագետն ունի՝

1) բարձրագույն կրթություն.

2) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն.

3) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի, իրավական ակտերի իմացություն.

4) համակարգչային հմտություններ.

5) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

6) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

7) սեղմ ժամկետներում հանձնարարություններ կատարելու ունակություն.

8) ժամանակի կառավարման հմտություններ և ճշտապահություն.

9) միջանձնային հարաբերությունների ձևավորման ունակություններ.

10) անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտություններ և ունակություններ, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտություններ և ունակություններ (ցանկեր № 1-2):

VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Վարչության մասնագետը՝

1) ընդունում է «թեժ գիծ» հեռախոսազանգերը.

2) Պաշտպանին դիմելու ընթացակարգերի, Պաշտպանի լիազորությունների վերաբերյալ քաղաքացիներին տրամադրում է խորհրդատվություն, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում տրամադրում է իրավաբանական խորհրդատվություն.

3) իրավաբանական խորհրդատվություն պահանջող «թեժ գծով» ստացված հեռախոսազանգերը վերահասցեագրում է Աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներին.

4) «թեժ գիծ» հեռախոսահամարով ներկայացված հարցումների արդյունքում տրամադրված խորհրդատվությունների և դրանց կապակցությամբ կատարված գործողությունների բովանդակությունը մուտքագրում է «Mulberry» համակարգ.

5) Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է այցեր պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններ կամ կազմակերպություններ, ներառյալ՝ ազատությունից զրկման վայրեր.

6) իրականացնում է «թեժ գծի» հեռախոսահամարով ստացված՝ մարդու իրավունքների և ազատությունների խախտումների վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումը, վերլուծումը և վիճակագրության վարումը.

7) Վարչության պետի հանձնարարությամբ նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

8) կատարում է Վարչության պետի այլ հանձնարարությունները։

Սույն կետի 5-րդ ենթակետով նախատեսված գործառույթներն իրականացվում է Պաշտպանի որոշման հիման վրա:

Վարչության մասնագետն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):

VIII. ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

12. Վարչության մասնագետին շնորհվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան:

ՑԱՆԿ № 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ և ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ (ՊԱՐՏԱԴԻՐ) ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Թիմային աշխատանք
2. Հաղորդակցություն
3. Հաշվետվությունների մշակում և ներկայացում
4. Միջանձնային հարաբերություններ
5. Մտածողության ոճեր
6. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծում և կառավարում
7. Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային հմտություններ

ՑԱՆԿ № 2

ՍՈՒՅՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Խնդիրների լուծում
2. Բանակցությունների հմտություններ
3. Ելույթների հմտություններ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպանի
2018 թվականի հուլիսի 2 -ի
թիվ 14 - Լ հրամանի

Պաշտոնի ծածկագիր ՄԻՊԱ-3.2-55

Պ Ա Շ Տ Ո Ն Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ և ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) քարտուղարության արագ արձագանքման և դիմումների ընդունման վարչության (այսուհետ՝ Վարչություն) առաջատար մասնագետի պաշտոնն ընդգրկվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ ենթախմբում:

2. Վարչության առաջատար մասնագետին օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Պաշտպանը:

II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Վարչության առաջատար մասնագետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

4. Վարչության առաջատար մասնագետն իրեն ենթակա աշխատողներ չունի:

5. Վարչության առաջատար մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է գլխավոր մասնագետը կամ մյուս առաջատար մասնագետը կամ մասնագետը, իսկ դրա անհնարինության դեպքում Պաշտպանի կողմից նշանակված այլ պետական ծառայող:

Վարչության առաջատար մասնագետը Վարչության ղեկավարի տեղակալի կամ Վարչության գլխավոր մասնագետի կամ Վարչության մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:

6. Վարչության առաջատար մասնագետը՝

1) Վարչության աշխատանքների կազմակերպման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.

2) կատարում է Վարչության պետի հանձնարարականները.

3) պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ լիազորությունները վերազանցելու, ինչպես նաև տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

III. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Վարչության առաջատար մասնագետը Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրների լուծմանը և որոշումների ընդունմանը:

IV. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Վարչության առաջատար մասնագետը՝

1) Վարչության ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում.

2) Աշխատակազմի ներսում շփվում է Պաշտպանի, Քարտուղարության ղեկավարի, Քարտուղարության ղեկավարի տեղակալի, դեպարտամենտների ղեկավարների, Պաշտպանի խորհրդականների, օգնականների, Աշխատակազմի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների հետ.

3) Վարչության պետի հանձնարարությամբ Աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, բանակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով, հաշվետվություններով և այլն.

4) Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է պետական և այլ մարմինների նիստերին (խորհրդակցություններին):

V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Վարչության առաջատար մասնագետը՝

1) Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է Աշխատակազմի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.

2) բացահայտում, վերլուծում, գնահատում, ինչպես նաև ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ է տալիս Վարչության առջև դրված ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրներին:

VI. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Վարչության առաջատար մասնագետն ունի՝

1) բարձրագույն կրթություն.

2) պետական ծառայության պաշտոններում երկու տարվա ստաժ կամ պետական ծառայության առնվազն 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

3) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն.

4) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի, իրավական ակտերի իմացություն.

5) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

6) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

7) ժամանակի կառավարման հմտություններ և ճշտապահություն.

8) սեղմ ժամկետներում հանձնարարություններ կատարելու ունակություն.

9) համակարգչային հմտություններ.

10) միջանձնային հարաբերությունների ձևավորման ունակություններ.

11) անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտություններ և ունակություններ, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտություններ և ունակություններ (ցանկեր № 1-2):

VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Վարչության առաջատար մասնագետը՝

1) ծանոթանում և նախնական մշակման է ենթարկում Աշխատակազմ ստացված դիմումները կամ բողոքները.

2) իրականացնում է Աշխատակազմ ստացված փաստաթղթերի համակարգչային և պատկերամուտով մուտքագրումը.

3) գրանցում է «թեժ գծով» ստացված հեռախոսազանգերի արդյունքում տրամադրված իրավաբանական խորհրդատվությունների և դրանց կապակցությամբ կատարված գործողությունների բովանդակությունը.

4) Պաշտպանին դիմելու ընթացակարգերի, Պաշտպանի լիազորությունների վերաբերյալ քաղաքացիներին տրամադրում է խորհրդատվություն.

5) Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է Պաշտպանի տարեկան հաղորդման, ինչպես նաև հատուկ կամ արտահերթ զեկույցների մշակման աշխատանքներին.

6) Վարչության պետի հանձնարարությամբ նախապատրաստում է տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ.

7) օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Աշխատակազմի արխիվային փաստաթղթերի հաշվառման, պահպանման, վարման և արխիվ փոխանցելու հետ կապված աշխատանքները:

Վարչության առաջատար մասնագետն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):

VIII. ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

12. Վարչության առաջատար մասնագետին շնորհվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

ՑԱՆԿ № 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ և ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ (ՊԱՐՏԱԴԻՐ) ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Թիմային աշխատանք
2. Հաղորդակցություն
3. Հաշվետվությունների մշակում և ներկայացում
4. Միջանձնային հարաբերություններ
5. Մտածողության ոճեր
6. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծում և կառավարում
7. Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային հմտություններ

ՑԱՆԿ № 2

ՍՈՒՅՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Աշխատանքային պլանի մշակում
2. Բանակցությունների հմտություններ
3. Ելույթների հմտություններ
4. Խնդիրների լուծում
5. Ծրագրերի մշակում և կառավարում
6. Կառավարման ներածություն
7. Նպատակների սահմանում
8. Որոշումների և փաստաթղթերի նախապատրաստում

Հավելված
Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպանի
2018 թվականի մայիսի 24-ի
թիվ 19-Լ հրամանի

Պաշտոնի ծածկագիր ՄԻՊԱ-4.1-56

Պ Ա Շ Տ Ո Ն Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) ներքին աուդիտի բաժնի (այսուհետ՝ Բաժին) մասնագետի պաշտոնն ընդգրկվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության կրտսեր պաշտոնների խմբի 1-ին ենթախմբում:

2. Բաժնի մասնագետին օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Պաշտպանը:

II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Բաժնի մասնագետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

4. Բաժնի մասնագետն իրեն ենթակա աշխատողներ չունի:

5. Բաժնի մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետը:

Բաժնի մասնագետը Բաժնի պետի բացակայության դեպքում փոխարինում է նրան:

6. Բաժնի մասնագետը՝

1) Բաժնի աշխատանքների կազմակերպման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.

2) կատարում է Բաժնի պետի հանձնարարականները.

3) պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ լիազորությունները վերազանցելու, ինչպես նաև տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

II. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Բաժնի մասնագետը Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է Բաժնի առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրների լուծմանը և որոշումների ընդունմանը:

IV. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Բաժնի մասնագետը՝

1) Բաժնի ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում.

2) Աշխատակազմի ներսում շփվում է Պաշտպանի, Քարտուղարության ղեկավարի, Քարտուղարության ղեկավարի տեղակալի, դեպարտամենտների ղեկավարների, Պաշտպանի խորհրդականների, օգնականների, Աշխատակազմի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների հետ.

3) Պաշտպանի կամ Բաժնի պետի հանձնարարությամբ իր գործառույթներն իրականացնելիս Աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով, հաշվետվություններով և այլն.

4) Պաշտպանի կամ Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է պետական և այլ մարմինների նիստերին (խորհրդակցություններին).

V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Բաժնի մասնագետը՝

1) Պաշտպանի կամ Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է Աշխատակազմի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.

2) բացահայտում, վերլուծում և գնահատում է Բաժնի առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ կամ ապահովում այդ աշխատանքների կատարումը:

VI. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Բաժնի մասնագետն ունի՝

1) բարձրագույն կրթություն.

2) ներքին աուդիտի մասնագիտական որակավորում:

Ներքին աուդիտի մասնագիտական որակավորում չունեցող անձը Բաժնում կարող է զբաղեցնել միայն ժամանակավոր թափուր պաշտոն ուսուցանվող աուդիտորի կարգավիճակով՝ մինչև համապատասխան որակավորում ստանալը:

3) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն.

4) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի, «Ներքին աուդիտի մասին», «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին», «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1233-Ն, 2013 թվականի օգոստոսի 8-ի 896-Ն, 2014 թվականի փետրվարի 13-ի թիվ 176-Ն որոշումների, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն, 2014 թվականի օգոստոսի 21-ի թիվ 541-Ն, 2012 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 1096-Ն, 2012 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 1050-Ն, 2012 թվականի փետրվարի 23-ի թիվ 165-Ն, 2011 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 974-Ն հրամանների, իր լիազորությունների հետ կապված գործող այլ օրենքների, իրավական ակտերի իմացություն.

5) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

6) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

7) համակարգչային հմտություններ.

8) ժամանակի կառավարման հմտություններ և ճշտապահություն.

9) սեղմ ժամկետներում հանձնարարություններ կատարելու ունակություն.

10) միջանձնային հարաբերությունների ձևավորման ունակություններ.

11) անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտություններ և ունակություններ, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտություններ և ունակություններ (ցանկեր № 1-2):

VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Բաժնի մասնագետը՝

1) իրականացնում և փաստաթղթավորում է աուդիտորական առաջադրանքների ծրագրով սահմանված աշխատանքները.

2) քննարկում է Բաժնի պետի հետ աուդիտորական առաջադրանքների իրականացման ավելի արդյունավետ և օգտավետ մոտեցումներ.

3) քննարկում է Բաժնի պետի հետ իրականացված աշխատանքների և դրանց կատարման ընթացքում առաջացած խոչընդոտների սահմանափակումների ու առաջադրանքի աշխատանքային ծրագրից շեղումների հետ կապված հարցեր.

4) Բաժնի պետին հայտնում է իր մտահոգությունների և հայտնաբերված խնդիրների մասին.

5) մասնակցում է աուդիտորական առաջադրանքների ամփոփման և հաշվետվությունների կազմման աշխատանքներին.

6) խնամքով և բավարար կերպով հավաքում է այն բոլոր փաստաթղթերը, որոնք առնչվում են աուդիտորական առաջադրանքների իրականացման հետ.

7) իրականացնում է Բաժնին առնչվող փաստաթղթերի պահպանման և արխիվացման աշխատանքները.

8) իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև Բաժնի պետի հանձնարարությամբ նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

9) իրավունք ունի հաղորդակցվել աուդիտի ենթակա միավորների աշխատակիցների հետ, ստանալ աջակցություն և Բաժնի պետի պահանջին համապատասխան տվյալներ.

10) Բաժնի առջև դրված խնդիրների և գործառույթների կատարման հետ կապված կարող է մասնակցել հանդիպումների, խորհրդակցությունների, սեմինարների, ժողովների և այլն.

11) մասնակցում է շարունակական մասնագիտական վերապատրաստումներին.

12) կատարում է Պաշտպանի, Քարտուղարության ղեկավարի և Բաժնի պետի այլ հանձնարարականները.

13) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Բաժնի մասնագետն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):

VIII. ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

12. Բաժնի մասնագետին շնորհվում է Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան:

ՑԱՆԿ № 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ ՄԱՍՆԱԳԵՏԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ (ՊԱՐՏԱԴԻՐ) ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Թիմային աշխատանք
2. Հաղորդակցություն
3. Հաշվետվությունների մշակում և ներկայացում
4. Միջանձնային հարաբերություններ
5. Մտածողության ոճեր
6. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծում և կառավարում
7. Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային հմտություններ

ՑԱՆԿ № 2

ՍՈՒՅՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Խնդիրների լուծում
2. Բանակցությունների հմտություններ
3. Ելույթների հմտություններ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպանի
2019 թվականի մայիսի 30 -ի
թիվ 5 - Լ հրամանի

Պաշտոնի ծածկագիր ՄԻՊԱ-4.1-56

Պ Ա Շ Տ Ո Ն Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) աշխատակազմի քաղաքացիական, սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանության դեպարտամենտի (այսուհետ՝ Դեպարտամենտ) հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության բաժնի (այսուհետ՝ Բաժին) մասնագետի պաշտոնն ընդգրկվում է Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության կրտսեր պաշտոնների խմբի 1-ին ենթախմբում:

2. Բաժնի մասնագետին օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Պաշտպանը:

II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Բաժնի մասնագետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

4. Բաժնի մասնագետն իրեն ենթակա աշխատողներ չունի:

5. Բաժնի մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի առաջատար մասնագետը, իսկ դրա անհնարինության դեպքում Պաշտպանի կողմից նշանակված այլ պետական ծառայող:

Բաժնի մասնագետը Բաժնի առաջատար մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրան:

6. Բաժնի մասնագետը՝

1) Բաժնի աշխատանքների կազմակերպման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.

2) կատարում է Դեպարտամենտի ղեկավարի կամ Բաժնի պետի հանձնարարականները.

3) պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները, իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ վերազանցելու, ինչպես նաև Բաժնի առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

III. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Բաժնի մասնագետը Դեպարտամենտի ղեկավարի կամ Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է Բաժնի առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրների լուծմանը և որոշումների ընդունմանը:

IV. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Բաժնի մասնագետը՝

1) Բաժնի ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում.

2) աշխատակազմի ներսում շփվում է Պաշտպանի, գլխավոր քարտուղարի, գլխավոր քարտուղարի տեղակալի, Դեպարտամենտների ղեկավարների, Պաշտպանի խորհրդականների, օգնականների, առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների հետ.

3) Դեպարտամենտի ղեկավարի կամ Բաժնի պետի հանձնարարությամբ Պաշտպանի աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, բանակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով, հաշվետվություններով և այլն.

4) Դեպարտամենտի ղեկավարի կամ Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է պետական և այլ մարմինների նիստերին (խորհրդակցություններին):

V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Բաժնի մասնագետը՝

1) Դեպարտամենտի ղեկավարի կամ Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է Պաշտպանի աշխատակազմի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.

2) բացահայտում, վերլուծում և գնահատում է Բաժնի առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ կամ ապահովում այդ աշխատանքների կատարումը:

VI. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Բաժնի մասնագետն ունի՝

1) բարձրագույն կրթություն.

2) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն.

3) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Միավորված ազգերի կազմակերպության 2006 թվականի դեկտեմբերի 13-ի կոնվենցիայի, «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենքի, ՀՀ կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի «Բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 780-Ն որոշման, ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 2-ի «Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 276-Ն որոշման, իր լիազորությունների հետ կապված գործող այլ իրավական ակտերի իմացություն.

4) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

5) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

6) ժամանակի կառավարման հմտություններ.

7) համակարգչային հմտություններ.

8) սեղմ ժամկետներում հանձնարարականներ կատարելու ունակություն.

9) միջանձնային հարաբերությունների ձևավորման ունակություններ.

10) անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտություններ և ունակություններ, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտություններ և ունակություններ (ցանկեր № 1-2):

VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Բաժնի մասնագետը՝

1) իրականացնում է Բաժնին մակագրված դիմում-բողոքների ուսումնասիրության և քննարկման պատշաճ ընթացքը.

2) Դեպարտամենտի ղեկավարի կամ Բաժնի պետի հանձնարարությամբ իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա իրականացնում է արագ արձագանքման այցեր.

3) իրականացնում է պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության այցեր պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններ կամ կազմակերպություններ, ներառյալ՝ այն հաստատություններ, որտեղ գտնվում են հաշմանդամություն ունեցող անձինք, այդ թվում՝ տուն-ինտերնատներ, մասնագիտացված մանկատներ և այլն.

4) այցի արդյունքների ամփոփման հիման վրա, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտումների կանխարգելման և պաշտպանության նպատակով իրավասու մարմիններին և կազմակերպություններին Պաշտպանի կողմից առաջարկություններ ներկայացնելու համար՝ իրականացնում է համապատասխան փաստաթղթի նախագծի մշակումը.

5) այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանում է Բաժնի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկություններ, պարզաբանումներ, նյութեր և փաստաթղթեր.

6) իրականացնում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտի ներպետական օրենսդրության, միջազգային փորձի, «Հաշմանդամություն

ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային վճիռների և այլ միջազգային փաստաթղթերի և հանձնարարականների ուսումնասիրում, պատրաստում զեկույցներ և տեղեկանքներ.

7) իրականացնում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտի ներպետական իրավական ակտերում օրենսդրական խնդիրների (բացերի) վերհանում և վերլուծություն, անհրաժեշտության դեպքում նախապատրաստում է համապատասխան պետական մարմիններին ուղղված գրությունների (առաջարկների) նախագծեր.

8) իրականացնում է քաղաքացիների ընդունելություն.

9) քաղաքացիներին տրամադրում է իրավաբանական խորհրդատվություն՝ իրենց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության իրավական միջոցների և ընթացակարգերի վերաբերյալ.

10) Իրականացնում է Բաժնի գործառույթներին առնչվող թեժ գծի կամ այլ հեռախոսահամարով ստացված տեղեկությունների հավաքագրումը, վերլուծումը և հանձնումն Պաշտպանի աշխատակազմի քարտուղարության արագ արձագանքման և դիմումների ընդունման վարչությանը.

11) մասնակցում է Պաշտպանի տարեկան հաղորդման կամ արտահերթ հրապարակային զեկույցների համար նյութերի նախապատրաստման, տարեկան հաղորդման և արտահերթ զեկույցների կազմման աշխատանքներին.

12) կազմում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

3) պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ լիազորությունները վերազանցելու, ինչպես նաև տրված

հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

III. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Վարչության մասնագետը Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրների լուծմանը և որոշումների ընդունմանը:

IV. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Վարչության մասնագետը՝

1) Վարչության ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում.

2) Աշխատակազմի ներսում շփվում է Պաշտպանի, Գլխավոր քարտուղարի, Գլխավոր քարտուղարի տեղակալի, դեպարտամենտների ղեկավարների, Պաշտպանի խորհրդականների, օգնականների, Աշխատակազմի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների հետ.

3) Վարչության պետի հանձնարարությամբ Աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, բանակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով, հաշվետվություններով և այլն.

4) Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է պետական և այլ մարմինների նիստերին (խորհրդակցություններին):

V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Վարչության մասնագետը՝

1) Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է Աշխատակազմի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.

2) բացահայտում, վերլուծում և գնահատում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ կամ ապահովում այդ աշխատանքների կատարումը:

VI. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Վարչության մասնագետն ունի՝

1) բարձրագույն կրթություն.

2) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն.

3) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի, իրավական ակտերի իմացություն.

4) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

5) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

6) ժամանակի կառավարման հմտություններ և ճշտապահություն.

7) սեղմ ժամկետներում հանձնարարություններ կատարելու ունակություն.

8) համակարգչային հմտություններ.

9) միջանձնային հարաբերությունների ձևավորման ունակություններ.

10) անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտություններ և ունակություններ, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտություններ և ունակություններ (ցանկեր № 1-2):

VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Վարչության մասնագետը՝

1) ծանոթանում և նախնական մշակման է ենթարկում Աշխատակազմ ստացված դիմումները կամ բողոքները.

2) իրականացնում է Աշխատակազմ ստացված փաստաթղթերի համակարգչային և պատկերամուտով մուտքագրումը.

3) գրանցում է «թեժ գծով» ստացված հեռախոսազանգերի արդյունքում տրամադրված իրավաբանական խորհրդատվությունների և դրանց կապակցությամբ կատարված գործողությունների բովանդակությունը.

4) Պաշտպանին դիմելու ընթացակարգերի, Պաշտպանի լիազորությունների վերաբերյալ քաղաքացիներին տրամադրում է խորհրդատվություն.

5) Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է Պաշտպանի տարեկան հաղորդման, ինչպես նաև հատուկ կամ արտահերթ զեկույցների մշակման աշխատանքներին.

6) իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև Վարչության պետի հանձնարարությամբ նախապատրաստում է տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ.

7) օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Աշխատակազմի արխիվային փաստաթղթերի հաշվառման, պահպանման, վարման և արխիվ փոխանցելու հետ կապված աշխատանքները:

Վարչության մասնագետն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ ակտերով

նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):

VIII. ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

12. Վարչության մասնագետին շնորհվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան:

ՑԱՆԿ № 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ (ՊԱՐՏԱԴԻՐ) ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Թիմային աշխատանք
2. Հաղորդակցություն
3. Հաշվետվությունների մշակում և ներկայացում
4. Միջանձնային հարաբերություններ
5. Մտածողության ոճեր
6. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծում և կառավարում
7. Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային հմտություններ

ՑԱՆԿ № 2

ՍՈՒՅՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Խնդիրների լուծում
2. Բանակցությունների հմտություններ
3. Ելույթների հմտություններ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպանի
2019 թվականի ապրիլի __-ի
թիվ __-Ա հրամանի

Պաշտոնի ծածկագիր ՄԻՊԱ-4.1-64

Պ Ա Շ Տ Ո Ն Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) միջազգային համագործակցության վարչության (այսուհետ՝ Վարչություն) մասնագետի պաշտոնն ընդգրկվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության կրտսեր պաշտոնների խմբի 1-ին ենթախմբում:

2. Վարչության մասնագետին օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Պաշտպանը:

II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Վարչության մասնագետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

4. Վարչության մասնագետն իրեն ենթակա աշխատողներ չունի:

5. Վարչության մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության առաջատար մասնագետներից մեկը կամ գլխավոր մասնագետը, իսկ դրա անհնարինության դեպքում Պաշտպանի կողմից նշանակված այլ պետական ծառայող:

Վարչության մասնագետը գլխավոր մասնագետի կամ առաջատար մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:

6. Վարչության մասնագետը՝

1) Վարչության աշխատանքների կազմակերպման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.

2) կատարում է Վարչության պետի հանձնարարականները.

3) պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ լիազորությունները վերազանցելու,

ինչպես նաև տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

III. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Վարչության մասնագետը Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրների լուծմանը և որոշումների ընդունմանը:

IV. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Վարչության մասնագետը՝

1) Վարչության ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում.

2) Աշխատակազմի ներսում շփվում է Պաշտպանի, Աշխատակազմի գլխավոր քարտուղարի, Աշխատակազմի գլխավոր քարտուղարի տեղակալի, դեպարտամենտների ղեկավարների, Պաշտպանի խորհրդականների, օգնականների, Աշխատակազմի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների հետ.

3) Վարչության պետի հանձնարարությամբ իր գործառույթներն իրականացնելիս Աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով, հաշվետվություններով և այլն.

4) Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է պետական և այլ մարմինների նիստերին (խորհրդակցություններին):

V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Վարչության մասնագետը՝

1) Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է Աշխատակազմի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.

2) բացահայտում, վերլուծում և գնահատում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ կամ ապահովում այդ աշխատանքների կատարումը:

VI. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Վարչության մասնագետն ունի՝

1) բարձրագույն կրթություն.

2) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն.

3) ժամանակի կառավարման հմտություններ և ճշտապահություն.

4) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

5) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

6) սեղմ ժամկետներում հանձնարարություններ կատարելու ունակություն.

7) համակարգչային հմտություններ.

8) միջանձնային հարաբերությունների ձևավորման ունակություններ.

9) անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտություններ և ունակություններ, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտություններ և ունակություններ (ցանկեր № 1-2):

VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Վարչության մասնագետը՝

1) մասնակցում է օտարերկրյա պետություններում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտում առկա վիճակի վերաբերյալ ուսումնասիրությունների հավաքագրման աշխատանքներին.

2) մասնակցում է Աշխատակազմի և միջազգային ու օտարերկրյա կազմակերպությունների միջև միջազգային ծրագրերի հետ կապված համագործակցության աշխատանքներին.

3) մասնակցում է միջազգային և օտարերկրյա պատվիրակությունների հանդիպմանն ուղղված կազմակերպական աշխատանքներին (օրակարգի կազմում, դիմավորում, հանդիպումների նախօրոք երկկողմանի համաձայնեցում, անցկացում և արարողակարգի ապահովում).

4) մասնակցում է օտարերկրյա պետությունների մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտում օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, ուսումնասիրության աշխատանքներին.

5) մասնակցում է Աշխատակազմի աշխատողների արտասահմանյան գործուղումների վերաբերյալ հաշվետվությունների հավաքագրման աշխատանքներին.

6) մասնակցում է www.pashtpan.am (www.ombuds.am) ինտերնետային էջում տեղադրվող նյութերի թարգմանության աշխատանքներին.

7) մասնակցում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտում օտարերկրյա պետությունների լիազոր մարմինների, միջազգային կազմակերպությունների և իրավապաշտպան

հաստատությունների համագործակցությանն ուղղված աշխատանքներին.

8) Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է Պաշտպանի տարեկան հաղորդման, հատուկ կամ արտահերթ զեկույցների համար նյութերի նախապատրաստումը և մասնակցում է դրանց մշակման աշխատանքներին.

9) Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, միջնորդագրերի, զեկուցագրերի և այլ գրությունների նախապատրաստման ու մշակման աշխատանքները.

10) Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է Վարչության աշխատանքային ծրագրերի մշակմանը.

Վարչության մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):

VIII. ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

12. Վարչության մասնագետին շնորհվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան:

ՑԱՆԿ № 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ (ՊԱՐՏԱԴԻՐ) ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Թիմային աշխատանք
2. Հաղորդակցություն
3. Հաշվետվությունների մշակում և ներկայացում
4. Միջանձնային հարաբերություններ
5. Մտածողության ոճեր
6. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծում և կառավարում
7. Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային հմտություններ

ՑԱՆԿ № 2

ՍՈՒՅՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Խնդիրների լուծում
2. Բանակցությունների հմտություններ
3. Ելույթների հմտություններ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպանի
2019 թվականի մայիսի 17-ի
թիվ 1-Ա հրամանի

Պաշտոնի ծածկագիր ՄԻՊԱ-4.1-65

Պ Ա Շ Տ Ո Ն Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՎ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի (այսուհետ՝ Դեպարտամենտ) քրեական արդարադատության ոլորտում իրավունքների պաշտպանության վարչության (այսուհետ՝ Վարչություն) մասնագետի պաշտոնն ընդգրկվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության կրտսեր պաշտոնների խմբի 1-ին ենթախմբում:

2. Վարչության մասնագետին օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Պաշտպանը:

II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Վարչության մասնագետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

4. Վարչության մասնագետն իրեն ենթակա աշխատողներ չունի:

5. Վարչության մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալը կամ Վարչության առաջատար մասնագետը կամ մյուս մասնագետը, իսկ դրա անհնարինության դեպքում Պաշտպանի կողմից նշանակված այլ պետական ծառայող:

Վարչության մասնագետը Վարչության պետի տեղակալի, Վարչության առաջատար կամ Վարչության մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:

6. Վարչության մասնագետը՝

1) Վարչության աշխատանքների կազմակերպման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.

2) կատարում է Վարչության պետի հանձնարարականները.

3) պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ լիազորությունները վերազանցելու, ինչպես նաև տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

III. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Վարչության մասնագետը Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրների լուծմանը և որոշումների ընդունմանը:

IV. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Վարչության մասնագետը՝

1) Վարչության ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում.

2) Աշխատակազմի ներսում շփվում է Պաշտպանի, Աշխատակազմի գլխավոր քարտուղարի, Աշխատակազմի գլխավոր քարտուղարի տեղակալի, դեպարտամենտների ղեկավարների, Պաշտպանի խորհրդականների, օգնականների, Աշխատակազմի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների հետ.

3) Վարչության պետի հանձնարարությամբ իր գործառույթներն իրականացնելիս Աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով, հաշվետվություններով և այլն.

4) Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է պետական և այլ մարմինների նիստերին (խորհրդակցություններին):

V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Վարչության մասնագետը՝

1) Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է Աշխատակազմի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.

2) բացահայտում, վերլուծում և գնահատում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ կամ ապահովում այդ աշխատանքների կատարումը:

VI. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Վարչության մասնագետն ունի՝

1) բարձրագույն կրթություն՝ իրավագիտություն մասնագիտությամբ.

2) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն.

3) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի, Հայաստանի Հանրապետության քրեական, քրեական դատավարության և քրեակատարողական օրենսգրքերի, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին», «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշման, իր լիազորությունների հետ կապված գործող այլ օրենքների, իրավական ակտերի իմացություն.

5) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

6) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

7) ժամանակի կառավարման հմտություններ և ճշտապահություն.

8) սեղմ ժամկետներում հանձնարարություններ կատարելու ունակություն.

9) համակարգչային հմտություններ.

10) միջանձնային հարաբերությունների ձևավորման ունակություններ.

11) անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտություններ և ունակություններ, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտություններ և ունակություններ (ցանկեր № 1-2):

VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Վարչության մասնագետը՝

1) իրականացնում է մակագրված դիմում-բողոքների ուսումնասիրություն, համապատասխան որոշումների, գրությունների նախագծերի նախապատրաստման աշխատանքներ, ներկայացնում դրանք Վարչության պետին կամ նրա հանձնարարությամբ Վարչության պետի տեղակալին.

2) Վարչության պետի հանձնարարությամբ իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա իրականացնում է արագ արձագանքումներ.

3) Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է այցեր պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններ կամ կազմակերպություններ, ներառյալ՝ ազատությունից զրկման վայրեր.

4) Վարչության պետի հանձնարարությամբ այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանում է Վարչության առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկություններ, պարզաբանումներ, նյութեր և փաստաթղթեր.

5) իրականացնում է քաղաքացիների ընդունելություն.

6) քաղաքացիներին տրամադրում է իրավաբանական խորհրդատվություն՝ իրենց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության իրավական միջոցների և ընթացակարգերի վերաբերյալ.

7) իրականացնում և Վարչության պետի հանձնարարությամբ կազմակերպում է Վարչության գործառույթներին առնչվող «թեժ գծի» կամ այլ հեռախոսահամարով ստացված տեղեկությունների հավաքագրումը, վերլուծումը և հանձնումը Աշխատակազմի քարտուղարության արագ արձագանքման և դիմումների ընդունման վարչությանը.

8) Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է Պաշտպանի տարեկան հաղորդման, հատուկ կամ արտահերթ զեկույցների համար նյութերի նախապատրաստումը և մասնակցում է դրանց մշակման աշխատանքներին.

9) Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, միջնորդագրերի, զեկուցագրերի և այլ գրությունների նախապատրաստման ու մշակման աշխատանքները.

10) Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է Վարչության աշխատանքային ծրագրերի մշակմանը.

11) կատարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Պաշտպանի լիազորությունների հիման վրա տրված Պաշտպանի հանձնարարությունները:

12) Սույն կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով նախատեսված գործառույթներն իրականացվում են Պաշտպանի որոշման հիման վրա:

Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների,

միջնորդագրերի, զեկուցագրերի և այլ գրությունների նախապատրաստման աշխատանքները.

VIII. ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

12. Վարչության մասնագետին շնորհվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան:

ՑԱՆԿ № 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՎ ՋԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ (ՊԱՐՏԱԴԻՐ) ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Թիմային աշխատանք
2. Հաղորդակցություն
3. Հաշվետվությունների մշակում և ներկայացում
4. Միջանձնային հարաբերություններ
5. Մտածողության ոճեր
6. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծում և կառավարում
7. Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային հմտություններ

ՑԱՆԿ № 2

ՍՈՒՅՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Խնդիրների լուծում
2. Բանակցությունների հմտություններ
3. Ելույթների հմտություններ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպանի
2019 թվականի նոյեմբերի 18-ի
թիվ 11-Լ հրամանի

Պաշտոնի ծածկագիր ՄԻՊԱ-3.2-66

ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) Տավուշի մարզային ստորաբաժանման (այսուհետ՝ Մարզային ստորաբաժանում) առաջատար մասնագետի պաշտոնն ընդգրկվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ ենթախմբում:

2. Մարզային ստորաբաժանման առաջատար մասնագետին օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Պաշտպանը:

II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Մարզային ստորաբաժանման առաջատար մասնագետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է ստորաբաժանման ղեկավարին:

4. Մարզային ստորաբաժանման առաջատար մասնագետն իրեն ենթակա աշխատողներ չունի:

5. Մարզային ստորաբաժանման առաջատար մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է մարզային ստորաբաժանման կրտսեր մասնագետը կամ մարզային ստորաբաժանման ղեկավարը, իսկ դրա անհնարինության դեպքում Պաշտպանի կողմից նշանակված այլ պետական ծառայող:

Մարզային ստորաբաժանման առաջատար մասնագետը Մարզային ստորաբաժանման ղեկավարի կամ Մարզային ստորաբաժանման կրտսեր մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:

6. Մարզային ստորաբաժանման առաջատար մասնագետը՝

1) Մարզային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.

2) կատարում է Մարզային ստորաբաժանման ղեկավարի հանձնարարականները.

3) պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ լիազորությունները վերազանցելու,

ինչպես նաև տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

III. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Մարզային ստորաբաժանման առաջատար մասնագետը Մարզային ստորաբաժանման ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է Մարզային ստորաբաժանման առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրների լուծմանը և որոշումների ընդունմանը:

IV. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Մարզային ստորաբաժանման առաջատար մասնագետը՝

1) Մարզային ստորաբաժանման ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում.

2) Աշխատակազմի ներսում շփվում է Պաշտպանի, դեպարտամենտների ղեկավարների, Աշխատակազմի գլխավոր քարտուղարի, Աշխատակազմի գլխավոր քարտուղարի տեղակալի, Պաշտպանի խորհրդականների, օգնականների, Աշխատակազմի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների հետ.

3) Մարզային ստորաբաժանման ղեկավարի հանձնարարությամբ իր գործառույթներն իրականացնելիս Աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով, հաշվետվություններով և այլն.

4) Մարզային ստորաբաժանման ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է պետական և այլ մարմինների նիստերին (խորհրդակցություններին):

V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Մարզային ստորաբաժանման առաջատար մասնագետը՝

1) Մարզային ստորաբաժանման ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է Աշխատակազմի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.

2) բացահայտում, վերլուծում և գնահատում է Մարզային ստորաբաժանման առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ կամ ապահովում այդ աշխատանքների կատարումը:

VI. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Մարզային ստորաբաժանման առաջատար մասնագետն ունի՝

1) բարձրագույն կրթություն.

2) պետական ծառայության պաշտոններում երկու տարվա ստաժ կամ պետական ծառայության առնվազն 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

3) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն.

4) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ, քաղաքացիական, քաղաքացիական դատավարության, քրեական, քրեական դատավարության, քրեակատարողական, աշխատանքային, ընտանեկան օրենսգրքերի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, իր լիազորությունների հետ կապված գործող այլ օրենքների, իրավական ակտերի իմացություն.

5) ժամանակի կառավարման հմտություններ և ճշտապահություն.

6) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

7) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

8) սեղմ ժամկետներում հանձնարարություններ կատարելու ունակություն.

9) համակարգչային հմտություններ.

10) միջանձնային հարաբերությունների ձևավորման ունակություններ.

11) անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտություններ և ունակություններ, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտություններ և ունակություններ (ցանկեր № 1-2):

VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Մարզային ստորաբաժանման առաջատար մասնագետը՝

1) իրականացնում է մակագրված դիմում-բողոքների ուսումնասիրություն, համապատասխան որոշումների, գրությունների նախագծերի նախապատրաստման աշխատանքներ, ներկայացնում դրանք Մարզային ստորաբաժանման ղեկավարին.

2) Մարզային ստորաբաժանման ղեկավարի հանձնարարությամբ իրավունքների ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա իրականացնում է արագ արձագանքում.

3) Մարզային ստորաբաժանման ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է այցեր պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններ կամ կազմակերպություններ.

4) Մարզային ստորաբաժանման ղեկավարի հանձնարարությամբ այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանում է Մարզային ստորաբաժանման առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկություններ, պարզաբանումներ, նյութեր և փաստաթղթեր.

5) իրականացնում է քաղաքացիների ընդունելություն.

6) քաղաքացիներին տրամադրում է իրավաբանական խորհրդատվություն՝ իրենց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության իրավական միջոցների և ընթացակարգերի վերաբերյալ.

7) իրականացնում է «թեժ գծի» կամ այլ հեռախոսահամարով ստացված տեղեկությունների հավաքագրումը, վերլուծումը և հանձնումն Աշխատակազմի քարտուղարության արագ արձագանքման և դիմումների ընդունման վարչությանը.

8) Մարզային ստորաբաժանման ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է Պաշտպանի տարեկան հաղորդման, հատուկ կամ արտահերթ զեկույցների համար նյութերի նախապատրաստում և մասնակցում է դրանց մշակման աշխատանքներին.

9) Մարզային ստորաբաժանման ղեկավարի հանձնարարությամբ կազմում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

10) Մարզային ստորաբաժանման ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է Մարզային ստորաբաժանման աշխատանքային ծրագրերի մշակմանը.

11) կատարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Պաշտպանի լիազորությունների հիման վրա տրված Պաշտպանի հանձնարարությունները:

12) Սույն կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով նախատեսված գործառույթներն իրականացվում են Պաշտպանի որոշման հիման վրա:

Մարզային ստորաբաժանման առաջատար մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):

VIII. ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

12. Մարզային ստորաբաժանման առաջատար մասնագետին շնորհվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

ՑԱՆԿ № 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ (ՊԱՐՏԱԴԻՐ) ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Թիմային աշխատանք
2. Հաղորդակցություն
3. Հաշվետվությունների մշակում և ներկայացում
4. Միջանձնային հարաբերություններ
5. Մտածողության ոճեր
6. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծում և կառավարում
7. Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային հմտություններ

ՑԱՆԿ № 2

ՍՈՒՅՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Աշխատանքային պլանի մշակում
2. Բանակցությունների հմտություններ
3. Ելույթների հմտություններ
4. Խնդիրների լուծում
5. Ծրագրերի մշակում և կառավարում
6. Կառավարման ներածություն
7. Նպատակների սահմանում
8. Որոշումների և փաստաթղթերի նախապատրաստում

Հավելված
Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպանի
2019 թվականի նոյեմբերի 18 -ի
թիվ 12 -Լ հրամանի

Պաշտոնի ծածկագիր ՄԻՊԱ-4.1-67

ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) Տավուշի մարզային ստորաբաժանման (այսուհետ՝ Մարզային ստորաբաժանում) մասնագետի պաշտոնն ընդգրկվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության կրտսեր պաշտոնների խմբի 1-ին ենթախմբում:

2. Մարզային ստորաբաժանման մասնագետին օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Պաշտպանը:

II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Մարզային ստորաբաժանման մասնագետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Մարզային ստորաբաժանման ղեկավարին:

4. Մարզային ստորաբաժանման մասնագետն իրեն ենթակա աշխատողներ չունի:

5. Մարզային ստորաբաժանման մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Մարզային ստորաբաժանման առաջատար մասնագետը, իսկ դրա անհնարինության դեպքում Պաշտպանի կողմից նշանակված այլ պետական ծառայող:

Մարզային ստորաբաժանման մասնագետը Մարզային ստորաբաժանման ղեկավարի կամ Մարզային ստորաբաժանման առաջատար մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:

6. Մարզային ստորաբաժանման մասնագետը՝

1) Մարզային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.

2) կատարում է Մարզային ստորաբաժանման ղեկավարի հանձնարարականները.

3) պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ լիազորությունները վերազանցելու, ինչպես նաև տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

III. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Մարզային ստորաբաժանման մասնագետը Մարզային ստորաբաժանման ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է Մարզային ստորաբաժանման առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրների լուծմանը և որոշումների ընդունմանը:

IV. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Մարզային ստորաբաժանման մասնագետը՝

1) Մարզային ստորաբաժանման ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում.

2) Աշխատակազմի ներսում շփվում է Պաշտպանի, Աշխատակազմի քարտուղարության ղեկավարի, Աշխատակազմի քարտուղարության ղեկավարի տեղակալի, դեպարտամենտների ղեկավարների, Պաշտպանի խորհրդականների, օգնականների, Աշխատակազմի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների հետ.

3) Մարզային ստորաբաժանման ղեկավարի հանձնարարությամբ իր գործառույթներն իրականացնելիս Աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով, հաշվետվություններով և այլն.

4) Մարզային ստորաբաժանման ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է պետական և այլ մարմինների նիստերին (խորհրդակցություններին):

V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Մարզային ստորաբաժանման մասնագետը՝

1) Մարզային ստորաբաժանման ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է Աշխատակազմի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.

2) բացահայտում, վերլուծում և գնահատում է Մարզային ստորաբաժանման առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ կամ ապահովում այդ աշխատանքների կատարումը:

VI. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Մարզային ստորաբաժանման մասնագետն ունի՝

1) բարձրագույն կրթություն.

2) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն.

3) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ, քաղաքացիական, քաղաքացիական դատավարության, քրեական, քրեական դատավարության, քրեակատարողական, աշխատանքային, ընտանեկան օրենսգրքերի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, իր լիազորությունների հետ կապված գործող այլ օրենքների, իրավական ակտերի իմացություն.

4) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

5) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

6) ժամանակի կառավարման հմտություններ և ճշտապահություն.

7) սեղմ ժամկետներում հանձնարարություններ կատարելու ունակություն.

8) միջանձնային հարաբերությունների ձևավորման ունակություններ

9) համակարգչային հմտություններ.

10) անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտություններ և ունակություններ, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտություններ և ունակություններ (ցանկեր № 1-2):

VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Մարզային ստորաբաժանման մասնագետը՝

1) իրականացնում է մակագրված դիմում-բողոքների ուսումնասիրություն, համապատասխան որոշումների, գրությունների նախագծերի նախապատրաստման աշխատանքներ, ներկայացնում դրանք Մարզային ստորաբաժանման ղեկավարին.

2) Մարզային ստորաբաժանման ղեկավարի հանձնարարությամբ իրավունքների ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա իրականացնում է արագ արձագանքում.

3) Մարզային ստորաբաժանման ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է այցեր պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններ կամ կազմակերպություններ.

4) Մարզային ստորաբաժանման ղեկավարի հանձնարարությամբ այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանում է Մարզային ստորաբաժանման առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկություններ, պարզաբանումներ, նյութեր և փաստաթղթեր.

5) իրականացնում է քաղաքացիների ընդունելություն.

6) քաղաքացիներին տրամադրում է իրավաբանական խորհրդատվություն՝ իրենց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ

պաշտպանության իրավական միջոցների և ընթացակարգերի վերաբերյալ.

7) իրականացնում է «թեժ գծի» կամ այլ հեռախոսահամարով ստացված տեղեկությունների հավաքագրումը, վերլուծումը և հանձնումն Աշխատակազմի քարտուղարության արագ արձագանքման և դիմումների ընդունման վարչությանը.

8) Մարզային ստորաբաժանման ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է Պաշտպանի տարեկան հաղորդման, հատուկ կամ արտահերթ զեկույցների համար նյութերի նախապատրաստում և մասնակցում է դրանց մշակման աշխատանքներին.

9) Մարզային ստորաբաժանման ղեկավարի հանձնարարությամբ կազմում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

10) Մարզային ստորաբաժանման ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է Մարզային ստորաբաժանման աշխատանքային ծրագրերի մշակմանը.

11) կատարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Պաշտպանի լիազորությունների հիման վրա տրված Պաշտպանի հանձնարարությունները:

12) Սույն կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով նախատեսված գործառույթներն իրականացվում են Պաշտպանի որոշման հիման վրա:

Մարզային ստորաբաժանման մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):

VIII. ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

12. Մարզային ստորաբաժանման մասնագետին շնորհվում է Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան:

ՑԱՆԿ № 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ (ՊԱՐՏԱԴԻՐ) ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Թիմային աշխատանք
2. Հաղորդակցություն
3. Հաշվետվությունների մշակում և ներկայացում
4. Միջանձնային հարաբերություններ
5. Մտածողության ոճեր
6. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծում և կառավարում
7. Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային հմտություններ

ՑԱՆԿ № 2

ՍՈՒՅՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Խնդիրների լուծում
2. Բանակցությունների հմտություններ
3. Ելույթների հմտություններ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպանի
2020 թվականի փետրվարի 1-ի
թիվ 3-Լ հրամանի

Պաշտոնի ծածկագիր ՄԻՊԱ-2.2-68

Պ Ա Շ Տ Ո Ն Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) հանրային կապերի բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետի պաշտոնն ընդգրկվում է Պաշտպանի Աշխատակազմում պետական ծառայության գլխավոր պաշտոնների խմբի 2-րդ ենթախմբում:

2. Բաժնի պետին օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Պաշտպանը:

II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Բաժնի գլխավոր մասնագետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

4. Բաժնի գլխավոր մասնագետն իրեն ենթակա աշխատողներ չունի:

5. Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետը, իսկ դրա անհնարինության դեպքում Պաշտպանի կողմից նշանակված այլ պետական ծառայող:

Բաժնի գլխավոր մասնագետը Բաժնի պետի կամ Բաժնի առաջատար մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:

6. Բաժնի գլխավոր մասնագետը՝

1) Բաժնի աշխատանքների կազմակերպման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.

2) Բաժնի պետի հանձնարարությամբ օժանդակում է Բաժնի աշխատողների աշխատանքներին, ինչպես նաև մասնակցում է բաժնի աշխատանքների ծրագրմանը.

3) պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ լիազորությունները վերազանցելու, ինչպես նաև Բաժնի առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

III. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Բաժնի պետը՝

Բաժնի գլխավոր մասնագետը Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է Բաժնի առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրների լուծմանը և որոշումների ընդունմանը:

IV. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Բաժնի գլխավոր մասնագետը՝

1) Բաժնի ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում.

2) Աշխատակազմի ներսում շփվում է Պաշտպանի, դեպարտամենտների ղեկավարների, Աշխատակազմի գլխավոր քարտուղարի, Աշխատակազմի գլխավոր քարտուղարի տեղակալի, Պաշտպանի խորհրդականների, օգնականների, Աշխատակազմի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների հետ.

3) Բաժնի պետի հանձնարարությամբ իր գործառույթներն իրականացնելիս Աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով, հաշվետվություններով և այլն.

4) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է պետական և այլ մարմինների նիստերին (խորհրդակցություններին):

V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Բաժնի գլխավոր մասնագետը՝

1) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է Աշխատակազմի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.

2) բացահայտում, վերլուծում և գնահատում է Բաժնի առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ կամ ապահովում այդ աշխատանքների կատարումը:

VI. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Բաժնի գլխավոր մասնագետն ունի՝

1) բարձրագույն կրթություն.

2) պետական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն երեք տարվա պետական ծառայության ստաժ կամ պետական ծառայության առնվազն 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ գիտական աստիճան կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

3) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն.

4) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի, «Հանրային ծառայության մասին», «Տեղեկատվության ազատության մասին», «Անձնական տվյալների պաշտպանության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն.

5) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

6) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

7) ժամանակի կառավարման հմտություններ և ճշտապահություն.

8) սեղմ ժամկետներում հանձնարարություններ կատարելու ունակություն.

9) համակարգչային հմտություններ.

10) միջանձնային հարաբերությունների ձևավորման ունակություններ.

11) անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտություններ և ունակություններ, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտություններ և ունակություններ (ցանկեր № 1-2):

VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Բաժնի գլխավոր մասնագետը՝

1) անցկացնում է Պաշտպանի և Աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց մամուլի ասուլիսների, հարցազրույցների, ճեպազրույցների, պետական այլ մարմինների գործունեության ոլորտին առնչվող հասարակական հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ հայտարարությունների կազմակերպումը և անցկացնումը, մամուլի հաղորդագրությունների պատրաստումը.

2) պատրաստում է մամուլի հաղորդագրություններ, պարզաբանումներ ու հայտարարություններ.

3) Բաժնի պետի հանձնարարությամբ ներկայացնում է առաջարկություններ զանգվածային լրատվության միջոցներով ելույթներում, մշտական թեմատիկ խորագրերում, հեռուստահաղորդումներում Աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց մասնակցության վերաբերյալ.

4) իրականացնում է Պաշտպանի աշխատակազմի www.pashtpan.am (www.ombuds.am) պաշտոնական կայքի տեղեկատվական սպասարկումը, հրապարակման ենթակա նյութերի, հայտարարությունների և դրանցում կատարված փոփոխությունների հրապարակումը

5) կազմակերպում է զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ, այդ թվում՝ Պաշտպանի և Աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց մասնակցությամբ, աշխատանքային հանդիպումները.

6) ամփոփում և վերլուծում է մարդու իրավունքների և ազատությունների ոլորտին առնչվող զանգվածային լրատվության միջոցների նյութերը.

7) մասնակցում է պետական մարմիններում անցկացվող նիստերին, խորհրդակցություններին, քննարկումներին, բանակցություններին, պաշտոնական և աշխատանքային այլ միջոցառումներին.

8) Բաժնի պետի հանձնարարությամբ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքին համապատասխան ապահովում է Պաշտպանին ներկայացրած բողոքների քննարկման ընթացքի և արդյունքների մասին հասարակությանը տեղեկացնելու գործընթացը:

9) ստեղծում և վարում է Բաժնի նյութերի համակարգված արխիվ.

10) տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում՝ մասնակցում հեռուստաֆիլմերի, տեսանյութերի, տեղեկագրերի, թողարկման աշխատանքներին.

11) ապահովում է Աշխատակազմի մյուս ստորաբաժանումներից անհրաժեշտ տեղեկությունների և նյութերի ստացումը, այդ թվում՝ մշակվող իրավական ակտերի նախագծերի պատճենները և անհրաժեշտության դեպքում, կազմակերպում դրանց լուսաբանումն ու հանրային քննարկումը.

12) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է Բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

13) իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև Բաժնի պետի հանձնարարությամբ նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ.

14) Բաժնի պետին, ըստ անհրաժեշտության, ներկայացնում է զեկուցագրեր՝ համապատասխան մարմիններում մարդու իրավունքների և ազատությունների վիճակի մասին.

15) Պաշտպանի հանձնարարությամբ կատարում է քաղաքացիների ընդունելություն.

Բաժնի պետն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):

ՑԱՆԿ № 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ (ՊԱՐՏԱԴԻՐ) ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Աշխատանքային պլանի մշակում
2. Արդյունքների ապահովում
3. Թիմային աշխատանք
4. Հաղորդակցություն
5. Հաշվետվությունների մշակում և ներկայացում
6. Միջանձնային հարաբերություններ
7. Մտածողության ոճեր
8. Նպատակների սահմանում
9. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծում և կառավարում
10. Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային հմտություններ

ՑԱՆԿ № 2

ՍՈՒՅՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Աշխատանքի, կատարողականի գնահատում և կառավարում
2. Առաջնորդման ոճեր
3. Բանակցությունների հմտություններ
4. Բողոքների բավարարում
5. Ելույթների հմտություններ
6. Ժամանակի կառավարում
7. Ուսուցում գործողությունների միջոցով
8. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
9. Խնդիրների լուծում
10. Ծրագրերի մշակում և կառավարում
11. Կոնֆլիկտների կառավարում
12. Շահադրդում
13. Որոշումների կայացում
14. Որոշումների և փաստաթղթերի նախապատրաստում
15. Պատվիրակում
16. Ռեսուրսների բաշխում և կառավարում
17. Սթրեսի կառավարում
18. Փոփոխությունների կառավարում
19. Քաղաքականության մշակում և իրականացում

Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

05-Ղ1-1 Գլխավոր քարտուղար(2022-09-07 -2023-01-05)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ | Գլխավոր քարտուղար, (05-Ղ1-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

Գլխավոր քարտուղարն անմիջական ենթակա և հաշվետու է Պաշտպանին:

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ

Գլխավոր քարտուղարին անմիջական ենթակա և հաշվետու է Գլխավոր քարտուղարի տեղակալը, անմիջական հաշվետու են քարտուղարության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, վերահսկողական և անձնակազմի կառավարման բաժնի պետը՝ բացառությամբ քաղաքացիական ծառայության մասով:

1.4 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր քարտուղարի բացակայության դեպքում նրան փոխարինում է Գլխավոր քարտուղարի տեղակալը կամ Պաշտպանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներից մեկը:

1.5 Աշխատավայր

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Պուշկինի 56ա

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. կազմակերպում է կադրային քաղաքականության, ֆինանսաբյուջետային, նյութատեխնիկական ապահովմանն ուղղված աշխատանքները.
2. ապահովում է Պաշտպանի աշխատակազմի գործունեության վերլուծությունը և ամփոփումը, այդ թվում՝ աշխատակազմի ծախսային ծրագրերի կատարման վերաբերյալ հաշվետվության կազմման մասով.
3. ապահովում է Պաշտպանին հասցեագրված բողոքների ընդունման և հաշվառման, դրանց ժամկետների պահպանման հետ կապված աշխատանքները.
4. ապահովում է Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց անձնական գործերի վարման հետ կապված աշխատանքները.
5. ապահովում է համացանցում Պաշտպանի պաշտոնական կայքի աշխատանքների իրականացման օժանդակությունը.
6. ապահովում է Պաշտպանի խորհրդակցությունների, հանդիպումների, այցերի, ինչպես նաև քաղաքացիական ծառայողների վերապատրաստման և գործուղման համար անհրաժեշտ կազմակերպական աշխատանքների իրականացումը.
7. Պաշտպանի հանձնարարությամբ ապահովում է իրավական ակտերի նախագծերի մշակման, ինչպես նաև Պաշտպանի կարծիքին ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ներկայացվող դիտողությունների և առաջարկությունների հետ կապված աշխատանքները.
8. Պաշտպանի հանձնարարությամբ ապահովում է ՀՀ սահմանադրական դատարան ներկայացվող դիմումների նախագծերի մշակման աշխատանքներին մասնակցությունը.
9. կազմակերպում է քաղաքացիների ընդունելություն.
10. ապահովում է Պաշտպանի աշխատակազմի թեժ գծի շուրջօրյա աշխատանքը.
11. անձանց իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա արագ արձագանքման շրջանակներում կազմակերպում է անհետաձգելի այցերի իրականացումը.
12. ներքին կարգապահական կանոններին համապատասխան ապահովում է Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց աշխատանքային կարգապահության վերահսկողության աշխատանքները.
13. ապահովում է գնումների գործընթացը.
14. ապահովում է ընթացիկ և կապիտալ շինարարության գնման, ինչպես նաև նախագծանախահաշվային փաստաթղթերով համապատասխան գործառույթներ իրականացնելու գործընթացը.
15. Պաշտպանի աշխատակազմի լիազորությունների շրջանակներում ապահովում է տեղեկանքների, հաշվետվությունների, միջնորդությունների, զեկուցագրերի և այլ փաստաթղթերի կազմումը.
16. ապահովում է Պաշտպանի տարեկան հաղորդման, հատուկ կամ արտահերթ հրապարակային զեկույցների համար նյութերի նախապատրաստումը.
17. Պաշտպանի հանձնարարությամբ կազմակերպում է Պաշտպանի աշխատակազմի կառուցվածքային, հաստիքային, ինչպես նաև քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ կատարելու աշխատանքների իրականացումը.
18. ապահովում է Պաշտպանի աշխատակազմի տարեկան պահպանման ծախսերի նախահաշվի, դրա կատարողականի, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և տարեկան հ ուսումնասիրման և հաստատման աշխատանքները.
19. ապահովում է Պաշտպանի աշխատակազմի միջնաժամկետ ծախսային ծրագրեր սահմանված կարգով իրականացնելու աշխատանքները.
20. ապահովում է Պաշտպանի աշխատակազմի բյուջետային միջոցների ծախսերի կատարման աշխատանքները.
21. ապահովում է Պաշտպանի աշխատակազմի տարեկան հաշվետվությունների և տարեկան հաշվեկշռի հաստատումը, այդ թվում՝ Պաշտպանի աշխատակազմի հաշվապահական հաշվառում վարելու, ֆինանսական հաշվետվություններ կազմելու աշխատանքները.
22. ապահովում է Պաշտպանի աշխատակազմի փաստաթղթաշրջանառության իրականացումը.
23. ապահովում է համագործակցությունը հանրային իշխանության մարմինների, միջազգային, հասարակական և այլ շահագրգիռ կազմակերպությունների և անձանց հետ:

Իրավունքները.

1. Առանց լիազորագրի հանդես գալ Հայաստանի Հանրապետության անունից և ներկայացնել նրա շահերը, կնքել գործարքներ, իր իրավասությանը վերապահված հարցերով տալ լիազորագրեր.

2. նշանակել և պաշտոնից ազատել Պաշտպանի աշխատակազմի քարտուղարության տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց, ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառել խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ, տրամադրել արձակուրդներ.
3. Պաշտպանին ներկայացնել առաջարկություններ Պաշտպանի աշխատակազմի ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպական հարցերի վերաբերյալ.
4. Պաշտպանի աշխատակազմի քարտուղարության վերահսկողական և անձնակազմի կառավարման բաժնից պահանջել՝

ա. ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվություն՝ մարզային ստորաբաժանումների կողմից դիմում-բողոքների ուսումնասիրության և քննարկման, ինչպես նաև արագ արձագանքման շրջանակներում անհետաձգելի այցերի հետ կապված աշխատանքների համակարգման վերաբերյալ.

բ. ներկայացնել ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու համար դիմում ներկայացրած անձանց փաստաթղթերի փաթեթը.

գ. ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվություն այն քաղաքացիական ծառայողների վերաբերյալ, ում նկատմամբ կիրառվելու է ծառայողական քննություն.

1. կազմակերպել աշխատակազմի հաշվապահական հաշվառումը, ֆինանսական հաշվարկները, ամփոփել հաշվետվությունները և ներկայացնել համապատասխան մարմիններ.
2. ներկայացնել Աշխատակազմի բյուջետային միջոցների հաշվին կատարվող ծախսերի ֆինանսավորման և ֆինանսական պարտավորությունների դիմաց վճարումների նախագծերը.
3. տրամադրել Աշխատակազմի աշխատողների սոցիալական փաթեթից օգտվելու համար անհրաժեշտ հատկացումները.

4. կազմակերպել այլ մարմինների, պաշտոնատար անձանց կողմից պահանջվող՝ Բաժնի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվության և նյութերի տրամադրումը.
5. իրականացնել ծախսերի կատարման ընթացքում ծագած թերությունների հայտնաբերումը.
6. իրականացնել Աշխատակազմի ակտիվների և պարտավորությունների հաշվառում.
7. ուսումնասիրել Բաժնի գործառույթները կանոնակարգող և դրանց իրականացմանն առնչվող իրավական ակտերը, ստուգել և վերլուծել այդ գործառույթների իրականացման համար անհրաժեշտ պայմանները, առաջարկություններն ու եզրակացությունները.
8. մասնակցում է իր գործունեության ոլորտներին առնչվող օրենսդրական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունների մշակումը և ներկայացումը.
9. իր լիազորությունների շրջանակում իրականացնել պաշտոնական հաղորդակցություն:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Ուղղություն	Սոցիալական գիտություններ, լրագրություն և տեղեկատվական գիտություններ	Գործարարություն, վարչարարություն և իրավունք		
Ոլորտ	Սոցիալական և վարքաբանական գիտություններ	Գործարարություն և վարչարարություն		
Ենթաոլորտ	Տնտեսագիտություն	Հաշվապահություն և հարկային գործ	Ֆինանսներ	Կառավարում և վարչարարություն

Բավարարում է «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջին:

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ֆինանսավարկային կամ տնտեսագիտություն բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Բարեվարքություն
  - Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
  - Որոշումների կայացում
  - Ծրագրերի կառավարում
  - Աշխատակազմի կառավարում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Բանակցությունների վարում

- Փոփոխությունների կառավարում
- Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
- Ժամանակի կառավարում
- Փաստաթղթերի նախապատրաստում
- Ֆինանսների և ռեսուրսների կառավարում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի և այլ պետական մարմինների ներկայացուցիչների, ինչպես նաև պատվիրակված լիազորությունների շրջանակներում մասնակցում է օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներին:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ:

Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

05-7.2.Գ-Մ2-1 Գլխավոր մասնագետ(2022-09-07)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ | Քարտուղարություն | Հաշվապահական հաշվառման բաժին | Գլխավոր մասնագետ, (05-7.2.Գ-Մ2-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

Բաժնի գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետը կամ Պաշտպանի հրամանում նշված այլ պաշտոնատար անձը:

1.4 Աշխատավայր

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Պուշկինի 56ա

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. իրականացնում է Աշխատակազմի հաշվապահական հաշվառման վարումը՝ «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին», «Բյուջետային համակարգի մասին», «Գանձապետական համակարգի մասին» օրենքներին համաձայն, հաշվապահական հաշվառման ստանդարտներին և Աշխատակազմի հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխան.
2. իրականացնում է Պաշտպանի աշխատակազմի ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման, պահպանման ծախսերի ֆինանսավորման, պետական գույքի և ֆինանսական միջոցների հաշվառումը.
3. իրականացնում է Պաշտպանի և Աշխատակազմի աշխատողների աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների, գործուղումների հետ կապված ծախսերի հաշվարկումը և վճարումը, ինչպես նաև դրանց հաշվապահական ձևակերպումները.
4. իրականացնում է Աշխատակազմի սոցիալական փաթեթի շահառու հանդիսացող աշխատակիցներին յուրաքանչյուր տարվա համար հատկացված գումարի վճարումները.
5. իրականացնում է էլեկտրոնային շտեմարանում Աշխատակազմի սոցիալական փաթեթի շահառու հանդիսացող աշխատակիցների հաշվառման գործընթացը.
6. իրականացնում է հարկերի, տուրքերի և պարտադիր այլ վճարումների գծով Աշխատակազմի պարտավորությունների ժամանակին կատարումը.
7. իրականացնում է Աշխատակազմի կնքած պայմանագրերի համաձայն՝ ստացված ապրանքների և ծառայությունների դիմաց վճարումները.
8. իրականացնում է Աշխատակազմի ակտիվների և պարտավորությունների հաշվառումը.
9. էլեկտրոնային համակարգի միջոցով իրականացնում է պետական գույքի էլեկտրոնային հաշվառման գործընթացը.

10. կատարում է աշխատակազմի միջնաժամկետ ծախսերի ծրագրի և առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման, ամփոփման և սահմանված կարգով լիազոր մարմին է ներկայացման աշխատանքներ .
11. կատարում է աշխատակազմի տարեկան և արտահերթ գույքագրման աշխատանքներ:

Իրավունքները.

1. աշխատողների սոցիալական փաթեթից օգտվելու համար հատկացումների տրամադրման աշխատանքները կազմակերպելու նպատակով պահանջել համապատասխան փաստաթղթեր.
2. հիմնական միջոցների, ակտիվների և պարտավորությունների գույքագրման աշխատանքների վերաբերյալ պահանջել անհրաժեշտ փաստաթղթեր, տեղեկատվություն և այլ նյութեր.
3. Աշխատակազմի ստորաբաժանումների հետ կազմակերպել աշխատանքային քննարկումներ, ինչպես նաև մասնակցել այլ գերատեսչություններում կազմակերպած աշխատանքային քննարկումներին.
4. Բաժնի պետին ներկայացնել առաջարկություններ՝ Բաժնի աշխատանքներին փորձագետներ ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր կազմավորելու համար.
5. Աշխատակազմի միջնաժամկետ ծախսերի ծրագրերի և առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտերի, ֆինանսական հաշվետվությունների կազմման և ամփոփման համար Աշխատակազմի ստորաբաժանումներից պահանջել անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր.
6. մասնակցել միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից կազմակերպվող սեմինարներին, խորհրդաժողովներին և այլ միջոցառումներին:

Պարտականությունները.

1. նախապատրաստել Ծառայության հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվարկների համար պահանջվող փաստաթղթերը.
2. նախապատրաստել Ծառայության բյուջետային միջոցների հաշվին կատարվող ծախսերի ֆինանսավորման և ֆինանսական պարտավորությունների դիմաց վճարումների նախագծերը և ներկայացնել Բաժնի պետին.
3. ձևակերպել Ծառայության միջնաժամկետ ծախսերի ծրագրի և առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտերը.
4. հավաքագրել Ծառայության աշխատողների սոցիալական փաթեթի համար պահանջվող տվյալները և ներբեռնել էլեկտրոնային շտեմարան:.
5. ուսումնասիրել Բաժնի գործառույթները կանոնակարգող և դրանց իրականացմանն առնչվող իրավական ակտերը, ստուգել և վերլուծել այդ գործառույթների իրականացման համար անհրաժեշտ պայմանները, առաջարկություններն ու եզրակացությունները.
6. իր լիազորությունների շրջանակում իրականացնել պաշտոնական հաղորդակցություն:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Ուղղություն	Սոցիալական գիտություններ, լրագրություն և տեղեկատվական գիտություններ	Գործարարություն, վարչարարություն և իրավունք
Ոլորտ	Սոցիալական և վարքաբանական	Գործարարություն և վարչարարություն

	գիտություններ			
Ենթաոլորտ	Տնտեսագիտություն	Հաշվապահություն և հարկային գործ	Ֆինանսներ	Կառավարում և վարչարարություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ֆինանսավարկային կամ տնտեսագիտություն բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Հաշվետվությունների մշակում
  - Բարեվարքություն
  - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
  - Ծրագրերի մշակում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Փոփոխությունների կառավարում
  - Ժամանակի կառավարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում
  - Ֆինանսների և ռեսուրսների կառավարում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և դիմումների քննարկման արդյունքում որոշումների նախապատրաստման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության գերատեսչական ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային

կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը:

Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

05-7.2.Դ-Ղ3-1 Բաժնի պետ(2022-09-07 -2024-04-01)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ | Քարտուղարություն | Վերահսկողական և անձնակազմի կառավարման բաժին | Բաժնի պետ, (05-7.2.Դ-Ղ3-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

Բաժնի պետն անմիջական ենթակա և հաշվետու է Պաշտպանին: Բաժնի պետն անմիջական հաշվետու է Գլխավոր քարտուղարին՝ բացառությամբ քաղաքացիական ծառայության մասով:

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ

Բաժնի պետին անմիջական ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:

1.4 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի բարեվարքության հարցերով կազմակերպիչը կամ Պաշտպանի հրամանում նշված այլ պաշտոնատար անձը:

1.5 Աշխատավայր

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Պուշկինի 56ա

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. ապահովում է մարզային ստորաբաժանումների գործունեության համակարգման հետ կապված աշխատանքները.
2. ապահովում է Պաշտպանի աշխատակազմի մարզային ստորաբաժանումներ այցելած կամ զանգահարած անձանց տրամադրած իրավաբանական խորհրդատվությունների, ինչպես նաև իրականացված այցերի ընթացքում տրամադրված իրավախորհրդատվությունների բովանդակության վերաբերյալ կազմված փաստաթղթերը.
3. ապահովում է որոշումների, հրամանների և այլ փաստաթղթերի նախագծերի նախապատրաստումն, այդ թվում՝ աշխատանքի նշանակման և ազատման, խրախուսանքի ու կարգապահական տույժի միջոցների կիրառման վերաբերյալ Պաշտպանի և գլխավոր քարտուղարի հրամանների նախագծերը.
4. ապահովում է աշխատանքային և քաղաքացիահիրավական պայմանագրերով աշխատող անձանց աշխատանքային պայմանագրերի ձևակերպումը, ինչպես նաև նշված պաշտոնատար անձանց անձնական գործերի նախապատրաստումը, վարումը, հաշվառումը, պահպանումը և արխիվացումը.
5. ապահովում է կադրերի ռեզերվի ձևավորումը և վարումը.
6. ապահովում է հաստիքացուցակի, անհրաժեշտ տեղեկանքների նախապատրաստումն, անաշխատունակության թերթիկների և աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերի

հաստատումը.
7. ըստ իրավական ակտերի տեսակների՝ ապահովում է հրամանագրքերի և իրավական ակտերի հաշվառման մատյանների վարումը.
8. ապահովում է Աշխատակազմի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթների կազմակերպումն և անցկացումը.
9. ապահովում է կիսամյակային գործունեության գնահատման և վերապատրաստման գործընթացները.
10. ապահովում է քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում՝ այլ պաշտոնատար անձանց պաշտոնների անձնագրերի կազմման հետ կապված աշխատանքները.
11. ապահովում է Աշխատակազմի աշխատողների արձակուրդների և գործուղումների ձևակերպման հետ կապված աշխատանքների իրականացումը, ինչպես նաև ուսումնասիրում և վերլուծում է գործուղումից վերադառնալուց հետո սահմանված ձևով ներկայացված հաշվետվությունները.
12. ապահովում է Պաշտպանի պարգևատրմանը ներկայացված անձանց վերաբերյալ առաջարկությունները, ինչպես նաև մեդալով, հուշամեդալով, շնորհակալագրով և հուշանվերով պարգևատրելու վերաբերյալ Պաշտպանի հրամանի նախագծերի նախապատրաստման հետ կապված աշխատանքները.
13. ապահովում է հսկողություն Աշխատակազմի աշխատողների կողմից ներքին կարգապահական կանոնների պահպանման նկատմամբ:

Իրավունքները.

1. քննարկել հաստիքացուցակի և անվանացանկի հավանական փոփոխության վերաբերյալ տեղեկատվությունը ստորաբաժանումների ղեկավարների հետ.
2. ստանալ Աշխատակազմի քաղաքացիական ծառայողների կողմից լրացված քաղաքացիական ծառայության պաշտոնների վերլուծության հարցարանները, անհրաժեշտության դեպքում քաղաքացիական ծառայողների հետ անցկացնել հարցազրույցներ և աշխատանքային քննարկումներ.
3. պահանջել մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացու կողմից ներկայացված փաստաթղթերի ամբողջական փաթեթը.
4. քաղաքացիական ծառայողի տարեկան կատարողականի գնահատմանը զուգընթաց պահանջել ստորաբաժանումների ղեկավարներից վերապատրաստման կարիքների գնահատման թերթիկներ, քաղաքացիական ծառայողի և նրա անմիջական ղեկավարի միջև անհամաձայնության դեպքում պահանջել քննարկման անցկացում.
5. պահանջել աշխատանքային գրքույկ կամ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանքներ.
6. Աշխատակազմի ստորաբաժանումներից պահանջել աշխատողների հաջորդ տարվա արձակուրդների ժամանակացույցը, ինչպես նաև արձակուրդների դիմումների ներկայացումը սահմանված ժամկետում.
7. պահանջել գործուղման հիմքերը.
8. պահանջել համապատասխան գրություն ուսումնական հաստատություններից ուսանողների պրակտիկան կազմակերպելու նպատակով, և վերահսկողություն իրականացնել Աշխատակազմում պրակտիկա անցնող ուսանողների նկատմամբ.
9.
10. ստանալ աշխատողների հաճախելիության վերաբերյալ տեղեկատվություն Աշխատակազմի մուտքի-ելքի էլեկտրոնային համակարգից.
11. Աշխատակազմի ստորաբաժանումներից պահանջել աշխատողների աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերը.
12. կազմակերպել մասնագիտական քննարկումներ Պաշտպանին կարծիքի ներկայացված իրավական ակտերի նախագծերի, անձանց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության իրավական միջոցների և ընթացակարգերի վերաբերյալ:
13. Բաժնի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման նպատակով պահանջել Պաշտպանի աշխատակազմի մարզային ստորաբաժանումների կողմից սահմանված կարգով

ներկայացվող հաշվետվությունների, գրությունների և այլ փաստաթղթերի նախագծերը.

Պարտականությունները.

1. ուսումնասիրել ստացված փաստաթղթերը անվանացանկի փոփոխության վերաբերյալ, ներկայացնել հաստիքացուցակի և անվանացանկի հրամանների նախագծերը ստորագրման.
2. վերլուծել հարցարաններում նշված տեղեկատվությունը, ինչպես նաև քաղաքացիական ծառայության պաշտոնների նկարագրության կազմման աշխատանքները, ամփոփել արդյունքները և իրականացնել պաշտոնների դասակարգումը և տեղակայումը, քաղաքացիական ծառայության պաշտոնների նկարագրության հիման վրա քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի նախագծերի կազմման աշխատանքները, նախապատրաստել պաշտոնի անձնագրերը հաստատելու կամ անձնագրերում փոփոխություն կատարելու վերաբերյալ հիմնավորումները և համապատասխան առաջարկությունը քաղաքացիական ծառայության գրասենյակ ներկայացնելու համար.
3. քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար սահմանված կարգով և ժամկետներում ապահովել մրցույթի հայտարարության կազմումը և տեղադրումը Պաշտպանի պաշտոնական կայքում.
4. մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացու մասին եզրակացությունը ներկայացնել Պաշտպանին.
5. կազմակերպել քաղաքացիական ծառայության պաշտոն չհանդիսացող, ինչպես նաև քաղաքացիական ծառայության թափուր և ժամանակավոր թափուր պաշտոնները զբաղեցնելու համար աշխատանքային պայմանագրերի նախագծերի կազմման, պայմանագրերում փոփոխություններ կատարելու և պայմանագրերի լուծման աշխատանքները, ինչպես նաև դրանց մասին տեղեկացնել քաղաքացիական ծառայության գրասենյակ և տեղեկատվությունը տեղադրել քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում և Պաշտպանի պաշտոնական կայքում.
6. քաղաքացիական ծառայողների դիմումների հիման վրա կադրերի ռեզերվում գրանցել և ռեզերվից հանել քաղաքացիական ծառայողներին, կազմել իրավական ակտերի նախագծեր, տեղադրել տվյալներ տեղեկատվական հարթակում, ինչպես նաև Պաշտպանին ներկայացնել քաղաքացիական ծառայության ռեզերվից թեկնածուներին.
7. ամփոփել Աշխատակազմի աշխատողների կողմից ներկայացված արձակուրդների ժամանակացույցերն ու դիմումները, օրենսդրությամբ սահմանված ժամկետներում Աշխատակազմի արձակուրդների ժամանակացույցը ներկայացնել հաստատման.
8. ուսումնասիրել և հաստատման նպատակով գլխավոր քարտուղարին ներկայացնել ուսանողների պրակտիկայի օրագրերը և բնութագրերը.
9. կազմակերպել ծառայողական վկայականների, անցագրերի, էլեկտրոնային անցագրերի պատրաստումը և դրանց տրամադրումը Աշխատակազմի աշխատողներին.
10. ստուգել Աշխատակազմի ստորաբաժանումների կողմից ներկայացված աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերը.
11. ուսումնասիրել անձնակազմի կառավարման հարցերով բողոքները, դիմումները և առաջարկությունները, անհրաժեշտության դեպքում կազմակերպել հարցազրույց դիմումատուի հետ, վերլուծել ստացված տեղեկատվությունը և նախապատրաստել ու տրամադրել պատասխանները.
12. ապահովել առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, զեկուցագրերի, գրությունների և այլ փաստաթղթերի նախապատրաստման ու մշակման աշխատանքները.
13. ստանալ քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատված քաղաքացիական ծառայողների կադրերի ռեզերվում գրանցելու և կադրերի ռեզերվից հանելու դիմումները.
14. ուսումնասիրել Աշխատակազմի աշխատողների աշխատանքի կատարողականի գնահատման և աշխատողների պարբերաբար վերապատրաստման արդյունքները.
15. իր լիազորությունների շրջանակում իրականացնել պաշտոնական հաղորդակցություն:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Ուղղություն	Գործարարություն, վարչարարություն և իրավունք
Ոլորտ	Իրավունք
Ենթաոլորտ	Իրավունք
Մասնագիտություն	042101.00.6 Իրավագիտություն կամ 042101.00.7 Իրավագիտություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ իրավունքի կամ կադրերի և մասնագիտական կողմնորոշման բնագավառում ՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Բարեվարքություն
  - Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
  - Որոշումների կայացում
  - Ծրագրերի կառավարում
  - Աշխատակազմի կառավարում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Բանակցությունների վարում
  - Փոփոխությունների կառավարում
  - Կոնֆլիկտների կառավարում
  - Բողոքների բավարարում
  - Ժամանակի կառավարում
  - Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի մեկ ոլորտի համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի մեկ ոլորտի համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն և ազդեցությունը սահմանափակվում է համապետական մակարդակով որոշակի ոլորտով:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ:

Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

05-7.2.Դ–Մ1-1 Բարեվարքության հարցերով կազմակերպիչ(2022-09-07 -2024-04-01)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ | Քարտուղարություն | Վերահսկողական և անձնակազմի կառավարման բաժին | Բարեվարքության հարցերով կազմակերպիչ, (05-7.2.Դ-Մ1-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

Բարեվարքության հարցերով կազմակերպիչն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բարեվարքության հարցերով կազմակերպչի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետը կամ Պաշտպանի հրամանում նշված այլ պաշտոնատար անձը:

1.4 Աշխատավայր

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Պուշկինի 56ա

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. իրականացնում է մարզային ստորաբաժանումների գործունեության համակարգման հետ կապված աշխատանքները.
2. իրականացնում է որոշումների, հրամանների և այլ փաստաթղթերի նախագծերի նախապատրաստումն, այդ թվում՝ աշխատանքի նշանակման և ազատման, խրախուսանքի ու կարգապահական տույժի միջոցների կիրառման վերաբերյալ Պաշտպանի և գլխավոր քարտուղարի հրամանների նախագծերի կազմումը.
3. իրականացնում է աշխատանքային և քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատող անձանց աշխատանքային պայմանագրերի ձևակերպումը, ինչպես նաև նշված պաշտոնատար անձանց անձնական գործերի նախապատրաստումը, վարումը, հաշվառումը, պահպանումը և արխիվացումը.
4. իրականացնում է կադրերի ռեզերվի ձևավորումը և վարումը.
5. իրականացնում է հաստիքացուցակի, անհրաժեշտ տեղեկանքների նախապատրաստումն, անաշխատունակության թերթիկների և աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերի հաստատման ներկայացումը.
6. ըստ իրավական ակտերի տեսակների՝ իրականացնում է հրամանագրքերի և իրավական ակտերի հաշվառման մատյանների վարումը.
7. իրականացնում է Աշխատակազմի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթների կազմակերպումն և անցկացումը.
8. իրականացնում է կիսամյակային գործունեության գնահատման և վերապատրաստման գործընթացները.
9. իրականացնում է քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում՝ այլ պաշտոնատար անձանց պաշտոնների անձնագրերի

նախագծերի կազմումը.
10. իրականացնում է Աշխատակազմի աշխատողների արձակուրդների և գործուղումների ձևակերպումը, ինչպես նաև ուսումնասիրում և վերլուծում է գործուղումից վերադառնալուց հետո սահմանված ձևով ներկայացված հաշվետվությունները.
11. իրականացնում է Պաշտպանի պարգևատրմանը ներկայացված անձանց վերաբերյալ առաջարկությունների ուսումնասիրությունը, ինչպես նաև իրականացնում է հուշամեդալով, շնորհակալագրով, պատվոգրով և հուշանվերով պարգևատրելու վերաբերյալ Պաշտպանի հրամանների նախագծերի նախապատրաստումը.
12. հսկողություն է իրականացնում Աշխատակազմի աշխատողների կողմից ներքին կարգապահական կանոնների պահպանման նկատմամբ.
13. իրականացում է քաղաքացիների ընդունելություն.
14. իրականացում է Վարչության իրավասության շրջանակում կազմակերպություններից և քաղաքացիներից ստացված գրությունների, դիմումների, դիմում-բողոքների պատասխանների կազմում.
15. բարեվարքության համակարգի մասով՝

ա. քաղաքացիական ծառայողներին տրամադրում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերներ ընդունելու արգելքի, վարքագծի կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն, ներկայացնում շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություն.

բ. իրականացնում է բարեվարքության հարցերով վերապատրաստման կարիքների բացահայտում և վերապատրաստման ծրագրերի, ինչպես նաև բարեվարքության պահանջների պահպանմանն ուղղված այլ ծրագրերի մշակում.

գ. Պաշտպանի, էթիկայի հանձնաժողովի պահանջով կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկով կատարում է բարեվարքության համակարգին առնչվող ուսումնասիրություններ.

դ. մշակում է քաղաքացիական ծառայողների բարեվարքության պլանների նախագծերը, դրանք ներկայացնում Պաշտպանի հաստատմանը.

ե. վարում է քաղաքացիական ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման, նվերների ընդունման արգելքի խախտման դեպքերի վիճակագրություն:
Իրավունքները.

1. պաշտոնների անձնագրերի նախագծերը կազմելու գործառույթներն իրականացնելու համար (պաշտոնի նկարագրություն, վերլուծում, գնահատում և այլ) օրենսդրությամբ սահմանված աշխատանքները կատարելու նպատակով կառուցվածքային ստորաբաժանումներից պահանջել անհրաժեշտ լրացուցիչ փաստաթղթեր, հարցարաններ, պարզաբանումներ, հիմնավորումներ, ինչպես նաև աշխատանքային քննարկումներին մասնակցելու իրավունք.
2. Աշխատակազմի հաստիքացուցակում և քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ կատարելու նախապատրաստական աշխատանքների ապահովման համար պահանջել անհրաժեշտ տեղեկատվություն Աշխատակազմի համապատասխան պաշտոնատար անձանցից.
3. քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գործընթացը կազմակերպելու համար ստանալ վերապատրաստման կարիքների գնահատման թերթիկներ.
4. բարեվարքության պլանների նախագծերը կազմելու համար պահանջել անհրաժեշտ փաստաթղթեր.
5. կազմակերպել Աշխատակազմում ուսանողների պրակտիկան և աջակցել պրակտիկա անցնող ուսանողներին.
6. Բաժնի պետի հանձնարարությամբ ուսումնասիրել Աշխատակազմի աշխատողների աշխատանքի կատարողականի գնահատման և աշխատողների պարբերաբար վերապատրաստման արդյունքները.

7. ուսումնասիրել Աշխատակազմի ստորաբաժանումների աշխատողների աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերը.
8. մասնակցել Պաշտպանին կարծիքի ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ մասնագիտական քննարկումներին, ինչպես նաև իր լիազորությունների սահմաններում մասնակցել Աշխատակազմի, ինչպես նաև այլ գերատեսչություններում կազմակերպած աշխատանքային քննարկումներին:
9. իրականացնում է Աշխատակազմի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի թեսթային և բանավոր հարցաշարերի մշակման աշխատանքներ:

Պարտականությունները.

1. Բաժնի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման նպատակով հավաքագրել և ամփոփել Պաշտպանի աշխատակազմի մարզային ստորաբաժանումների կողմից սահմանված կարգով ներկայացվող հաշվետվությունների, գրությունների և այլ փաստաթղթերի նախագծերը.
2. հավաքագրել և ամփոփել Պաշտպանի աշխատակազմի մարզային ստորաբաժանումներ այցելած կամ զանգահարած անձանց տրամադրած իրավաբանական խորհրդատվությունների, ինչպես նաև իրականացված այցերի ընթացքում տրամադրված իրավախորհրդատվությունների բովանդակության վերաբերյալ կազմված փաստաթղթերը.
3. ուսումնասիրել և վերլուծել քաղաքացիական ծառայողների ներկայացրած հարցարանները, պաշտոնները դասակարգել և տեղակայել, կազմել քաղաքացիական ծառայության պաշտոնների նկարագրերը և անձնագրերի նախագծերը.
4. քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթների անցկացման նախապատրաստական աշխատանքների շրջանակներում ներկայացնել առաջարկություններ մրցույթների անցկացման համար նախատեսված հարցաշարերի վերաբերյալ.
5. քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար սահմանված կարգով և ժամկետներում կազմել մրցույթի հայտարարությունը և Պաշտպանի պաշտոնական կայքում տեղադրումը.
6. համապատասխան ստորաբաժանման հետ անցկացնել վերապատրաստման կարիքների գնահատում, արդյունքների վերաբերյալ ամփոփ տեղեկատվության վերլուծում, ամփոփում՝ Աշխատակազմի գլխավոր քարտուղարին ներկայացնելու համար.
7. ուսումնասիրել բարեվարքության գործունեությանն առնչվող աշխատանքային հարաբերությունների հետ կապված հարցերը և մշակել քաղաքացիական ծառայողների բարեվարքության պլանների նախագծերը
8. կազմել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, գրություններ և այլ փաստաթղթեր.
9. իր լիազորությունների շրջանակում իրականացնել պաշտոնական հաղորդակցություն:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Ուղղություն	Գործարարություն, վարչարարություն և իրավունք
Ոլորտ	Իրավունք
Ենթաոլորտ	Իրավունք

042101.00.6 Իրավագիտություն կամ Մասնագիտություն

042101.00.7 Իրավագիտություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ իրավունքի կամ կադրերի և մասնագիտական կողմնորոշման բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Հաշվետվությունների մշակում
  - Բարեվարքություն
  - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
  - Ծրագրերի մշակում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Բանակցությունների վարում
  - Կոնֆլիկտների կառավարում
  - Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
  - Բողոքների բավարարում
  - Ժամանակի կառավարում
  - Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
  - Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության արտաքին ներգործություն ունեցող վերջնարդյունքի համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված՝ մասնագիտական եզրակացությունների տրամադրման և դիմումների քննարկման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության համապետական ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի և այլ պետական մարմինների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև մասնակցում է տարբեր մարմինների ներկայացուցիչներից ձևավորված աշխատանքային խմբերի աշխատանքներին, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներին:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում համապատասխան մարմնի առջև դրված խնդիրների լուծմանը:

Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

05-7.2.Ե-Ղ4-1 Բաժնի պետ(2022-09-07 -2024-04-01)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ | Քարտուղարություն | Տնտեսական ապահովման բաժին | Բաժնի պետ, (05-7.2.Ե-Ղ4-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

Բաժնի պետն անմիջական ենթակա և հաշվետու է Պաշտպանին: Բաժնի պետն անմիջական հաշվետու է Գլխավոր քարտուղարին:

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ

Բաժնի պետին անմիջական ենթակա և հաշվետու են բաժնի աշխատողները:

1.4 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Պաշտպանի հրամանում նշված այլ պաշտոնատար անձը:

1.5 Աշխատավայր

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Պուշկինի 56ա

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. ապահովում է Պաշտպանի աշխատակազմի վարչական շենքի, դրա հարակից շինությունների սանիտարական նորմերին և կանոններին համապատասխան վիճակը.
2. ապահովում է աշխատողների աշխատանքային անհրաժեշտ պայմանները.
3. ապահովում է Պաշտպանի աշխատակազմն ավտոտրանսպորտով, կահույքով, գույքով, տնտեսական ապրանքներով, ինչպես նաև հսկողություն է իրականացնում դրանց օգտագործման, պահպանման և ժամանակին վերանորոգման նկատմամբ.
4. ապահովում է Աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց այցելությունների, նրանց մասնակցությամբ անցկացվող արարողակարգային և այլ միջոցառումների նախապատրաստական, նյութատեխնիկական և տրանսպորտային միջոցների տրամադրման հետ կապված աշխատանքները.
5. ապահովում է Պաշտպանի աշխատակազմի գործունեության իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական պահանջարկի ձևավորման աշխատանքները.
6. մասնակցում է Աշխատակազմի նյութական արժեքների տարեկան և արտահերթ գույքագրման աշխատանքներին.
7. ապահովում է շենքերում էլեկտրաէներգիայի, ջեռուցման, ջրի խնայողական օգտագործման ուղղությամբ միջոցառումների իրականացումը.

8. ապահովում է Պաշտպանի աշխատակազմի համակարգչային, հեռախոսային և հեռուստատեսային ցանցերի, ինչպես նաև ընդգրկված տեխնիկական և ծրագրային միջոցների անխափան աշխատանքը.
9. ապահովում է համացանցի միջոցների հասանելիությունը և անվտանգությունը Պաշտպանի աշխատակազմի համակարգչային ցանցում.
10. ապահովում է պահեստային տնտեսության վարման, անհրաժեշտ գույքի ձեռքբերման, հաշվառման և ոչ պիտանի գույքի դուրսգրման հետ կապված աշխատանքները.
11. ապահովում է Պաշտպանի աշխատակազմի էլեկտրոնային փոստի անվտանգ և անխափան աշխատանքը:

Իրավունքները.

1. Բաժնի նպատակներից, խնդիրներից և գործառույթներից բխող աշխատանքների իրականացման համար՝ համապատասխան մարմիններից, Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցներից պահանջել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր, տեղեկատվություն և նյութեր.
2. կատարել հարցումներ, կազմակերպել հանդիպումներ՝ ներկայացված փաստաթղթերի և տեղեկատվության հավաստիությունն ուսումնասիրելու և ստուգելու համար.
3. մասնակցել առաջադրված խնդիրների լուծման հարցերով կազմակերպվող աշխատանքային □մասնագիտական□ հանդիպումներին, քննարկումներին, խորհրդակցություններին և այլ միջոցառումներին.
4. ապրանքանյութական արժեքների պահեստավորման և պահեստավորված միջոցների շարժի հաշվառման աշխատանքներն իրականացնելու նպատակով պահանջել և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն, պարզաբանումներ, հիմնավորումներ, նյութեր և փաստաթղթեր.
5. դիտարկել Աշխատակազմի վարչական շենքի շահագործման, ընթացիկ և կապիտալ շինարարության, կոմունիկացիաների անխափան աշխատանքի ապահովման, տարածքների աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված աշխատանքները.
6. Բաժնի իրավասություններից բխող հարցերի վերաբերյալ ներկայանալ առաջարկություններով, հաշվետվություններով, ելույթներով, զեկույցներով:

Պարտականությունները.

1. ընդունել, գրանցել, տրամադրել, առաքել, հաշվառել, արխիվացնել, ինչպես նաև մշակել ու նախապատրաստել փաստաթղթեր, հայտեր, վիճակագրական տվյալներ, եզրակացություններ, աշխատանքային ծրագրեր, այլ տեղեկատվություն և նյութեր.
2. սահմանված կարգով և ժամկետներում ապահովել ապրանքանյութական արժեքների պահեստավորման, ինչպես նաև պահեստավորված միջոցների շարժի հաշվառումը.
3. պարբերական դիտարկումների միջոցով ապահովել Աշխատակազմի ավտոտրանսպորտային միջոցների անվադողերի և կուտակչային մարտկոցների մաշվածության, ինչպես նաև վառելիքի ծախսի հաշվարկները.
4. հաստատված չափանիշներին համապատասխան Աշխատակազմի ավտոտրանսպորտային միջոցներն ապահովել վառելիքով և շահագործման համար անհրաժեշտ այլ միջոցներով.
5. հսկողություն իրականացնել Աշխատակազմի և աշխատակիցներին ամրացված գույքի օգտագործման նկատմամբ, դրանց կորստի կամ վնասման դեպքում գլխավոր քարտուղարին ներկայացնել զեկուցագրեր և առաջարկություններ.
6. ապահովել Բաժնի գործունեությանն առնչվող վիճակագրական հաշվետվությունների կազմման աշխատանքները.
7. նախապատրաստել և գլխավոր քարտուղարին ներկայացնել սարքավորումների, ծրագրային միջոցների և տեղեկատվական համակարգերի ներդրման, արդիականացման կամ նորոգման անհրաժեշտության հիմնավորումը.
8. հսկողություն իրականացնել Պաշտպանի աշխատակազմի համակարգչային ցանցի արդյունավետ և նպատակային օգտագործման նկատմամբ.
9. ապահովել Պաշտպանի աշխատակազմի համակարգչային, հեռախոսային և հեռուստատեսային ցանցերի, ինչպես նաև ընդգրկված տեխնիկական և ծրագրային

միջոցների նախագծման, կառուցման, ընդլայնման, արդիականացման և նորոգման հետ կապված աշխատանքները.
10. գլխավոր քարտուղարին ներկայացնել առաջարկություններ ընթացիկ ու հեռանկարային վերակառուցման, ինչպես նաև ընթացիկ և կապիտալ վերանորոգման վերաբերյալ.
11. իր լիազորությունների շրջանակում իրականացնել պաշտոնական հաղորդակցություն.

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ նյութատեխնիկական մատակարարման բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Բարեվարքություն
  - Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
  - Որոշումների կայացում
  - Ծրագրերի կառավարում
  - Աշխատակազմի կառավարում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Բանակցությունների վարում
  - Փոփոխությունների կառավարում
  - Կոնֆլիկտների կառավարում
  - Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
  - Ժամանակի կառավարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի և այլ պետական մարմինների ներկայացուցիչների, ինչպես նաև պատվիրակված լիազորությունների շրջանակներում մասնակցում է օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներին:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ:

Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

05-8.1.Ա-Ղ3-1 Վարչության պետ(2022-09-07)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ | Քաղաքացիական, սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանության դեպարտամենտ | Սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանության վարչություն | Վարչության պետ, (05-8.1.Ա-Ղ3-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է Դեպարտամենտի ղեկավարին:

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ

Վարչության պետին անմիջական ենթակա և հաշվետու են Վարչության աշխատողները:

1.4 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալը կամ գլխավոր մասնագետներից մեկը:

1.5 Աշխատավայր

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Պուշկինի 56ա

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. ապահովում է անձանց իրավաբանական խորհրդատվության տրամադրումն՝ իրենց իրավունքների և ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության հնարավորությունների վերաբերյալ.
2. ապահովում է անձանց ընդունելության աշխատանքները.
3. ապահովում է անձանց իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ Պաշտպանին ներկայացված դիմում-բողոքների ուսումնասիրությունը և քննարկումը, ինչպես նաև ապահովում է համապատասխան որոշումների, գրությունների և այլ փաստաթղթերի նախագծերի նախապատրաստումը.
4. անձանց իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա արագ արձագանքման շրջանակներում ապահովում է անհետաձգելի այցերի իրականացումը.
5. բողոքի ուսումնասիրության կամ քննարկման շրջանակում ապահովում է անարգել այցերի իրականացումն այնպիսի վայրեր, որտեղ առկա են կամ կարող են լինել մարդու իրավունքների և ազատությունների ենթադրյալ կամ հաստատված խախտման դեպքեր.
6. ապահովում է այցեր պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններ կամ կազմակերպություններ.

7. ապահովում է Պաշտպանի տարեկան հաղորդման և Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցների, ինչպես նաև արտահերթ հրապարակային զեկույցների կամ հաղորդումների նախագծերի մշակման աշխատանքներին մասնակցությունը՝ այցերի, ուսումնասիրությունների, արդյունքների վերլուծության և համակարգային խնդիրների վերհանման միջոցով.
8. Պաշտպանին Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը ցանկացած ձևով խոչընդոտելու, ինչպես նաև Պաշտպանին սպառնալու կամ նրան վիրավորանք հասցնելու կամ նրա նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու կոնկրետ դեպքերում ապահովում է հիմնավորումների նախապատրաստումը և դրանք Պաշտպանին ներկայացումը՝ իրավասու պետական մարմիններին ներկայացնելու և օրենքով նախատեսված ընթացակարգի շրջանակներում արարքին քրեաիրավական գնահատական տալու նպատակով.
9. Պաշտպանի պահանջած նյութերը, փաստաթղթերը, տեղեկությունները կամ պարզաբանումները «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով սահմանված ժամկետում չտրամադրելու դեպքում ապահովում է հիմնավորումների նախապատրաստումը և դրանք Պաշտպանին ներկայացումը՝ իրավասու պետական մարմիններին ներկայացնելու և օրենքով նախատեսված ընթացակարգի շրջանակներում վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու համար.
10. ապահովում է Վարչության գործառույթներին առնչվող թեժ գծի կամ այլ հեռախոսահամարով ստացված տեղեկությունների հավաքագրումը, վերլուծումը և հանձնումը քարտուղարության փաստաթղթաշրջանառության ապահովման և դիմումների ընդունման վարչությանը.
11. Պաշտպանի աշխատակազմի միջազգային համագործակցության վարչության հետ համատեղ համագործակցել Մարդու իրավունքների ազգային այլ հաստատությունների, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում գործող հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ.
12. համագործակցել Պաշտպանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների, այդ թվում՝ հասարակայնության հետ կապերի բաժնի հետ՝ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության բնագավառում իրականացված գործունեության և ակնկալվող ծրագրերի վերաբերյալ զանգվածային լրատվության և հանրային իրազեկման այլ միջոցներով լուսաբանումների մասով.

Իրավունքները.

1. Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում անարգել այցելել իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ կազմակերպություն.
2. իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրա պաշտոնատար անձից պահանջել և հնարավոր կարճ ժամկետում ու անվճար ստանալ Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքներին կամ սեփական նախաձեռնությամբ քննարկվող հարցին առնչվող անհրաժեշտ նյութեր, փաստաթղթեր, տեղեկություններ կամ պարզաբանումներ.
3. իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրա պաշտոնատար անձից, բացառությամբ դատարանների ու դատավորների, ստանալ Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքներին կամ սեփական նախաձեռնությամբ քննարկման ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ պարզաբանումներ.
4. Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում առաջարկել բողոք ներկայացրած անձին տրամադրել դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ.
5. դիմել իրավասու մարմիններին կամ կազմակերպություններին Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ քննարկման առնչությամբ պարզաբանման ենթակա հանգամանքների վերաբերյալ փորձագիտական հետազոտություններ իրականացնելու և դրանց արդյունքում կազմված եզրակացությունները ստանալու համար.

6. մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշման նախագծի հետ միասին, եթե առկա են օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված հիմքեր, պետական կամ տեղական ինքնակառավարման իրավասու մարմնին առաջարկելու նպատակով Պաշտպանին ներկայացնում են հիմնավորումներ՝ պաշտոնատար այն անձին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, որի որոշմամբ կամ գործողությամբ (անգործությամբ) խախտվել են մարդու իրավունքները և ազատությունները.
7. իր լիազորությունների շրջանակում օգտվել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, դրանց պաշտոնատար անձանց և ներկայացուցիչների մոտ անհետաձգելի ընդունելությունից.
8. արագ արձագանքման շրջանակներում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից, դրանց պաշտոնատար անձանցից և ներկայացուցիչներից ստանալ անհապաղ աջակցություն իր աշխատանքներին.
9. մասնակցել հասարակական, միջազգային կազմակերպությունների, պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, միջազգային և ազգային փորձագետների, ինչպես նաև այլ անձանց հետ հանդիպումներին ու քննարկումներին.
10. դիտարկման նպատակով ներկա լինել դռնբաց դատական նիստերին.
11. մասնակցել Պաշտպանին առընթեր խորհուրդների նիստերին.
12. առանձին բողոքների քննարկման և ուսումնասիրության նպատակով նախաձեռնել և կազմակերպել քննարկումներ համայնքներում իրավասու պետական և ոչ պետական մարմինների ներկայացուցիչների հետ: Համայնքային մարմիններում այդպիսի մարզային ստորաբաժանումների ղեկավարմամբ կամ աջակցելով.
13. կազմակերպել մասնագիտական քննարկումներ Պաշտպանին կարծիքի ներկայացված քաղաքացիական, սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանության ոլորտի իրավական ակտերի նախագծերի, անձանց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության իրավական միջոցների և ընթացակարգերի վերաբերյալ:

Պարտականությունները.

1. սահմանված ժամկետում իրականացնել դիմում-բողոքների մակագրությունը, ուսումնասիրել համապատասխան որոշումների, գրությունների նախագծերը և ներկայացնել դրանք դեպարտամենտի ղեկավարին.
2. գրավոր արձանագրել Պաշտպանին ներկայացվող բանավոր բողոքների բովանդակությունը.
3. իրականացնել դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման նկատմամբ անմիջական վերահսկողություն՝ կատարողին համապատասխան ցուցումներ, հանձնարարականներ տալու, ինչպես նաև դրանց կապակցությամբ ըստ անհրաժեշտության քննարկումներ իրականացնելու միջոցով.
4. ընդունել անձանց, տրամադրել իրավաբանական խորհրդատվություն՝ իրենց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության իրավական միջոցների և ընթացակարգերի վերաբերյալ.
5. ներկայացնել օրենսդրական ակտերի և պրակտիկայի կատարելագործման առաջարկներ՝ վերացնելու համար այցերի և բողոքների քննարկման արդյունքում վեր հանված համակարգային խնդիրները.
6. իրականացնել անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտի միջազգային փորձի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների և այլ միջազգային փաստաթղթերի ուսումնասիրություններ և ներկայացնել առաջարկություններ դրանց արդյունքների հիման վրա.
7. Պաշտպանին ներկայացնել հիմնավորումներ՝ քաղաքացիական, սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանության ոլորտի օրենսդրական խնդիրների և բացերի վերացման, ինչպես նաև ոլորտի օրենսդրության կատարելագործման նպատակով.
8. մշակել քաղաքացիական, սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանության ոլորտի՝ Պաշտպանին կարծիքի ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ նկատառումներ և առաջարկներ.

9. չհրապարակել Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների վերաբերյալ տվյալները կամ բովանդակությունը, բացառությամբ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերի.
10. արագ արձագանքման շրջանակներում կատարված այցերի արդյունքում և թեժ գծի կամ այլ հեռախոսահամարով ստացված տեղեկությունների վերաբերյալ կազմել տեղեկանքներ կամ համապատասխան այլ փաստաթղթեր.
11. կազմակերպել իր իրավասության սահմաններում իրականացվող միջոցառումների աշխատանքները.
12. նախապատրաստել Վարչության գործառույթներին առնչվող առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, գրություններ և այլ փաստաթղթեր.
13. Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում ծանոթանալ քրեական, քաղաքացիական, վարչական, կարգապահական և այլ իրավախախտումների վերաբերյալ այն գործերին, որոնց վերաբերյալ ակտերն օրինական ուժի մեջ են մտել, ինչպես նաև այն նյութերին, որոնց կապակցությամբ մերժվել է քրեական գործերի հարուցումը, կամ կարճվել է քրեական գործի վարույթը, ստանալու դրանք էլեկտրոնային կամ այլ նյութական կրիչներով.
14. իր լիազորությունների շրջանակում իրականացնել պաշտոնական հաղորդակցություն

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Ուղղություն	Գործարարություն, վարչարարություն և իրավունք
Ոլորտ	Իրավունք
Ենթաոլորտ	Իրավունք
Մասնագիտություն	042101.00.6 Իրավագիտություն կամ 042101.00.7 Իրավագիտություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ իրավունքի բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Բարեվարքություն
  - Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
  - Որոշումների կայացում
  - Ծրագրերի կառավարում
  - Աշխատակազմի կառավարում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Բանակցությունների վարում
  - Փոփոխությունների կառավարում
  - Կոնֆլիկտների կառավարում

- Բողոքների բավարարում
- Ժամանակի կառավարում
- Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
- Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի մի քանի ոլորտների համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի մի քանի ոլորտների համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն և ազդեցությունը սահմանափակվում է համապետական մակարդակով որոշակի ոլորտով:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և մարմինը:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ:

Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

05-8.1.Ա-Ղ4-1 Վարչության պետի տեղակալ(2022-09-07)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ | Քաղաքացիական, սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանության դեպարտամենտ | Սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանության վարչություն | Վարչության պետի տեղակալ, (05-8.1.Ա-Ղ4-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

Վարչության պետի տեղակալն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ

Վարչության պետի տեղակալը ենթակա և հաշվետու աշխատողներ չունի:

1.4 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի տեղակալի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետը կամ վարչության գլխավոր մասնագետը կամ վարչության ավագ մասնագետը:

1.5 Աշխատավայր

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Պուշկինի 56ա

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. համակարգում է անձանց իրավաբանական խորհրդատվության տրամադրման աշխատանքներն՝ իրենց իրավունքների և ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության հնարավորությունների վերաբերյալ.
2. համակարգում է անձանց ընդունելության իրականացման աշխատանքները.
3. համակարգում է անձանց իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ Պաշտպանին ներկայացված դիմում-բողոքների ուսումնասիրությունը և քննարկումը, ինչպես նաև իրականացնում է համապատասխան որոշումների, գրությունների և այլ փաստաթղթերի նախագծերի նախապատրաստման աշխատանքները.
10. դիտարկման նպատակով ներկա լինել դռնբաց դատական նիստերին.
11. մասնակցել Պաշտպանին առընթեր խորհուրդների նիստերին.
12. առանձին բողոքների քննարկման և ուսումնասիրության նպատակով մասնակցել համայնքներում իրավասու պետական և ոչ պետական մարմինների ներկայացուցիչների հետ քննարկումներին: Համայնքային մարմիններում այդպիսի մարզային ստորաբաժանումների ղեկավարմամբ կամ աջակցելով.

13. մասնակցել մասնագիտական քննարկումներին Պաշտպանին կարծիքի ներկայացված զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի իրավական ակտերի նախագծերի, անձանց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության իրավական միջոցների և ընթացակարգերի վերաբերյալ:

Պարտականությունները.

1. սահմանված ժամկետում կազմել համապատասխան որոշումների, գրությունների նախագծերը և ներկայացնել դրանք Բաժնի պետին.
2. գրավոր արձանագրել Պաշտպանին ներկայացվող բանավոր բողոքների բովանդակությունը.
3. իրականացնել դիմում-բողոքների ուսումնասիրություն և քննարկում, ինչպես նաև ըստ անհրաժեշտության մասնակցել դրանց կապակցությամբ քննարկումներին.
4. ընդունել անձանց, տրամադրել իրավաբանական խորհրդատվություն՝ իրենց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության իրավական միջոցների և ընթացակարգերի վերաբերյալ.
5. ներկայացնել օրենսդրական ակտերի և պրակտիկայի կատարելագործման առաջարկներ՝ վերացնելու համար այցերի և բողոքների քննարկման արդյունքում վեր հանված համակարգային խնդիրները.
6. իրականացնել անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտի միջազգային փորձի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների և այլ միջազգային փաստաթղթերի ուսումնասիրություններ և ներկայացնել առաջարկություններ դրանց արդյունքների հիման վրա.
7. Բաժնի պետին ներկայացնել հիմնավորումներ՝ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի օրենսդրական խնդիրների և բացերի վերացման, ինչպես նաև ոլորտի օրենսդրության կատարելագործման նպատակով.
8. մշակել զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի՝ Պաշտպանին կարծիքի ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ նկատառումներ և առաջարկներ.
9. արագ արձագանքման շրջանակներում կատարված այցերի արդյունքում և թեժ գծի կամ այլ հեռախոսահամարով ստացված տեղեկությունների վերաբերյալ կազմել տեղեկանքներ կամ համապատասխան այլ փաստաթղթեր.
10. նախապատրաստել Բաժնի գործառույթներին առնչվող առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, գրություններ և այլ փաստաթղթեր.
11. իր լիազորությունների շրջանակում իրականացնել պաշտոնական հաղորդակցություն:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Ուղղություն	Գործարարություն, վարչարարություն և իրավունք
Ոլորտ	Իրավունք
Ենթաոլորտ	Իրավունք
Մասնագիտություն	042101.00.6 Իրավագիտություն կամ 042101.00.7 Իրավագիտություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ իրավունքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Հաշվետվությունների մշակում
  - Բարեվարքություն
  - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
  - Ծրագրերի մշակում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Բանակցությունների վարում
  - Ծառայությունների մատուցում
  - Բողոքների բավարարում
  - Ժամանակի կառավարում
  - Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
  - Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության արտաքին ներգործություն ունեցող վերջնարդյունքի համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված՝ մասնագիտական եզրակացությունների տրամադրման և դիմումների քննարկման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության համապետական ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի և այլ պետական մարմինների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև մասնակցում է տարբեր մարմինների ներկայացուցիչներից ձևավորված աշխատանքային խմբերի աշխատանքներին, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներին:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում համապատասխան մարմնի

առջև դրված խնդիրների լուծմանը:

Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

05-8.2.Բ-Մ6-1 Մասնագետ(2022-09-07)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ | Քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտ | Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժին | Մասնագետ, (05-8.2.Բ-Մ6-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետը կամ Պաշտպանի հրամանում նշված այլ պաշտոնատար անձը:

1.4 Աշխատավայր

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Պուշկինի 56ա

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. անձանց տրամադրում է իրավաբանական խորհրդատվություն՝ իրենց իրավունքների և ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության հնարավորությունների վերաբերյալ.
2. իրականացնում է անձանց ընդունելություն.
3. օժանդակում է անձանց իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ Պաշտպանին ներկայացված դիմում-բողոքների ուսումնասիրությանը և քննարկմանը, ինչպես նաև կատարում է համապատասխան որոշումների, գրությունների և այլ փաստաթղթերի նախագծերի նախապատրաստումը.
4. անձանց իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա արագ արձագանքման շրջանակներում կատարում է անհետաձգելի այցեր.
5. բողոքի ուսումնասիրության կամ քննարկման շրջանակում կատարում է անարգել այցեր այնպիսի վայրեր, որտեղ առկա են կամ կարող են լինել մարդու իրավունքների և ազատությունների ենթադրյալ կամ հաստատված խախտման դեպքեր.
6. իրականացնում է պարբերական և ըստ անհրաժեշտության այցերի իրականացումն իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ կազմակերպություն, ներառյալ՝ զորամասեր, զինվորական հոսպիտալներ, բժշկական և ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովներ, կարգապահական վաշտեր, Ռազմական ոստիկանության ստորաբաժանումներ, զինկոմիսարիատներ և ազատությունից զրկման վայրեր.
7. մասնակցում է Պաշտպանի տարեկան հաղորդման և Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցների, ինչպես նաև

արտահերթ հրապարակային զեկույցների կամ հաղորդումների նախագծերի մշակման աշխատանքներին՝ այցերի, ուսումնասիրությունների, արդյունքների վերլուծության և համակարգային խնդիրների վերհանման միջոցով.
8. իրականացնում է Բաժնի գործառույթներին առնչվող թեժ գծի կամ այլ հեռախոսահամարով ստացված տեղեկությունների հավաքագրումը, վերլուծումը և հանձնումը քարտուղարության փաստաթղթաշրջանառության ապահովման և դիմումների ընդունման վարչությանը:

Իրավունքները.

1. Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում անարգել այցելել իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ կազմակերպություն, ներառյալ՝ զորամասեր և ազատությունից զրկման վայրեր.
2. իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրա պաշտոնատար անձից պահանջել և հնարավոր կարճ ժամկետում ու անվճար ստանալ Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքներին կամ սեփական նախաձեռնությամբ քննարկվող հարցին առնչվող անհրաժեշտ նյութեր, փաստաթղթեր, տեղեկություններ կամ պարզաբանումներ.
3. իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրա պաշտոնատար անձից, բացառությամբ դատարանների ու դատավորների, ստանալ Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքներին կամ սեփական նախաձեռնությամբ քննարկման ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ պարզաբանումներ.
4. Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում առաջարկել բողոք ներկայացրած անձին տրամադրել դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ.
5. դիմել իրավասու մարմիններին կամ կազմակերպություններին Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ քննարկման առնչությամբ պարզաբանման ենթակա հանգամանքների վերաբերյալ փորձագիտական հետազոտություններ իրականացնելու և դրանց արդյունքում կազմված եզրակացությունները ստանալու համար.
6. Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում ծանոթանալ քրեական, քաղաքացիական, վարչական, կարգապահական և այլ իրավախախտումների վերաբերյալ այն գործերին, որոնց վերաբերյալ ակտերն օրինական ուժի մեջ են մտել, ինչպես նաև այն նյութերին, որոնց կապակցությամբ մերժվել է քրեական գործերի հարուցումը, կամ կարճվել է քրեական գործի վարույթը, ստանալու դրանք էլեկտրոնային կամ այլ նյութական կրիչներով.
7. իր լիազորությունների շրջանակում օգտվել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, դրանց պաշտոնատար անձանց և ներկայացուցիչների մոտ անհետաձգելի ընդունելությունից.
8. արագ արձագանքման շրջանակներում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից, դրանց պաշտոնատար անձանցից և ներկայացուցիչներից ստանալ անհապաղ աջակցություն իր աշխատանքներին.
9. մասնակցել հասարակական, միջազգային կազմակերպությունների, պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, միջազգային և ազգային փորձագետների, ինչպես նաև այլ անձանց հետ հանդիպումներին ու քննարկումներին.
10. դիտարկման նպատակով ներկա լինել դռնբաց դատական նիստերին.
11. մասնակցել Պաշտպանին առընթեր խորհուրդների նիստերին.
12. առանձին բողոքների քննարկման և ուսումնասիրության նպատակով մասնակցել համայնքներում իրավասու պետական և ոչ պետական մարմինների ներկայացուցիչների հետ քննարկումներին: Համայնքային մարմիններում այդպիսի մարզային ստորաբաժանումների ղեկավարմամբ կամ աջակցելով.
13. մասնակցել մասնագիտական քննարկումներին Պաշտպանին կարծիքի ներկայացված զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի իրավական ակտերի

նախագծերի, անձանց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության իրավական միջոցների և ընթացակարգերի վերաբերյալ:

Պարտականությունները.

1. սահմանված ժամկետում կազմել համապատասխան որոշումների, գրությունների նախագծերը և ներկայացնել դրանք Բաժնի պետին.
2. գրավոր արձանագրել Պաշտպանին ներկայացվող բանավոր բողոքների բովանդակությունը.
3. իրականացնել դիմում-բողոքների ուսումնասիրություն և քննարկում, ինչպես նաև ըստ անհրաժեշտության մասնակցել դրանց կապակցությամբ քննարկումներին.
4. ընդունել անձանց, տրամադրել իրավաբանական խորհրդատվություն՝ իրենց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության իրավական միջոցների և ընթացակարգերի վերաբերյալ.
5. ներկայացնել օրենսդրական ակտերի և պրակտիկայի կատարելագործման առաջարկներ՝ վերացնելու համար այցերի և բողոքների քննարկման արդյունքում վեր հանված համակարգային խնդիրները.
6. իրականացնել անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտի միջազգային փորձի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների և այլ միջազգային փաստաթղթերի ուսումնասիրություններ և ներկայացնել առաջարկություններ դրանց արդյունքների հիման վրա.
7. Բաժնի պետին ներկայացնել հիմնավորումներ՝ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի օրենսդրական խնդիրների և բացերի վերացման, ինչպես նաև ոլորտի օրենսդրության կատարելագործման նպատակով.
8. մշակել զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի՝ Պաշտպանին կարծիքի ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ նկատառումներ և առաջարկներ.
9. արագ արձագանքման շրջանակներում կատարված այցերի արդյունքում և թեժ գծի կամ այլ հեռախոսահամարով ստացված տեղեկությունների վերաբերյալ կազմել տեղեկանքներ կամ համապատասխան այլ փաստաթղթեր.
10. նախապատրաստել Բաժնի գործառույթներին առնչվող առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, գրություններ և այլ փաստաթղթեր.
11. իր լիազորությունների շրջանակում իրականացնել պաշտոնական հաղորդակցություն:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

1.	Ուղղություն	Գործարարություն, վարչարարություն և իրավունք
1.	Ոլորտ	Իրավունք
1.	Ենթաոլորտ	Իրավունք
1.	Մասնագիտություն	042101.00.6 Իրավագիտություն կամ 042101.00.7 Իրավագիտություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Աշխատանքային ստաժ չի պահանջվում

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
  - Բարեվարքություն
  - Հաշվետվությունների մշակում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Բանակցությունների վարում
  - Ծառայությունների մատուցում
  - Բողոքների բավարարում
  - Ժամանակի կառավարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում է տվյալ մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև տվյալ մարմնից դուրս որպես ներկայացուցիչ շփվում է պատվիրակված լիազորությունների շրջանակներում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է մասնագիտական խնդիրների բացահայտմանը և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն:

Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

05-8.3-Ղ4-1 Վարչության պետի տեղակալ(2022-09-07 -2024-04-01)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ | Կանխարգելման ազգային մեխանիզմի իրականացման համակարգող-խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչություն | Վարչության պետի տեղակալ, (05-8.3-Ղ4-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

Վարչության պետի տեղակալն անմիջական ենթակա և հաշվետու է Պաշտպանի աշխատակազմի կանխարգելման ազգային մեխանիզմի իրականացման համակարգող-խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչության պետին:

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ

Վարչության պետի տեղակալը ենթակա և հաշվետու աշխատողներ չունի:

1.4 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի տեղակալի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետը կամ վարչության գլխավոր մասնագետը կամ վարչության ավագ մասնագետը:

1.5 Աշխատավայր

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Պուշկինի 56ա

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. համակարգում է իրեն հանձնարարված ազատությունից զրկման վայրեր, այդ թվում՝ դրանց հարակից շինություններ կամ կառույցներ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը կանխարգելելու նպատակով պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության այցերը.
2. տեսակցում և առանձնազրույցներ է ունենում ազատությունից զրկման վայրերում գտնվող անձանց հետ, ինչպես նաև համապատասխան հաստատությունների աշխատակիցների կամ նշված վայրում գտնվող կամ համապատասխան տեղեկություն ունեցող ցանկացած այլ անձի հետ.
3. անձանց իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա արագ արձագանքման շրջանակներում իրականացնում է անհետաձգելի այցեր.
4. համակարգում է Պաշտպանի որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցի, ինչպես նաև կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության ոլորտին առնչվող արտահերթ զեկույցների նախապատրաստման աշխատանքները.

5. համակարգում է կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության ոլորտին առնչվող ներպետական իրավական ակտերում օրենսդրական խնդիրների կամ բացերի վերհանումը և վերլուծությունը.
6. համակարգում է Պաշտպանին կարծիքի ներկայացված՝ կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության ոլորտին առնչվող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ նկատառումների և առաջարկների մշակումը.
7. մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշման նախագծի հետ միասին, եթե առկա են օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված հիմքեր, պետական կամ տեղական ինքնակառավարման իրավասու մարմնին առաջարկելու նպատակով Պաշտպանին ներկայացնում են հիմնավորումներ՝ պաշտոնատար այն անձին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, որի որոշմամբ կամ գործողությամբ (անգործությամբ) խախտվել են մարդու իրավունքները և ազատությունները.
8. աջակցում է Սահմանադրական դատարան ներկայացվող՝ կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության ոլորտին առնչվող դիմումների, ինչպես նաև հատուկ դիրքորոշումների նախագծերի մշակման աշխատանքներին.
9. մասնակցում է Պաշտպանի տարեկան հաղորդման, հատուկ կամ արտահերթ հրապարակային զեկույցների համար նյութերի նախապատրաստման և դրանց մշակման աշխատանքներին.
10. համակարգում է օրենսդրական բնույթի առաջարկությունների նախագծերի նախապատրաստման, ինչպես նաև համակարգային օրենսդրական խնդիրների վերլուծություն հետ կապված աշխատանքները.
11. համակարգում է ազատությունից զրկված անձանց իրավունքներին առնչվող օրենսդրական նախագծերի վերաբերյալ կարծիքների կազմման աշխատանքները.
12. համակարգում է Վարչության աշխատանքային ծրագրերի մշակման հետ կապված աշխատանքները.
13. համակարգում է անձանց իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ Պաշտպանին ներկայացված դիմում-բողոքների ուսումնասիրությունը և քննարկումը, ինչպես նաև համապատասխան որոշումների, գրությունների նախագծերի նախապատրաստման հետ կապված աշխատանքները.
14. մասնակցում է Հայաստանի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացված գանգատներով որպես երրորդ կողմ ներգրավման, ինչպես նաև Հայաստանի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման փուլում Պաշտպանի ներգրավման գործընթացին, ներառյալ՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե ներկայացման համար կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության ոլորտին առնչվող հատուկ դիրքորոշումների մշակման աշխատանքներին.
15. համակարգում է Վարչության գործառույթներին առնչվող թեժ գծի կամ այլ հեռախոսահամարով ստացված տեղեկությունների հավաքագրումը, վերլուծումը և հանձնումը քարտուղարության փաստաթղթաշրջանառության ապահովման և դիմումների ընդունման վարչությանը.
16. համակարգում է ազատությունից զրկման վայրերում գտնվող անձանց բժշկական փաստաթղթերի, այդ թվում խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արձանագրման հետ կապված բժշկական փաստաթղթերի ուսումնասիրությունը, ամբուլատոր բժշկական քարտերի, հիվանդության պատմագրերի, հիվանդության պատմագրի քաղվածքներ, այլ բժշկական փաստաթղթերի ուսումնասիրությունը:

Իրավունքները.

1. ազատությունից զրկման վայրերի քանակի, տեղակայման, ինչպես նաև այնտեղ գտնվող անձանց վերաբերյալ համապատասխան մարմիններից պահանջել և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն, պարզաբանումներ, հիմնավորումներ, նյութեր և փաստաթղթեր.
2. համակարգել ազատությունից զրկման վայրեր իրականացվող պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության այցերը.
3. համակարգել ազատությունից զրկման վայրերում գտնվող անձանց հետ, ինչպես նաև համապատասխան հաստատությունների աշխատակիցների կամ նշված վայրում գտնվող կամ համապատասխան տեղեկություն ունեցող ցանկացած այլ անձի հետ,

խորհրդապահական (կոնֆիդենցիալ) կարգով և անարգել տեսակցելու և առանձնազրույցներ ունենալու հետ կապված աշխատանքները, անհրաժեշտության դեպքում թարգմանիչ ներգրավելու, տեխնիկական միջոցներ օգտագործելու (այդ թվում՝ տեսանկարահանող և չափիչ սարքեր) հետ կապված աշխատանքները.

4. Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում առաջարկել բողոք ներկայացրած անձին տրամադրել դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ.
5. համակարգել ազատությունից զրկման վայրում գտնվող անձանց նկատմամբ վերաբերմունքի, նրանց պահման պայմանների, ինչպես նաև իրենց լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ցանկացած այլ հարցի վերաբերյալ տեղեկություններ և պարզաբանումներ պահանջելու և ստանալու հետ կապված աշխատանքները.
6. համակարգել իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրա պաշտոնատար անձից Պաշտպանի գնահատմամբ անհրաժեշտ նյութեր, փաստաթղթեր, տեղեկություններ և պարզաբանումներ պահանջելու և ստանալու հետ կապված աշխատանքները.
7. Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում համապատասխան մարմինների ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ կազմակերպել մասնագիտական քննարկումներ, ստանալ մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ.
8. իր լիազորությունների շրջանակում օգտվել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, դրանց պաշտոնատար անձանց և ներկայացուցիչների մոտ անհետաձգելի ընդունելությունից.
9. արագ արձագանքման շրջանակներում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից, դրանց պաշտոնատար անձանցից և ներկայացուցիչներից ստանալ անհապաղ աջակցություն իր աշխատանքներին:
10. Պահանջում և ստանում է անհրաժեշտ տեղեկություններ և պարզաբանումներ ազատությունից զրկված անձանց առողջական վիճակի վերաբերյալ:

Պարտականությունները.

1. այցի արդյունքների ամփոփման հիման վրա, ազատությունից զրկման ցանկացած վայրում գտնվող անձանց պահման պայմանները բարելավելու, ինչպես նաև խոշտանգումները և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը կանխարգելելու նպատակով իրավասու մարմիններին և կազմակերպություններին Պաշտպանի կողմից առաջարկություններ ներկայացնելու համար՝ համակարգել համապատասխան նախագծերի նախապատրաստման հետ կապված աշխատանքները.
2. համակարգել Պաշտպանին ներկայացվող բանավոր բողոքների բովանդակությունը գրավոր արձանագրելու հետ կապված աշխատանքները.
3. համակարգել օրենսդրական բնույթի առաջարկությունների նախագծերի նախապատրաստման, ինչպես նաև համակարգային օրենսդրական խնդիրների վերլուծության հետ կապված աշխատանքները.
4. համակարգել ազատությունից զրկված անձանց իրավունքներին առնչվող օրենսդրական նախագծերի վերաբերյալ կարծիքների նախապատրաստման հետ կապված աշխատանքները.
5. համակարգել մակագրված դիմում-բողոքների սահմանված ժամկետներում ուսումնասիրության, համապատասխան որոշումների, գրությունների նախագծերի նախապատրաստման հետ կապված աշխատանքները.
6. համակարգել կատարված այցերի արդյունքում և թեժ գծի կամ այլ հեռախոսահամարով ստացված տեղեկությունների վերաբերյալ տեղեկանքների կամ համապատասխան այլ փաստաթղթերի կազմման հետ կապված աշխատանքները.
7. համակարգել անձանց ընդունելության, իրենց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության իրավական միջոցների և ընթացակարգերի վերաբերյալ իրավաբանական խորհրդատվության տրամադրման հետ կապված աշխատանքները.

8. համակարգել կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության ոլորտին առնչվող միջազգային փորձի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային վճիռների, այլ միջազգային փաստաթղթերի ուսումնասիրման հետ կապված աշխատանքները.
9. համակարգել կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության ոլորտին առնչվող Պաշտպանին կարծիքի ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ նկատառումների և առաջարկների մշակման հետ կապված աշխատանքները.
10. համակարգել կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության ոլորտին առնչվող Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումների, ինչպես նաև հատուկ դիրքորոշումների նախագծերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացման հետ կապված աշխատանքները.
11. Հայաստանի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացված գանգատներով որպես երրորդ կողմ ներգրավման, ինչպես նաև Հայաստանի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման փուլում Պաշտպանի ներգրավման գործընթացի, ներառյալ՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե ներկայացման համար հատուկ դիրքորոշումների մշակման աշխատանքների ընթացքում հավաքագրված տեղեկություններով պայմանավորված ներկայացնել առաջարկություններ.
12. համակարգել առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, զեկուցագրերի, գրությունների և այլ փաստաթղթերի կազմման հետ կապված աշխատանքները.
13. իր լիազորությունների շրջանակում իրականացնել պաշտոնական հաղորդակցություն:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ իրավունքի բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Բարեվարքություն
  - Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
  - Որոշումների կայացում
  - Ծրագրերի կառավարում
  - Աշխատակազմի կառավարում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Բանակցությունների վարում
  - Փոփոխությունների կառավարում
  - Կոնֆլիկտների կառավարում
  - Բողոքների բավարարում
  - Ժամանակի կառավարում
  - Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում

- Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ կամ մասնակցում է այդ խնդիրների լուծմանը:

Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

05-8.3-Մ1-1 Գլխավոր մասնագետ(2022-09-07)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ | Կանխարգելման ազգային մեխանիզմի իրականացման համակարգող-խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչություն | Գլխավոր մասնագետ, (05-8.3-Մ1-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

Վարչության գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Պաշտպանի աշխատակազմի կանխարգելման ազգային մեխանիզմի իրականացման համակարգող-խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչության պետին:

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալը կամ ավագ մասնագետը:

1.4 Աշխատավայր

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Պուշկինի 56ա

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. իրականացնում է պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության այցեր ազատությունից զրկման վայրեր, այդ թվում՝ դրանց հարակից շինություններ կամ կառույցներ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը կանխարգելելու նպատակով.
2. տեսակցում և առանձնազրույցներ է ունենում ազատությունից զրկման վայրերում գտնվող անձանց հետ, ինչպես նաև համապատասխան հաստատությունների աշխատակիցների կամ նշված վայրում գտնվող կամ համապատասխան տեղեկություն ունեցող ցանկացած այլ անձի հետ.
3. անձանց իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա արագ արձագանքման շրջանակներում իրականացնում է անհետաձգելի այցեր.
4. ստանում
է տեղեկություններ ազատությունից զրկման վայրերի քանակի և տեղակայման, ինչպես նաև այնտեղ գտնվող անձանց քանակի վերաբերյալ.
5. պահանջում և ստանում է
տեղեկություններ և պարզաբանումներ ազատությունից զրկման վայրում գտնվող անձանց նկատմամբ վերաբերմունքի, նրանց պահման պայմանների, իրականացման համար անհրաժեշտ ցանկացած այլ հարցի վերաբերյալ.
6. Պաշտպանի հանձնարարությամբ ծանոթանում է իր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերին, այդ թվում՝ քրեա
7. Պաշտպանի հանձնարարությամբ մասնակցում է հասարակական, միջազգային կազմակերպությունների, պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, միջազգային և ազգային փորձագետների, ինչպես նաև այլ անձանց հետ հանդիպումներին ու քննարկումներին.
8. համագործակցում է Պաշտպանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների, այդ թվում՝ հասարակայնության հետ կապերի բաժնի հետ՝ խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման բնագավառում իրականացված գործունեության և ակնկալվող ծրագրերի վերաբերյալ զանգվածային լրատվության և հանրային իրազեկման այլ միջոցներով լուսաբանումների մասով.
9. Իրականացնում է խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելմանն առնչվող օրենսդրական ակտերի և պրակտիկայի կատարելագործման առաջարկների մշակումը՝ վերացնելու համար այցերի և բողոքների քննարկման արդյունքում վեր հանված համակարգային խնդիրները.
10. իրականացնում է խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման, ոլորտի միջազգային փորձի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների և այլ միջազգային փաստաթղթերի ուսումնասիրություններ և ներկայացնում է առաջարկություններ դրանց արդյունքների հիման վրա.
11. իրականացնում է Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցի, ինչպես նաև կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության ոլորտին առնչվող արտահերթ զեկույցների նախապատրաստման աշխատանքները.
12. իրականացնում է Սահմանադրական դատարան ներկայացվող՝ կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության ոլորտին առնչվող դիմումների, ինչպես նաև հատուկ դիրքորոշումների նախագծերի մշակման աշխատանքներին աջակցություն
13. մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշման նախագծի հետ միասին, եթե առկա են օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված հիմքեր, պետական կամ տեղական ինքնակառավարման իրավասու մարմնին առաջարկելու նպատակով Պաշտպանին ներկայացնում է հիմնավորումներ՝ պաշտոնատար այն անձին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, որի որոշմամբ կամ գործողությամբ (անգործությամբ) խախտվել են մարդու իրավունքները և ազատությունները.
14. իրականացնում է Պաշտպանի տարեկան հաղորդման, հատուկ կամ արտահերթ զեկույցների համար նյութերի նախապատրաստումը և մասնակցում է դրանց մշակման աշխատանքներին.
15. իրականացնում է խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելմանը վերաբերող գիտատեսական և կիրառական նյութերի, ձեռնարկների, տեղեկագրքերի, մենագրությունների, ժողովածուների և այլ տեղեկատվական-վերլուծական աշխատությունների մշակման աշխատանքները.
16. իրականացնում է Հայաստանի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացված գանգատներով որպես երրորդ կողմ ներգրավման, ինչպես նաև Հայաստանի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման փուլում Պաշտպանի ներգրավման գործընթացին, ներառյալ՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե ներկայացման համար կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության ոլորտին առնչվող հատուկ դիրքորոշումների մշակման աշխատանքներին մասնակցություն.
17. իրականացնում է անձանց իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ Պաշտպանին ներկայացված դիմում-բողոքների ուսումնասիրությունը, ինչպես նաև կատարում է համապատասխան որոշումների, գրությունների նախագծերի նախապատրաստման աշխատանքներ:
18. իրականացնում է իր լիազորություններին առնչվող թեժ գիծ կամ այլ հեռախոսահամարով ստացված տեղեկությունների հավաքագրումը, վերլուծումը և հանձնումը քարտուղարության փաստաթղթաշրջանառության ապահովման և դիմումների ընդունման վարչությանը:

Իրավունքները.

1. ազատությունից զրկման վայրերի քանակի, տեղակայման, ինչպես նաև այնտեղ գտնվող անձանց վերաբերյալ համապատասխան մարմիններից պահանջել և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն, պարզաբանումներ, հիմնավորումներ, նյութեր և փաստաթղթեր.
2. իրականացնել պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության այցեր ազատությունից զրկման վայրեր.
3. խորհրդապահական (կոնֆիդենցիալ) կարգով և անարգել տեսակցել ու առանձնազրույցներ իրականացնել ազատությունից զրկման վայրերում գտնվող անձանց հետ, ինչպես նաև համապատասխան հաստատությունների աշխատակիցների կամ նշված վայրում գտնվող կամ համապատասխան տեղեկություն ունեցող ցանկացած այլ անձի հետ, անհրաժեշտության դեպքում ներգրավել թարգմանիչ, օգտագործել տեխնիկական միջոցներ, այդ թվում՝ տեսանկարահանող և չափիչ սարքեր.
4. պահանջել և ստանալ տեղեկություններ և պարզաբանումներ ազատությունից զրկման վայրում գտնվող անձանց նկատմամբ վերաբերմունքի, նրանց պահման պայմանների, ինչպես նաև իրենց լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ցանկացած այլ հարցի վերաբերյալ.
5. իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրա պաշտոնատար անձից պահանջել և ստանալ Պաշտպանի գնահատմամբ անհրաժեշտ նյութեր, փաստաթղթեր, տեղեկություններ կամ պարզաբանումներ.
6. Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում առաջարկել բողոք ներկայացրած անձին տրամադրել դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ.
7. Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում համապատասխան մարմինների ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ կազմակերպել մասնագիտական քննարկումներ, ստանալ մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ.
8. իր լիազորությունների շրջանակում օգտվել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, դրանց պաշտոնատար անձանց և ներկայացուցիչների մոտ անհետաձգելի ընդունելությունից.
9. արագ արձագանքման շրջանակներում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից, դրանց պաշտոնատար անձանցից և ներկայացուցիչներից ստանալ անհապաղ աջակցություն իր աշխատանքներին:

Պարտականությունները.

1. նախապատրաստել ազատությունից զրկված անձանց իրավունքներին առնչվող օրենսդրական նախագծերի վերաբերյալ կարծիքներ.
2. գրավոր արձանագրել Պաշտպանին ներկայացվող բանավոր բողոքների բովանդակությունը.
3. այցի արդյունքների ամփոփման հիման վրա, ազատությունից զրկման ցանկացած վայրում գտնվող անձանց պահման պայմանները բարելավելու, ինչպես նաև խոշտանգումները և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը կանխարգելելու նպատակով իրավասու մարմիններին և կազմակերպություններին Պաշտպանի կողմից առաջարկություններ ներկայացնելու համար՝ նախապատրաստել համապատասխան նախագծեր.
4. կատարել համակարգային խնդիրների վերլուծություն և նախապատրաստել առաջարկությունների նախագծեր.
5. նախապատրաստել ազատությունից զրկված անձանց իրավունքներին առողջության պահպանման իրավունքին առնչվող նախագծերի վերաբերյալ կարծիքներ.
6. սահմանված ժամկետներում ուսումնասիրում է մակագրված դիմում-բողոքները, նախապատրաստում է համապատասխան որոշումների, գրությունների նախագծերը և ներկայացնում դրանք Վարչության պետին.
7. կատարված այցերի արդյունքում և թեժ գծի կամ այլ հեռախոսահամարով ստացված տեղեկությունների վերաբերյալ կազմել տեղեկանքներ կամ համապատասխան այլ փաստաթղթեր.
8. իրականացնել անձանց ընդունելություն, տրամադրել խորհրդատվություն.
9. ուսումնասիրել կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության ոլորտին առնչվող միջազգային փորձը.
10. Հայաստանի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացված գանգատներով որպես երրորդ կողմ ներգրավման, ինչպես նաև Հայաստանի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման փուլում Պաշտպանի ներգրավման գործընթացի, ներառյալ՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե ներկայացման համար հատուկ դիրքորոշումների մշակման աշխատանքների ընթացքում հավաքագրված տեղեկություններով պայմանավորված ներկայացնել առաջարկություններ.
11. կազմել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր, գրություններ և այլ փաստաթղթեր.
12. իր լիազորությունների շրջանակում իրականացնել պաշտոնական հաղորդակցություն:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Ուղղություն	Գործարարություն, վարչարարություն և իրավունք
Ոլորտ	Իրավունք
Ենթաոլորտ	Իրավունք
Մասնագիտություն	042101.00.6 Իրավագիտություն կամ 042101.00.7 Իրավագիտություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ իրավունքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Հաշվետվությունների մշակում
  - Բարեվարքություն
  - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
  - Ծրագրերի մշակում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Բանակցությունների վարում
  - Կոնֆլիկտների կառավարում

- Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
- Բողոքների բավարարում
- Ժամանակի կառավարում
- Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
- Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
- Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության արտաքին ներգործություն ունեցող վերջնարդյունքի համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված՝ մասնագիտական եզրակացությունների տրամադրման և դիմումների քննարկման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության համապետական ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի և այլ պետական մարմինների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև մասնակցում է տարբեր մարմինների ներկայացուցիչներից ձևավորված աշխատանքային խմբերի աշխատանքներին, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներին:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում համապատասխան մարմնի առջև դրված խնդիրների լուծմանը:

Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

05-8.3-Մ3-1 Ավագ մասնագետ(2022-09-07 -2024-04-01)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ | Կանխարգելման ազգային մեխանիզմի իրականացման համակարգող-խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչություն | Ավագ մասնագետ, (05-8.3-Մ3-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

Վարչության ավագ մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Պաշտպանի աշխատակազմի կանխարգելման ազգային մեխանիզմի իրականացման համակարգող-խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչության պետին:

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության գլխավոր մասնագետը կամ մասնագետը:

1.4 Աշխատավայր

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Պուշկինի 56ա

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. իրականացնում է պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության այցեր ազատությունից զրկման վայրեր, այդ թվում՝ դրանց հարակից շինություններ կամ կառույցներ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը կանխարգելելու նպատակով.
2. տեսակցում և առանձնազրույցներ է ունենում ազատությունից զրկման վայրերում գտնվող անձանց հետ, ինչպես նաև համապատասխան հաստատությունների աշխատակիցների կամ նշված վայրում գտնվող կամ համապատասխան տեղեկություն ունեցող ցանկացած այլ անձի հետ.
3. անձանց իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա արագ արձագանքման շրջանակներում իրականացնում է անհետաձգելի այցեր.
4. իրականացնում է Պաշտպանի որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցի, ինչպես նաև կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության ոլորտին առնչվող արտահերթ զեկույցների նախապատրաստման աշխատանքները.
5. իրականացնում է կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության ոլորտին առնչվող ներպետական իրավական ակտերում օրենսդրական խնդիրների կամ բացերի վերհանումը և վերլուծությունը.

6. իրականացնում է Պաշտպանին կարծիքի ներկայացված՝ կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության ոլորտին առնչվող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ նկատառումների և առաջարկների մշակումը.
7. մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշման նախագծի հետ միասին, եթե առկա են օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված հիմքեր, պետական կամ տեղական ինքնակառավարման իրավասու մարմնին առաջարկելու նպատակով Պաշտպանին ներկայացնում են հիմնավորումներ՝ պաշտոնատար այն անձին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, որի որոշմամբ կամ գործողությամբ (անգործությամբ) խախտվել են մարդու իրավունքները և ազատությունները.
8. աջակցում է Սահմանադրական դատարան ներկայացվող՝ կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության ոլորտին առնչվող դիմումների, ինչպես նաև հատուկ դիրքորոշումների նախագծերի մշակման աշխատանքներին.
9. մասնակցում է Պաշտպանի տարեկան հաղորդման, հատուկ կամ արտահերթ հրապարակային զեկույցների համար նյութերի նախապատրաստման և դրանց մշակման աշխատանքներին.
10. իրականացնում է օրենսդրական բնույթի առաջարկությունների նախագծերի նախապատրաստման, ինչպես նաև համակարգային օրենսդրական խնդիրների վերլուծություն հետ կապված աշխատանքները.
11. իրականացնում է ազատությունից զրկված անձանց իրավունքներին առնչվող օրենսդրական նախագծերի վերաբերյալ կարծիքների կազմման աշխատանքները.
12. մասնակցում է Վարչության աշխատանքային ծրագրերի մշակմանը.
13. իրականացնում է անձանց իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ Պաշտպանին ներկայացված դիմում-բողոքների ուսումնասիրություն և քննարկում, ինչպես նաև համապատասխան որոշումների, գրությունների նախագծերի նախապատրաստման հետ կապված աշխատանքները.
14. մասնակցում է Հայաստանի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացված գանգատներով որպես երրորդ կողմ ներգրավման, ինչպես նաև Հայաստանի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման փուլում Պաշտպանի ներգրավման գործընթացին, ներառյալ՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե ներկայացման համար կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության ոլորտին առնչվող հատուկ դիրքորոշումների մշակման աշխատանքներին.
15. իրականացնում է Վարչության գործառույթներին առնչվող թեժ գծի կամ այլ հեռախոսահամարով ստացված տեղեկությունների հավաքագրումը, վերլուծումը և հանձնումը քարտուղարության փաստաթղթաշրջանառության ապահովման և դիմումների ընդունման վարչությանը.

Իրավունքները.

1. ազատությունից զրկման վայրերի քանակի, տեղակայման, ինչպես նաև այնտեղ գտնվող անձանց վերաբերյալ համապատասխան մարմիններից պահանջել և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն, պարզաբանումներ, հիմնավորումներ, նյութեր և փաստաթղթեր.
2. իրականացնել պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության այցեր ազատությունից զրկման վայրեր.
3. խորհրդապահական (կոնֆիդենցիալ) կարգով և անարգել տեսակցել ու առանձնազրույցներ իրականացնել ազատությունից զրկման վայրերում գտնվող անձանց հետ, ինչպես նաև համապատասխան հաստատությունների աշխատակիցների կամ նշված վայրում գտնվող կամ համապատասխան տեղեկություն ունեցող ցանկացած այլ անձի հետ, օգտագործել տեխնիկական միջոցներ, այդ թվում՝ տեսանկարահանող և չափիչ սարքեր.
4. պահանջել և ստանալ տեղեկություններ և պարզաբանումներ ազատությունից զրկման վայրում գտնվող անձանց նկատմամբ վերաբերմունքի, նրանց պահման պայմանների, ինչպես նաև իրենց լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ցանկացած այլ հարցի վերաբերյալ.
5. իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրա պաշտոնատար անձից պահանջել և ստանալ Պաշտպանի գնահատմամբ անհրաժեշտ նյութեր, փաստաթղթեր, տեղեկություններ և պարզաբանումներ.

6. Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում համապատասխան մարմինների ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ մասնակցել մասնագիտական քննարկումներին, ստանալ մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ.
7. իր լիազորությունների շրջանակում օգտվել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, դրանց պաշտոնատար անձանց և ներկայացուցիչների մոտ անհետաձգելի ընդունելությունից.
8. արագ արձագանքման շրջանակներում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից, դրանց պաշտոնատար անձանցից և ներկայացուցիչներից ստանալ անհապաղ աջակցություն իր աշխատանքներին:

Պարտականությունները.

1. նախապատրաստել ազատությունից զրկված անձանց իրավունքներին առնչվող օրենսդրական նախագծերի վերաբերյալ կարծիքներ.
2. կատարել համակարգային օրենսդրական խնդիրների վերլուծություն և նախապատրաստել օրենսդրական բնույթի առաջարկությունների նախագծեր.
3. այցի արդյունքների ամփոփման հիման վրա, ազատությունից զրկման ցանկացած վայրում գտնվող անձանց պահման պայմանները բարելավելու, ինչպես նաև խոշտանգումները և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը կանխարգելելու նպատակով իրավասու մարմիններին և կազմակերպություններին Պաշտպանի կողմից առաջարկություններ ներկայացնելու համար՝ նախապատրաստել համապատասխան նախագծեր.
4. սահմանված ժամկետներում իրականացնել մակագրված դիմում-բողոքների ուսումնասիրություն, համապատասխան որոշումների, գրությունների նախագծերի նախապատրաստման աշխատանքներ և ներկայացնել դրանք Վարչության պետին.
5. կատարված այցերի արդյունքում և թեժ գծի կամ այլ հեռախոսահամարով ստացված տեղեկությունների վերաբերյալ կազմել տեղեկանքներ կամ համապատասխան այլ փաստաթղթեր.
6. իրականացնել անձանց ընդունելություն, տրամադրել իրավաբանական խորհրդատվություն՝ իրենց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության իրավական միջոցների և ընթացակարգերի վերաբերյալ.
7. ուսումնասիրել կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության ոլորտին առնչվող միջազգային փորձը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային վճիռները, այլ միջազգային փաստաթղթերը.
8. մշակում է կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության ոլորտին առնչվող Պաշտպանին կարծիքի ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ նկատառումները և առաջարկները.
9. ներկայացնում է կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության ոլորտին առնչվող Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումների, ինչպես նաև հատուկ դիրքորոշումների նախագծերի վերաբերյալ առաջարկությունները.
10. Հայաստանի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացված գանգատներով որպես երրորդ կողմ ներգրավման, ինչպես նաև Հայաստանի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման փուլում Պաշտպանի ներգրավման գործընթացի, ներառյալ՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե ներկայացման համար հատուկ դիրքորոշումների մշակման աշխատանքների ընթացքում հավաքագրված տեղեկություններով պայմանավորված ներկայացնել առաջարկություններ.
11. կազմել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր, գրություններ և այլ փաստաթղթեր.
12. իր լիազորությունների շրջանակում իրականացնել պաշտոնական հաղորդակցություն:

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Ուղղություն	Գործարարություն, վարչարարություն և իրավունք
Ոլորտ	Իրավունք
Ենթաոլորտ	Իրավունք
Մասնագիտություն	042101.00.6 Իրավագիտություն կամ 042101.00.7 Իրավագիտություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ իրավունքի բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Հաշվետվությունների մշակում
  - Բարեվարքություն
  - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Բանակցությունների վարում
  - Ծառայությունների մատուցում
  - Բողոքների բավարարում
  - Ժամանակի կառավարում
  - Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված՝ մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը:

Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր
05-8.3-Մ6-1 Մասնագետ(2022-09-07 -2024-04-01)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ | Կանխարգելման ազգային մեխանիզմի իրականացման համակարգող-խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչություն | Մասնագետ, (05-8.3-Մ6-1)
1.2 Ենթակա և հաշվետու է

Վարչության մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Պաշտպանի աշխատակազմի կանխարգելման ազգային մեխանիզմի իրականացման համակարգող-խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչության պետին:

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության գլխավոր մասնագետը կամ ավագ մասնագետը:

1.4 Աշխատավայր

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Պուշկինի 56ա

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. կատարում է պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության այլեր ազատությունից զրկման վայրեր, այդ թվում՝ դրանց հարակից շինություններ կամ կառույցներ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը կանխարգելելու նպատակով.
2. մասնակցում է Պաշտպանի որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցի, ինչպես նաև կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության որոշումին առնչվող արտահերթ զեկույցների նախապատրաստման աշխատանքներին.
3. անձանց իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա արագ արձագանքման շրջանակներում իրականացնում է անհետաձգելի այցեր.
4. կատարում է կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության ոլորտին առնչվող իրավական ակտերում օրենսդրական խնդիրների կամ բացերի վերհանումը և վերլուծությունը.
5. մասնակցում է Պաշտպանին կարծիքի ներկայացված՝ կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության ոլորտին առնչվող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ նկատառումների և առաջարկների մշակման աշխատանքներին.
6. մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշման նախագծի հետ միասին, եթե առկա են օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված հիմքեր, պետական կամ տեղական ինքնակառավարման իրավասու մարմնին առաջարկելու նպատակով Պաշտպանին ներկայացնում են հիմնավորումներ՝ պաշտոնատար այն անձին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, որի որոշմամբ կամ գործողությամբ (անգործությամբ) խախտվել են մարդու իրավունքները և ազատությունները.
7. մասնակցում է Պաշտպանի տարեկան հաղորդման, հատուկ կամ արտահերթ հրապարակային զեկույցների համար նյութերի նախապատրաստման և դրանց մշակման աշխատանքներին.
8. մասնակցում է ազատությունից զրկված անձանց իրավունքներին առնչվող օրենսդրական նախագծերի վերաբերյալ կարծիքների կազմման աշխատանքներին.
9. իրականացնում է Վարչության աշխատանքային ծրագրերի մշակմանը.
Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ միջազգային կապերի (միջազգային հարաբերությունների) կամ իրավունքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Հաշվետվությունների մշակում
  - Բարեվարքություն
  - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
  - Ծրագրերի մշակում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Բանակցությունների վարում
  - Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
  - Ժամանակի կառավարում
  - Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
  - Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության արտաքին ներգործություն ունեցող վերջնարդյունքի համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված՝ մասնագիտական եզրակացությունների տրամադրման և դիմումների քննարկման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության համապետական ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի և այլ պետական մարմինների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև մասնակցում է տարբեր մարմինների ներկայացուցիչներից ձևավորված աշխատանքային խմբերի աշխատանքներին, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներին:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում համապատասխան մարմնի առջև դրված խնդիրների լուծմանը:

Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

05-8.4-Մ3-1 Ավագ մասնագետ(2022-09-07 -2024-04-01)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ | Միջազգային համագործակցության վարչություն | Ավագ մասնագետ, (05-8.4-Մ3-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

Վարչության ավագ մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության գլխավոր մասնագետը կամ մասնագետը:

1.4 Աշխատավայր

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Պուշկինի 56ա

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. իրականացնում է Պաշտպանի միջազգային հարաբերությունների ոլորտում քաղաքականության իրականացման հետ կապված աշխատանքները.
2. իրականացնում է Հայաստանում մարդու իրավունքների ու ազատությունների վիճակի և Պաշտպանի աշխատակազմի իրականացրած աշխատանքների մասին միջազգային գործընկերներին իրազեկման աշխատանքները.
3. կատարում է միջազգային գործունեությանն առնչվող տեղեկատվության արձանագրումը, հավաքագրումը և ամփոփումը.
4. իրականացնում է Պաշտպանի աշխատակազմի մամուլի հաղորդագրությունների և այլ նյութերի թարգմանության աշխատանքները.
5. մասնակցում է մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությանն ու խթանմանն ուղղված ծրագրային առաջարկների կազմման աշխատանքներին.
6. մասնակցում է Պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցների աշխատանքներին՝ միջազգային հանրային և միջազգային մարդասիրական իրավունքի կարգավորումների և միջազգային ատյանների նախադեպային որոշումների ուսումնասիրման և վերլուծության միջոցով.
7. իրականացնում է մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության վերաբերյալ միջազգային կազմակերպություններին ներկայացվող Պաշտպանի դիրքորոշումների, իրավական վերլուծությունների և առանձին իրավունքների պաշտպանության վիճակի վերաբերյալ այլ փաստաթղթերի մշակման աշխատանքները.
8. մասնակցում է Պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումների և արտահերթ հրապարակային զեկույցների նախապատրաստման աշխատանքներին.

9. իրականացնում է մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության ոլորտին առնչվող առանձին հարցերի վերաբերյալ մշտադիտարկումները և համապատասխան զեկույցները ներկայացնում Վարչության պետին.
10. մասնակցում է մարդու իրավունքների ու ազատությունների բնագավառում Պաշտպանի անունից կնքվող համագործակցության հուշագրերի նախագծերի կազմմանը:

Իրավունքները.

1. Աշխատակազմի և միջազգային ու օտարերկրյա կազմակերպությունների միջև միջազգային ծրագրերի հետ կապված պահանջել և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն, պարզաբանումներ, հիմնավորումներ, մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ.
2. թարգմանչական աշխատանքների իրականացման շրջանակներում պահանջել և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն համապատասխան ստորաբաժանումներից.
3. մասնակցել միջազգային և օտարերկրյա պատվիրակությունների հետ կազմակերպված աշխատանքային քննարկումներին.
4. մարդու իրավունքների ու ազատությունների բնագավառում Պաշտպանի անունից կնքվող համագործակցության հուշագրերի նախագծի կազմման աշխատանքներն իրականացնելիս համագործակցել մյուս կողմի հետ, Վարչության պետին ներկայացնել համապատասխան դիտողություններ և առաջարկություններ:

Պարտականությունները.

1. վարել միջազգային, այդ թվում ոչ կառավարական կազմակերպությունների, ինչպես նաև Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների հետ համատեղ իրականացվող ծրագրերը.
2. աջակցել Պաշտպանի և աշխատակազմի գործունեությանն առնչվող միջազգային հանդիպումների, կոնֆերանսների, սեմինարների, քննարկումների, աշխատաժողովների, այցերի և այլ միջոցառումների կազմակերպմանը.
3. նախապատրաստել Պաշտպանի գործուղումների, ինչպես նաև պաշտոնական հանդիպումների և միջոցառումների բովանդակային մասը.
4. դասակարգել գործուղումների հաշվետվությունները և միջազգային գործունեությանն առնչվող արդյունքները.
5. Հայաստանի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացված գանգատներով որպես երրորդ կողմ ներգրավման, ինչպես նաև Հայաստանի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման փուլում Պաշտպանի ներգրավման գործընթացի, ներառյալ՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե ներկայացման համար հատուկ դիրքորոշումների մշակման աշխատանքների ընթացքում հավաքագրել անհրաժեշտ տեղեկությունները.
6. կազմել Աշխատակազմի և միջազգային ու օտարերկրյա կազմակերպությունների կողմից համատեղ իրականացվող ծրագրերի նախագծերը.
7. ուսումնասիրել օտարերկրյա պետությունների մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտում օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը և արդյունքները ներկայացնել Վարչության պետին.
8. նախապատրաստել միջազգային հանրային իրավունքի, միջազգային մարդասիրական իրավունքի, մարդու իրավունքների ու ազատությունների ոլորտում միջազգային և եվրոպական կարգավորումների վերաբերյալ կազմել եզրակացությունների նախագծեր և դրանք ներկայացնել Վարչության պետին.
9. կազմել մարդու իրավունքների ու ազատությունների բնագավառում Պաշտպանի անունից կնքվող համագործակցության հուշագրերի նախագծեր և դրանք ներկայացնել Վարչության պետին.
10. նախապատրաստել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, գրություններ և այլ փաստաթղթեր.
11. հավաքագրել օտարերկրյա պետությունների մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտում օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվություն.

12. Պաշտպանի տարեկան հաղորդման, ինչպես նաև հատուկ կամ արտահերթ զեկույցների, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը վերաբերող գիտատեսական և կիրառական նյութերի, ձեռնարկների, տեղեկագրերի, մենագրությունների, ժողովածուների և այլ տեղեկատվական-վերլուծական աշխատությունների մշակման և կազմման աշխատանքներն իրականացնելու նպատակով հավաքագրել անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր.
13. իր լիազորությունների շրջանակում իրականացնել պաշտոնական հաղորդակցություն:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Ուղղություն	Գործարարություն, վարչարարություն և իրավունք	Սոցիալական գիտություններ, լրագրություն և տեղեկատվական գիտություններ
Ոլորտ	Իրավունք	Սոցիալական և վարքաբանական գիտություններ
Ենթաոլորտ	Իրավունք	Միջոլորտային մասնագիտություններ
Մասնագիտություն	042101.00.6 Իրավագիտություն կամ 042101.00.7 Իրավագիտություն	Միջազգային հարաբերություններ

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ միջազգային կապերի (միջազգային հարաբերությունների) կամ իրավունքի բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Հաշվետվությունների մշակում
  - Բարեվարքություն
  - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Բանակցությունների վարում
  - Ժամանակի կառավարում
  - Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
  - Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում

- Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման համար:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը:

Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

05-8.4-Մ6-1 Մասնագետ(2022-09-07)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ | Միջազգային համագործակցության վարչություն | Մասնագետ, (05-8.4-Մ6-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության գլխավոր մասնագետը կամ ավագ մասնագետը:

1.4 Աշխատավայր

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Պուշկինի 56ա

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. մասնակցում է Պաշտպանի միջազգային հարաբերությունների ոլորտում քաղաքականության իրականացման հետ կապված աշխատանքներին.
2. մասնակցում է Հայաստանում մարդու իրավունքների ու ազատությունների վիճակի և Պաշտպանի աշխատակազմի իրականացրած աշխատանքների մասին միջազգային գործընկերներին իրազեկման աշխատանքներին.
3. արձանագրում, հավաքագրում և ամփոփում է միջազգային գործունեությանն առնչվող տեղեկատվությունը.
4. մասնակցում է Պաշտպանի աշխատակազմի մամուլի հաղորդագրությունների և այլ նյութերի թարգմանության աշխատանքներին.
5. մասնակցում է մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությանն ու խթանմանն ուղղված ծրագրային առաջարկների կազմման աշխատանքներին.
6. մասնակցում է Պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցների մշակման աշխատանքներին՝ միջազգային հանրային և միջազգային մարդասիրական իրավունքի կարգավորումների և միջազգային ատյանների նախադեպային որոշումների ուսումնասիրման և վերլուծության միջոցով.
7. մասնակցում է մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության միջազգային կազմակերպություններին ներկայացվող Պաշտպանի դիրքորոշումների, իրավական վերլուծությունների և առանձին իրավունքների պաշտպանության վիճակի վերաբերյալ այլ փաստաթղթերի մշակման աշխատանքներին.
8. մասնակցում է Պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումների և արտահերթ հրապարակային զեկույցների նախապատրաստման աշխատանքներին:

Իրավունքները.

1. Աշխատակազմի և միջազգային ու օտարերկրյա կազմակերպությունների միջև միջազգային ծրագրերի հետ կապված պահանջել և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն, պարզաբանումներ, հիմնավորումներ, մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ.
2. մասնակցել միջազգային և օտարերկրյա պատվիրակությունների հետ կազմակերպված աշխատանքային քննարկումներին.
3. հավաքագրել օտարերկրյա պետությունների՝ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտում օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվություն.
4. Պաշտպանի տարեկան հաղորդման, ինչպես նաև հատուկ կամ արտահերթ զեկույցների, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը վերաբերող գիտատեսական և կիրառական նյութերի, ձեռնարկների, տեղեկագրերի, մենագրությունների, ժողովածուների և այլ տեղեկատվական-վերլուծական աշխատությունների մշակման և կազմման աշխատանքներն իրականացնելու նպատակով հավաքագրել անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր.
5. մարդու իրավունքների ու ազատությունների բնագավառում Պաշտպանի անունից կնքվող համագործակցության հուշագրերի նախագծի կազմման աշխատանքներն իրականացնելիս համագործակցել մյուս կողմի հետ, Վարչության պետին ներկայացնել համապատասխան դիտողություններ և առաջարկություններ:

Պարտականությունները.

1. վարել միջազգային, այդ թվում՝ ոչ կառավարական կազմակերպությունների, ինչպես նաև Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների հետ համատեղ իրականացվող ծրագրերը.
2. աջակցել Պաշտպանի և աշխատակազմի գործունեությանն առնչվող միջազգային հանդիպումների, կոնֆերանսների, սեմինարների, քննարկումների, աշխատաժողովների, այցերի և այլ միջոցառումների կազմակերպմանը.
3. նախապատրաստել Պաշտպանի գործուղումների, ինչպես նաև պաշտոնական հանդիպումների և միջոցառումների բովանդակային մասը.
4. դասակարգել գործուղումների հաշվետվությունները և միջազգային գործունեությանն առնչվող արդյունքները.
5. Հայաստանի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացված գանգատներով որպես երրորդ կողմ հանդես գալու, ինչպես նաև Հայաստանի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման փուլում Պաշտպանի ներգրավման գործընթացների, ներառյալ՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե ներկայացման համար հատուկ դիրքորոշումների մշակման աշխատանքների ընթացքում հավաքագրել անհրաժեշտ տեղեկությունները.
6. կազմել Աշխատակազմի և միջազգային ու օտարերկրյա կազմակերպությունների կողմից համատեղ իրականացվող ծրագրերի նախագծերը.
7. ուսումնասիրել օտարերկրյա պետությունների մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտում օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը և արդյունքները ներկայացնել Վարչության պետին.
8. նախապատրաստել միջազգային հանրային իրավունքի, միջազգային մարդասիրական իրավունքի, մարդու իրավունքների ու ազատությունների ոլորտում միջազգային և եվրոպական կարգավորումների վերաբերյալ կազմել եզրակացությունների նախագծեր և դրանք ներկայացնել Վարչության պետին.
9. կազմել մարդու իրավունքների ու ազատությունների բնագավառում Պաշտպանի անունից կնքվող համագործակցության հուշագրերի նախագծեր և դրանք ներկայացնել Վարչության պետին.
10. նախապատրաստել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, գրություններ և այլ փաստաթղթեր.
11. իր լիազորությունների շրջանակում իրականացնել պաշտոնական հաղորդակցություն:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Ուղղություն	Գործարարություն, վարչարարություն և իրավունք	Սոցիալական գիտություններ, լրագրություն և տեղեկատվական գիտություններ
Ոլորտ	Իրավունք	Սոցիալական և վարքաբանական գիտություններ
Ենթաոլորտ	Իրավունք	Միջոլորտային մասնագիտություններ
Մասնագիտություն	042101.00.6 Իրավագիտություն կամ 042101.00.7 Իրավագիտություն	Միջազգային հարաբերություններ

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Աշխատանքային ստաժ չի պահանջվում

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
  - Բարեվարքություն
  - Հաշվետվությունների մշակում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Բանակցությունների վարում
  - Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
  - Ժամանակի կառավարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում է տվյալ մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև տվյալ մարմնից դուրս որպես ներկայացուցիչ շփվում է պատվիրակված լիազորությունների շրջանակներում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է մասնագիտական խնդիրների բացահայտմանը և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն:

Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

05-8.5-Ղ3-1 Վարչության պետ(2022-09-07)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ | Կոնվենցիոն մանդատների ապահովման վարչություն | Վարչության պետ, (05-8.5-Ղ3-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է Պաշտպանին:

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ

Վարչության պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են Վարչության բաժինների պետերը:

1.4 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության բաժինների պետերից մեկը:

1.5 Աշխատավայր

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Պուշկինի 56ա

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. ապահովում է անձանց իրավաբանական խորհրդատվության տրամադրումն՝ իրենց իրավունքների և ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության հնարավորությունների վերաբերյալ.
2. ապահովում է անձանց ընդունելության աշխատանքները.
3. ապահովում է Պաշտպանի՝ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկման, երեխաների իրավունքների խախտումների կանխարգելման և պաշտպանության լիազորությունների իրականացումը, ինչպես նաև ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեին ներկայացվող զեկույցների, հաղորդումների մշակման աշխատանքները.
4. ապահովում է Պաշտպանի՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկման, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտումների կանխարգելման և պաշտպանության լիազորությունների իրականացումը, ինչպես նաև ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեին ներկայացվող զեկույցների, հաղորդումների մշակման աշխատանքները.
5. ապահովում է երեխաների և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ Պաշտպանին ներկայացված դիմում-բողոքների ուսումնասիրությունը և քննարկումը, ինչպես նաև ապահովում է

համապատասխան որոշումների, գրությունների և այլ փաստաթղթերի նախագծերի նախապատրաստումը.

6. երեխաների և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա արագ արձագանքման շրջանակներում ապահովում է անհետաձգելի այցերի իրականացումը.
7. բողոքի ուսումնասիրության կամ քննարկման շրջանակում ապահովում է անարգել այցերի իրականացումն այնպիսի վայրեր, որտեղ առկա են կամ կարող են լինել մարդու իրավունքների և ազատությունների ենթադրյալ կամ հաստատված խախտման դեպքեր.
8. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանված իրավասությունների շրջանակում ապահովում է պարբերական և ըստ անհրաժեշտության այցերի իրականացումը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններ կամ կազմակերպություններ, ներառյալ՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, հանրակրթական ուսումնական հաստատություններ, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց խնամք իրականացնող հաստատություններ, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական, առողջապահական և վերականգնողական ծառայություններ մատուցող հաստատություններ.
9. մասնակցում է Պաշտպանի տարեկան հաղորդման և արտահերթ հրապարակային զեկույցների կամ հաղորդումների նախագծերի մշակման աշխատանքներին՝ մշտադիտարկման այցերի, ուսումնասիրությունների արդյունքների վերլուծության և համակարգային խնդիրների վերհանման միջոցով.
10. մասնակցում է Պաշտպանին առընթեր խորհուրդների նիստերին.
11. մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշման նախագծի հետ միասին, եթե առկա են օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված հիմքեր, պետական կամ տեղական ինքնակառավարման իրավասու մարմնին առաջարկելու նպատակով Պաշտպանին ներկայացնում են հիմնավորումներ՝ պաշտոնատար այն անձին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, որի որոշմամբ կամ գործողությամբ (անգործությամբ) խախտվել են մարդու իրավունքները և ազատությունները.
12. Պաշտպանին Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը ցանկացած ձևով խոչընդոտելու, ինչպես նաև Պաշտպանին սպառնալու կամ նրան վիրավորանք հասցնելու կամ նրա նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու կոնկրետ դեպքերում ապահովում է հիմնավորումների նախապատրաստումը և դրանք Պաշտպանին ներկայացումը՝ իրավասու պետական մարմիններին ներկայացնելու և օրենքով նախատեսված ընթացակարգի շրջանակներում արարքին քրեաիրավական գնահատական տալու նպատակով.
13. Պաշտպանի պահանջած նյութերը, փաստաթղթերը, տեղեկությունները կամ պարզաբանումները «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով սահմանված ժամկետում չտրամադրելու դեպքում ապահովում է հիմնավորումների նախապատրաստումը և դրանք Պաշտպանին ներկայացումը՝ իրավասու պետական մարմիններին ներկայացնելու և օրենքով նախատեսված ընթացակարգի շրջանակներում վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը Պաշտպանի հետ քննարկելու համար.
14. ապահովում է Երեխաների օմբուդսմանների եվրոպական ցանցի կառավարման ու ղեկավար մարմինների աշխատանքներին մասնակցությունը.
15. ապահովում է Վարչության գործառույթներին առնչվող թեժ գծի կամ այլ հեռախոսահամարով ստացված տեղեկությունների հավաքագրումը, վերլուծումը և հանձնումը քարտուղարության փաստաթղթաշրջանառության ապահովման և դիմումների ընդունման վարչությանը:
16. Ապահովում է Պաշտպանի աշխատակազմի միջազգային համագործակցության վարչության հետ համագործակցությունը Մարդու իրավունքների ազգային այլ հաստատությունների և միջազգային կազմակերպությունների հետ.
17. Ապահովում է երեխաների, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտի օրենսդրական խնդիրների և բացերի վերացման, ինչպես նաև

ոլորտի օրենսդրության կատարելագործման նպատակով հիմնավորումների մշակումն ու ներկայացումը Պաշտպանին

Իրավունքները.

1. Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում անարգել այցելել իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ կազմակերպություն, ներառյալ՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, հանրակրթական ուսումնական հաստատություններ, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց խնամք իրականացնող հաստատություններ, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական, առողջապահական և վերականգնողական ծառայություններ մատուցող հաստատություններ.
2. իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրա պաշտոնատար անձից պահանջել և հնարավոր կարճ ժամկետում ու անվճար ստանալ Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքներին կամ սեփական նախաձեռնությամբ քննարկվող հարցին առնչվող անհրաժեշտ նյութեր, փաստաթղթեր, տեղեկություններ կամ պարզաբանումներ.
3. իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրա պաշտոնատար անձից, բացառությամբ դատարանների ու դատավորների, ստանալ Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքներին կամ սեփական նախաձեռնությամբ քննարկման ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ պարզաբանումներ.
4. Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում առաջարկել բողոք ներկայացրած անձին տրամադրել դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ.
5. դիմել իրավասու մարմիններին կամ կազմակերպություններին Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ քննարկման առնչությամբ պարզաբանման ենթակա հանգամանքների վերաբերյալ փորձագիտական հետազոտություններ իրականացնելու և դրանց արդյունքում կազմված եզրակացությունները ստանալու համար.
6. Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում ծանոթանալ քրեական, քաղաքացիական, վարչական, կարգապահական և այլ իրավախախտումների վերաբերյալ այն գործերին, որոնց վերաբերյալ ակտերն օրինական ուժի մեջ են մտել, ինչպես նաև այն նյութերին, որոնց կապակցությամբ մերժվել է քրեական գործերի հարուցումը, կամ կարճվել է քրեական գործի վարույթը, ստանալու դրանք էլեկտրոնային կամ այլ նյութական կրիչներով.
7. իր լիազորությունների շրջանակում օգտվել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, դրանց պաշտոնատար անձանց և ներկայացուցիչների մոտ անհետաձգելի ընդունելությունից.
8. արագ արձագանքման շրջանակներում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից, դրանց պաշտոնատար անձանցից և ներկայացուցիչներից ստանալ անհապաղ աջակցություն իր աշխատանքներին.
9. մասնակցել հասարակական, միջազգային կազմակերպությունների, պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, միջազգային և ազգային փորձագետների, ինչպես նաև այլ անձանց հետ հանդիպումներին ու քննարկումներին.
10. համագործակցել Պաշտպանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների հետ՝ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության բնագավառում իրականացված գործունեության և ակնկալվող ծրագրերի վերաբերյալ զանգվածային լրատվության և հանրային իրազեկման այլ միջոցներով լուսաբանումների մասով.
11. համագործակցել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների հետ.
12. մասնակցել ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի և ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի աշխատանքներին.
13. դիտարկման նպատակով ներկա լինել դռնբաց դատական նիստերին.

14. Պաշտպանին առընթեր խորհուրդների նիստերին մասնակցության ապահովում.
15. առանձին բողոքների քննարկման և ուսումնասիրության նպատակով նախաձեռնել և կազմակերպել քննարկումներ համայնքներում իրավասու պետական և ոչ պետական մարմինների ներկայացուցիչների հետ.
16. կազմակերպել մասնագիտական քննարկումներ Պաշտպանին կարծիքի ներկայացված երեխաների, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտի իրավական ակտերի նախագծերի, անձանց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության իրավական միջոցների և ընթացակարգերի վերաբերյալ:
17. Առանձնազրույցներ է ունենում մշտադիտարկման հաստատություններում և վայրերում գտնվող անձանց հետ՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով փորձագետների:

Պարտականությունները.

1. սահմանված ժամկետում իրականացնել դիմում-բողոքների մակագրությունը, ուսումնասիրել համապատասխան որոշումների, գրությունների նախագծերը և ներկայացնել դրանք դեպարտամենտի ղեկավարին.
2. արձանագրել Պաշտպանին ներկայացվող բանավոր բողոքների բովանդակությունը.
3. իրականացնել դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման նկատմամբ անմիջական վերահսկողություն՝ կատարողին համապատասխան ցուցումներ, հանձնարարականներ տալու, ինչպես նաև դրանց կապակցությամբ ըստ անհրաժեշտության քննարկումներ իրականացնելու միջոցով.
4. բողոքի ուսումնասիրության կամ քննարկման շրջանակում ապահովել անարգել այցերի իրականացումն այնպիսի վայրեր, որտեղ առկա են կամ կարող են լինել մարդու իրավունքների և ազատությունների ենթադրյալ կամ հաստատված խախտման դեպքեր.
5. ապահովել պարբերական և ըստ անհրաժեշտության այցերի իրականացումը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններ կամ կազմակերպություններ, ներառյալ՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, հանրակրթական ուսումնական հաստատություններ, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց խնամք իրականացնող հաստատություններ.
6. Պաշտպանին ներկայացնել հիմնավորումներ՝ պաշտոնատար այն անձին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, որի որոշմամբ կամ գործողությամբ (անգործությամբ) խախտվել են մարդու իրավունքները և ազատությունները.
7. ապահովել իրավասու պետական մարմիններին օրենքով նախատեսված ընթացակարգի շրջանակներում վարչական պատասխանատվության ենթարկելու հարցի քննարկումը Պաշտպանի հետ՝ Պաշտպանի պահանջած նյութերը, փաստաթղթերը, տեղեկությունները կամ պարզաբանումները օրենքով սահմանված ժամկետում չտրամադրելու դեպքում.
8. ընդունել անձանց, տրամադրել իրավաբանական խորհրդատվություն՝ իրենց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության իրավական միջոցների և ընթացակարգերի վերաբերյալ.
9. ներկայացնել օրենսդրական ակտերի և պրակտիկայի կատարելագործման առաջարկներ՝ վերացնելու համար այցերի և բողոքների քննարկման արդյունքում վեր հանված համակարգային խնդիրները.
10. իրականացնել անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտի միջազգային փորձի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների և այլ միջազգային փաստաթղթերի ուսումնասիրություններ և ներկայացնել առաջարկություններ դրանց արդյունքների հիման վրա.
11. մշակել երեխաների, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտի՝ Պաշտպանին կարծիքի ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ նկատառումներ և առաջարկներ.
12. մշակում և նախագծում է ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեին և ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեին ներկայացվող զեկույցները, հաղորդումները՝ Պաշտպանին ներկայացնելով համապատասխան նախագծերը.

13. չհրապարակել Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների վերաբերյալ տվյալները կամ բովանդակությունը, բացառությամբ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերի.
14. արագ արձագանքման շրջանակներում կատարված այցերի արդյունքում և թեժ գծի կամ այլ հեռախոսահամարով ստացված տեղեկությունների վերաբերյալ կազմել տեղեկանքներ կամ համապատասխան այլ փաստաթղթեր.
15. կատարում է Վարչության գործառույթներին առնչվող թեժ գծի կամ այլ հեռախոսահամարով ստացված տեղեկությունների հավաքագրումը, վերլուծումը և հանձնումը քարտուղարության փաստաթղթաշրջանառության ապահովման և դիմումների ընդունման վարչությանը.
16. կազմակերպել իր իրավասության սահմաններում իրականացվող միջոցառումների աշխատանքները.
17. նախապատրաստել Վարչության գործառույթներին առնչվող առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, գրություններ և այլ փաստաթղթեր.
18. իր լիազորությունների շրջանակում իրականացնել պաշտոնական հաղորդակցություն:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Ուղղություն	Գործարարություն, վարչարարություն և իրավունք
Ոլորտ	Իրավունք
Ենթաոլորտ	Իրավունք
Մասնագիտություն	042101.00.6 Իրավագիտություն կամ 042101.00.7 Իրավագիտություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ իրավունքի բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Բարեվարքություն
  - Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
  - Որոշումների կայացում
  - Ծրագրերի կառավարում
  - Աշխատակազմի կառավարում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Բանակցությունների վարում
  - Փոփոխությունների կառավարում
  - Կոնֆլիկտների կառավարում
  - Բողոքների բավարարում
  - Ժամանակի կառավարում

- Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
- Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
- Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի մի քանի ոլորտների համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի մի քանի ոլորտների համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն և ազդեցությունը սահմանափակվում է համապետական մակարդակով որոշակի ոլորտով:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և մարմինը:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ:

Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

05-8.5.Ա-Ղ4-1 Բաժնի պետ(2022-09-07 -2023-01-05)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ | Կոնվենցիոն մանդատների ապահովման վարչություն | Երեխաների իրավունքների պաշտպանության բաժին | Բաժնի պետ, (05-8.5.Ա-Ղ4-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

Բաժնի պետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ

Բաժնի պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:

1.4 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետը կամ Պաշտպանի հրամանում նշված այլ պաշտոնատար անձը:

1.5 Աշխատավայր

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Պուշկինի 56ա

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. ապահովում է անձանց իրավաբանական խորհրդատվության տրամադրումն՝ իրենց իրավունքների և ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության հնարավորությունների վերաբերյալ.
2. ապահովում է անձանց ընդունելության աշխատանքները.
3. ապահովում է Պաշտպանի՝ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկման, ինչպես նաև երեխաների իրավունքների խախտումների կանխարգելման և պաշտպանության լիազորությունների իրականացումը.
4. ապահովում է անձանց իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ Պաշտպանին ներկայացված դիմում-բողոքների ուսումնասիրությունը և քննարկումը, ինչպես նաև ապահովում է համապատասխան որոշումների, գրությունների և այլ փաստաթղթերի նախագծերի նախապատրաստումը.
5. անձանց իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա արագ արձագանքման շրջանակներում ապահովում է անհետաձգելի այցերի իրականացումը.
6. բողոքի ուսումնասիրության կամ քննարկման շրջանակում ապահովում է անարգել այցերի իրականացումն այնպիսի վայրեր, որտեղ առկա են կամ կարող են լինել մարդու իրավունքների և ազատությունների ենթադրյալ կամ հաստատված խախտման դեպքեր.

7. ապահովում է պարբերական և ըստ անհրաժեշտության այցերի իրականացումը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններ կամ կազմակերպություններ, ներառյալ՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատություններ.
8. ապահովում է Պաշտպանի տարեկան հաղորդման և Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցների, ինչպես նաև արտահերթ հրապարակային զեկույցների կամ հաղորդումների նախագծերի մշակման աշխատանքների մասնակցությունը՝ այցերի, ուսումնասիրությունների, արդյունքների վերլուծության և համակարգային խնդիրների վերհանման միջոցով.
9. մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշման նախագծի հետ միասին, եթե առկա են օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված հիմքեր, պետական կամ տեղական ինքնակառավարման իրավասու մարմնին առաջարկելու նպատակով Պաշտպանին ներկայացնում են հիմնավորումներ՝ պաշտոնատար այն անձին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, որի որոշմամբ կամ գործողությամբ (անգործությամբ) խախտվել են մարդու իրավունքները և ազատությունները.
10. Պաշտպանին Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը ցանկացած ձևով խոչընդոտելու, ինչպես նաև Պաշտպանին սպառնալու կամ նրան վիրավորանք հասցնելու կամ նրա նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու կոնկրետ դեպքերում ապահովում է հիմնավորումների նախապատրաստումը և դրանք Պաշտպանին ներկայացումը՝ իրավասու պետական մարմիններին ներկայացնելու և օրենքով նախատեսված ընթացակարգի շրջանակներում արարքին քրեաիրավական գնահատական տալու նպատակով.
11. Պաշտպանի պահանջած նյութերը, փաստաթղթերը, տեղեկությունները կամ պարզաբանումները «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով սահմանված ժամկետում չտրամադրելու դեպքում ապահովում է հիմնավորումների նախապատրաստումը և դրանք Պաշտպանին ներկայացումը՝ իրավասու պետական մարմիններին ներկայացնելու և օրենքով նախատեսված ընթացակարգի շրջանակներում վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու համար.
12. ապահովում է Բաժնի գործառույթներին առնչվող թեժ գծի կամ այլ հեռախոսահամարով ստացված տեղեկությունների հավաքագրումը, վերլուծումը և հանձնումը քարտուղարության փաստաթղթաշրջանառության ապահովման և դիմումների ընդունման վարչությանը.

Իրավունքները.

1. Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում անարգել այցելել իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ կազմակերպություն, ներառյալ՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատություններ.
2. իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրա պաշտոնատար անձից պահանջել և հնարավոր կարճ ժամկետում ու անվճար ստանալ Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքներին կամ սեփական նախաձեռնությամբ քննարկվող հարցին առնչվող անհրաժեշտ նյութեր, փաստաթղթեր, տեղեկություններ կամ պարզաբանումներ.
3. իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրա պաշտոնատար անձից, բացառությամբ դատարանների ու դատավորների, ստանալ Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքներին կամ սեփական նախաձեռնությամբ քննարկման ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ պարզաբանումներ.
4. Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում առաջարկել բողոք ներկայացրած անձին տրամադրել դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ.
5. դիմել իրավասու մարմիններին կամ կազմակերպություններին Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ քննարկման առնչությամբ

պարզաբանման ենթակա հանգամանքների վերաբերյալ փորձագիտական հետազոտություններ իրականացնելու և դրանց արդյունքում կազմված եզրակացությունները ստանալու համար.

6. Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում ծանոթանալ քրեական, քաղաքացիական, վարչական, կարգապահական և այլ իրավախախտումների վերաբերյալ այն գործերին, որոնց վերաբերյալ ակտերն օրինական ուժի մեջ են մտել, ինչպես նաև այն նյութերին, որոնց կապակցությամբ մերժվել է քրեական գործերի հարուցումը, կամ կարճվել է քրեական գործի վարույթը, ստանալու դրանք էլեկտրոնային կամ այլ նյութական կրիչներով.
7. իր լիազորությունների շրջանակում օգտվել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, դրանց պաշտոնատար անձանց և ներկայացուցիչների մոտ անհետաձգելի ընդունելությունից.
8. արագ արձագանքման շրջանակներում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից, դրանց պաշտոնատար անձանցից և ներկայացուցիչներից ստանալ անհապաղ աջակցություն իր աշխատանքներին.
9. մասնակցել հասարակական, միջազգային կազմակերպությունների, պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, միջազգային և ազգային փորձագետների, ինչպես նաև այլ անձանց հետ հանդիպումներին ու քննարկումներին.
10. Պաշտպանի աշխատակազմի միջազգային համագործակցության վարչության հետ համատեղ համագործակցել Մարդու իրավունքների ազգային այլ հաստատությունների, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում գործող հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ.
11. համագործակցել Պաշտպանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների, այդ թվում՝ հասարակայնության հետ կապերի բաժնի հետ՝ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության բնագավառում իրականացված գործունեության և ակնկալվող ծրագրերի վերաբերյալ զանգվածային լրատվության և հանրային իրազեկման այլ միջոցներով լուսաբանումների մասով.
12. մասնակցել Երեխաների օմբուդսմանների եվրոպական ցանցի կառավարման ու ղեկավար մարմինների աշխատանքներին.
13. դիտարկման նպատակով ներկա լինել դռնբաց դատական նիստերին.
14. մասնակցել Պաշտպանին առընթեր խորհուրդների նիստերին.
15. առանձին բողոքների քննարկման և ուսումնասիրության նպատակով նախաձեռնել և կազմակերպել քննարկումներ համայնքներում իրավասու պետական և ոչ պետական մարմինների ներկայացուցիչների հետ: Համայնքային մարմիններում այդպիսի մարզային ստորաբաժանումների ղեկավարմամբ կամ աջակցելով.
16. կազմակերպել մասնագիտական քննարկումներ Պաշտպանին կարծիքի ներկայացված երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի իրավական ակտերի նախագծերի, անձանց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության իրավական միջոցների և ընթացակարգերի վերաբերյալ:

Պարտականությունները.

1. սահմանված ժամկետում իրականացնել դիմում-բողոքների մակագրությունը, ուսումնասիրել համապատասխան որոշումների, գրությունների նախագծերը և ներկայացնել դրանք դեպարտամենտի ղեկավարին.
2. գրավոր արձանագրել Պաշտպանին ներկայացվող բանավոր բողոքների բովանդակությունը.
3. իրականացնել դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման նկատմամբ անմիջական վերահսկողություն՝ կատարողին համապատասխան ցուցումներ, հանձնարարականներ տալու, ինչպես նաև դրանց կապակցությամբ ըստ անհրաժեշտության քննարկումներ իրականացնելու միջոցով.
4. ընդունել անձանց, տրամադրել իրավաբանական խորհրդատվություն՝ իրենց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության իրավական միջոցների և ընթացակարգերի վերաբերյալ.

5. ներկայացնել օրենսդրական ակտերի և պրակտիկայի կատարելագործման առաջարկներ՝ վերացնելու համար այցերի և բողոքների քննարկման արդյունքում վեր հանված համակարգային խնդիրները.
6. իրականացնել անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտի միջազգային փորձի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների և այլ միջազգային փաստաթղթերի ուսումնասիրություններ և ներկայացնել առաջարկություններ դրանց արդյունքների հիման վրա.
7. Պաշտպանին ներկայացնել հիմնավորումներ՝ երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի օրենսդրական խնդիրների և բացերի վերացման, ինչպես նաև ոլորտի օրենսդրության կատարելագործման նպատակով.
8. մշակել երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի՝ Պաշտպանին կարծիքի ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ նկատառումներ և առաջարկներ.
9. չհրապարակել Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների վերաբերյալ տվյալները կամ բովանդակությունը, բացառությամբ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերի.
10. արագ արձագանքման շրջանակներում կատարված այցերի արդյունքում և թեժ գծի կամ այլ հեռախոսահամարով ստացված տեղեկությունների վերաբերյալ կազմել տեղեկանքներ կամ համապատասխան այլ փաստաթղթեր.
11. կազմակերպել իր իրավասության սահմաններում իրականացվող միջոցառումների աշխատանքները.
12. նախապատրաստել Բաժնի գործառույթներին առնչվող առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, գրություններ և այլ փաստաթղթեր.
13. իր լիազորությունների շրջանակում իրականացնել պաշտոնական հաղորդակցություն:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ իրավունքի բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Բարեվարքություն
  - Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
  - Որոշումների կայացում
  - Ծրագրերի կառավարում
  - Աշխատակազմի կառավարում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Բանակցությունների վարում
  - Փոփոխությունների կառավարում

- Կոնֆլիկտների կառավարում
- Բողոքների բավարարում
- Ժամանակի կառավարում
- Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
- Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ:

Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

05-8.5.Ա-Ղ4-1 Բաժնի պետ(2023-01-05 -2024-04-01)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ | Կոնվենցիոն մանդատների ապահովման վարչություն | Երեխաների իրավունքների պաշտպանության բաժին | Բաժնի պետ, (05-8.5.Ա-Ղ4-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

Բաժնի պետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ

Բաժնի պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:

1.4 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետը կամ մասնագետը:

1.5 Աշխատավայր

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Պուշկինի 56ա

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. ապահովում է անձանց իրավաբանական խորհրդատվության տրամադրումն՝ իրենց իրավունքների և ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության հնարավորությունների վերաբերյալ.
2. ապահովում է անձանց ընդունելության աշխատանքները.
3. ապահովում է Պաշտպանի՝ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկման, ինչպես նաև երեխաների իրավունքների խախտումների կանխարգելման և պաշտպանության լիազորությունների իրականացումը.
4. ապահովում է անձանց իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ Պաշտպանին ներկայացված դիմում-բողոքների ուսումնասիրությունը և քննարկումը, ինչպես նաև ապահովում է համապատասխան որոշումների, գրությունների և այլ փաստաթղթերի նախագծերի նախապատրաստումը.
5. անձանց իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա արագ արձագանքման շրջանակներում ապահովում է անհետաձգելի այցերի իրականացումը.
6. բողոքի ուսումնասիրության կամ քննարկման շրջանակում ապահովում է անարգել այցերի իրականացումն այնպիսի վայրեր, որտեղ առկա են կամ կարող են լինել մարդու իրավունքների և ազատությունների ենթադրյալ կամ հաստատված խախտման դեպքեր.

7. ապահովում է պարբերական և ըստ անհրաժեշտության այցերի իրականացումը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններ կամ կազմակերպություններ, ներառյալ՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատություններ.
8. ապահովում է Պաշտպանի տարեկան հաղորդման և Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցների, ինչպես նաև արտահերթ հրապարակային զեկույցների կամ հաղորդումների նախագծերի մշակման աշխատանքների մասնակցությունը՝ այցերի, ուսումնասիրությունների, արդյունքների վերլուծության և համակարգային խնդիրների վերհանման միջոցով.
9. մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշման նախագծի հետ միասին, եթե առկա են օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված հիմքեր, պետական կամ տեղական ինքնակառավարման իրավասու մարմնին առաջարկելու նպատակով Պաշտպանին ներկայացնում են հիմնավորումներ՝ պաշտոնատար այն անձին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, որի որոշմամբ կամ գործողությամբ (անգործությամբ) խախտվել են մարդու իրավունքները և ազատությունները.
10. Պաշտպանին Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը ցանկացած ձևով խոչընդոտելու, ինչպես նաև Պաշտպանին սպառնալու կամ նրան վիրավորանք հասցնելու կամ նրա նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու կոնկրետ դեպքերում ապահովում է հիմնավորումների նախապատրաստումը և դրանք Պաշտպանին ներկայացումը՝ իրավասու պետական մարմիններին ներկայացնելու և օրենքով նախատեսված ընթացակարգի շրջանակներում արարքին քրեաիրավական գնահատական տալու նպատակով.
11. Պաշտպանի պահանջած նյութերը, փաստաթղթերը, տեղեկությունները կամ պարզաբանումները «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով սահմանված ժամկետում չտրամադրելու դեպքում ապահովում է հիմնավորումների նախապատրաստումը և դրանք Պաշտպանին ներկայացումը՝ իրավասու պետական մարմիններին ներկայացնելու և օրենքով նախատեսված ընթացակարգի շրջանակներում վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու համար.
12. ապահովում է Բաժնի գործառույթներին առնչվող թեժ գծի կամ այլ հեռախոսահամարով ստացված տեղեկությունների հավաքագրումը, վերլուծումը և հանձնումը քարտուղարության փաստաթղթաշրջանառության ապահովման և դիմումների ընդունման վարչությանը.

Իրավունքները.

1. Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում անարգել այցելել իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ կազմակերպություն, ներառյալ՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատություններ.
2. իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրա պաշտոնատար անձից պահանջել և հնարավոր կարճ ժամկետում ու անվճար ստանալ Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքներին կամ սեփական նախաձեռնությամբ քննարկվող հարցին առնչվող անհրաժեշտ նյութեր, փաստաթղթեր, տեղեկություններ կամ պարզաբանումներ.
3. իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրա պաշտոնատար անձից, բացառությամբ դատարանների ու դատավորների, ստանալ Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքներին կամ սեփական նախաձեռնությամբ քննարկման ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ պարզաբանումներ.
4. Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում առաջարկել բողոք ներկայացրած անձին տրամադրել դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ.
5. դիմել իրավասու մարմիններին կամ կազմակերպություններին Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ քննարկման առնչությամբ

պարզաբանման ենթակա հանգամանքների վերաբերյալ փորձագիտական հետազոտություններ իրականացնելու և դրանց արդյունքում կազմված եզրակացությունները ստանալու համար.

6. անձանց իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա արագ արձագանքման շրջանակներում ապահովում է անհետաձգելի այցերի իրականացումը.
7. բողոքի ուսումնասիրության կամ քննարկման շրջանակում ապահովում է անարգել այցերի իրականացումն այնպիսի վայրեր, որտեղ առկա են կամ կարող են լինել մարդու իրավունքների և ազատությունների ենթադրյալ կամ հաստատված խախտման դեպքեր.
8. ապահովում է պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության անարգել այցերի իրականացումն այն հաստատություններ, որտեղ գտնվում են հաշմանդամություն ունեցող անձինք.
9. ապահովում և իրականացնում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին առնչվող հրապարակային զեկույցների մշակման աշխատանքները, ինչպես նաև մասնակցում է Պաշտպանի տարեկան հաղորդման և Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցների, արտահերթ հրապարակային զեկույցների կամ հաղորդումների նախագծերի մշակման աշխատանքներին՝ այցերի, ուսումնասիրությունների, արդյունքների վերլուծության և համակարգային խնդիրների վերհանման միջոցով.
10. մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշման նախագծի հետ միասին, եթե առկա են օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված հիմքեր, պետական կամ տեղական ինքնակառավարման իրավասու մարմնին առաջարկելու նպատակով Պաշտպանին ներկայացնում են հիմնավորումներ՝ պաշտոնատար այն անձին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, որի որոշմամբ կամ գործողությամբ (անգործությամբ) խախտվել են մարդու իրավունքները և ազատությունները.
11. Պաշտպանին Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը ցանկացած ձևով խոչընդոտելու, ինչպես նաև Պաշտպանին սպառնալու կամ նրան վիրավորանք հասցնելու կամ նրա նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու կոնկրետ դեպքերում ապահովում է հիմնավորումների նախապատրաստումը և դրանք Պաշտպանին ներկայացումը՝ իրավասու պետական մարմիններին ներկայացնելու և օրենքով նախատեսված ընթացակարգի շրջանակներում արարքին քրեաիրավական գնահատական տալու նպատակով.
12. Պաշտպանի պահանջած նյութերը, փաստաթղթերը, տեղեկությունները կամ պարզաբանումները «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով սահմանված ժամկետում չտրամադրելու դեպքում ապահովում է հիմնավորումների նախապատրաստումը և դրանք Պաշտպանին ներկայացումը՝ իրավասու պետական մարմիններին ներկայացնելու և օրենքով նախատեսված ընթացակարգի շրջանակներում վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու համար.
13. ապահովում է Պաշտպանին առընթեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի նիստերի նախապատրաստական աշխատանքները և դրանց պատշաճ ընթացքը.
14. ապահովում և իրականացնում է Բաժնի գործառույթներին առնչվող թեժ գծի կամ այլ հեռախոսահամարով ստացված տեղեկությունների հավաքագրումը, վերլուծումը և հանձնումը քարտուղարության փաստաթղթաշրջանառության ապահովման և դիմումների ընդունման վարչությանը.
15. ապահովում է համագործակցությունը Պաշտպանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների, այդ թվում՝ հասարակայնության հետ կապերի բաժնի հետ՝ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության բնագավառում իրականացված գործունեության և ակնկալվող ծրագրերի վերաբերյալ զանգվածային լրատվության և հանրային իրազեկման այլ միջոցներով լուսաբանումների մասով.

Իրավունքները.

1. Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում անարգել այցելել իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ կազմակերպություն.

2. իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրա պաշտոնատար անձից պահանջել և հնարավոր կարճ ժամկետում ու անվճար ստանալ Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքներին կամ սեփական նախաձեռնությամբ քննարկվող հարցին առնչվող անհրաժեշտ նյութեր, փաստաթղթեր, տեղեկություններ կամ պարզաբանումներ.
3. իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրա պաշտոնատար անձից, բացառությամբ դատարանների ու դատավորների, ստանալ Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքներին կամ սեփական նախաձեռնությամբ քննարկման ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ պարզաբանումներ.
4. Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում առաջարկել բողոք ներկայացրած անձին տրամադրել դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ.
5. դիմել իրավասու մարմիններին կամ կազմակերպություններին Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ քննարկման առնչությամբ պարզաբանման ենթակա հանգամանքների վերաբերյալ փորձագիտական հետազոտություններ իրականացնելու և դրանց արդյունքում կազմված եզրակացությունները ստանալու համար.
6. Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում ծանոթանալ քրեական, քաղաքացիական, վարչական, կարգապահական և այլ իրավախախտումների վերաբերյալ այն գործերին, որոնց վերաբերյալ ակտերն օրինական ուժի մեջ են մտել, ինչպես նաև այն նյութերին, որոնց կապակցությամբ մերժվել է քրեական գործերի հարուցումը, կամ կարճվել է քրեական գործի վարույթը, ստանալու դրանք էլեկտրոնային կամ այլ նյութական կրիչներով.
7. իր լիազորությունների շրջանակում օգտվել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, դրանց պաշտոնատար անձանց և ներկայացուցիչների մոտ անհետաձգելի ընդունելությունից.
8. արագ արձագանքման շրջանակներում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից, դրանց պաշտոնատար անձանցից և ներկայացուցիչներից ստանալ անհապաղ աջակցություն իր աշխատանքներին.
9. մասնակցել հասարակական, միջազգային կազմակերպությունների, պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, միջազգային և ազգային փորձագետների, ինչպես նաև այլ անձանց հետ հանդիպումներին ու քննարկումներին.
10. Պաշտպանի աշխատակազմի միջազգային համագործակցության վարչության հետ համատեղ համագործակցել Մարդու իրավունքների ազգային այլ հաստատությունների, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում գործող հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ.
11. դիտարկման նպատակով ներկա լինել դռնբաց դատական նիստերին.
12. մասնակցել Պաշտպանին առընթեր խորհուրդների նիստերին.
13. առանձին բողոքների քննարկման և ուսումնասիրության նպատակով նախաձեռնել և կազմակերպել քննարկումներ համայնքներում իրավասու պետական և ոչ պետական մարմինների ներկայացուցիչների հետ: Համայնքային մարմիններում այդպիսի մարզային ստորաբաժանումների ղեկավարմամբ կամ աջակցելով.
14. կազմակերպել մասնագիտական քննարկումներ Պաշտպանին կարծիքի ներկայացված հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտի իրավական ակտերի նախագծերի, անձանց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության իրավական միջոցների և ընթացակարգերի վերաբերյալ:

Պարտականությունները.

1. սահմանված ժամկետում իրականացնել դիմում-բողոքների մակագրությունը, ուսումնասիրել համապատասխան որոշումների, գրությունների նախագծերը և ներկայացնել դրանք դեպարտամենտի ղեկավարին.
2. գրավոր արձանագրել Պաշտպանին ներկայացվող բանավոր բողոքների բովանդակությունը.

3. իրականացնել դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման նկատմամբ անմիջական վերահսկողություն՝ կատարողին համապատասխան ցուցումներ, հանձնարարականներ տալու, ինչպես նաև դրանց կապակցությամբ ըստ անհրաժեշտության քննարկումներ իրականացնելու միջոցով.
4. ընդունել անձանց, տրամադրել իրավաբանական խորհրդատվություն՝ իրենց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության իրավական միջոցների և ընթացակարգերի վերաբերյալ.
5. ներկայացնել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին վերաբերող իրավական ակտերի կամ դրանց նախագծերի կամ պրակտիկայի կատարելագործման վերաբերյալ առաջարկներ՝ վերացնելու համար այցերի և բողոքների քննարկման արդյունքում վեր հանված համակարգային խնդիրները.
6. իրականացնել անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտի միջազգային փորձի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների և այլ միջազգային փաստաթղթերի ուսումնասիրություններ և ներկայացնել առաջարկություններ դրանց արդյունքների հիման վրա.
7. մշակել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտի՝ Պաշտպանին կարծիքի ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ նկատառումներ և առաջարկներ.
8. չհրապարակել Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների վերաբերյալ տվյալները կամ բովանդակությունը, բացառությամբ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերի.
9. արագ արձագանքման շրջանակներում կատարված այցերի արդյունքում և թեժ գծի կամ այլ հեռախոսահամարով ստացված տեղեկությունների վերաբերյալ կազմել տեղեկանքներ կամ համապատասխան այլ փաստաթղթեր.
10. Պաշտպանի բացակայության դեպքում՝ նրա հանձնարարությամբ վարել Պաշտպանին առընթեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի նիստերը.
11. կազմակերպել իր իրավասության սահմաններում իրականացվող միջոցառումների աշխատանքները.
12. նախապատրաստել Բաժնի գործառույթներին առնչվող առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, գրություններ և այլ փաստաթղթեր.
13. իր լիազորությունների շրջանակում իրականացնել պաշտոնական հաղորդակցություն:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ իրավունքի բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում

- Բարեվարքություն
- Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
- Որոշումների կայացում
- Ծրագրերի կառավարում
- Աշխատակազմի կառավարում

- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Բանակցությունների վարում
  - Փոփոխությունների կառավարում
  - Կոնֆլիկտների կառավարում
  - Բողոքների բավարարում
  - Ժամանակի կառավարում
  - Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ:

Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

05-8.5.Ա-Մ3-1 Ավագ մասնագետ(2024-04-01)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ | Կոնվենցիոն մանդատների ապահովման վարչություն | Երեխաների իրավունքների պաշտպանության բաժին | Ավագ մասնագետ, (05-8.5.Ա-Մ3-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

Բաժնի ավագ մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետը կամ Պաշտպանի կողմից նշանակված այլ քաղաքացիական ծառայող:

1.4 Աշխատավայր

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Պուշկինի 56ա

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. անձանց տրամադրում է իրավաբանական խորհրդատվություն՝ իրենց իրավունքների և ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության հնարավորությունների վերաբերյալ.
2. իրականացնում է անձանց ընդունելություն.
3. «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների համաձայն՝ ազգային հաստատության մանդատի շրջանակներում մշտադիտարկում է իրականացնում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններ կամ կազմակերպություններ, ներառյալ՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատություններ.
4. իրականացնում է անձանց իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ Պաշտպանին ներկայացված դիմում-բողոքների ուսումնասիրությունը և քննարկումը, ինչպես նաև կատարում է համապատասխան որոշումների, գրությունների և այլ փաստաթղթերի նախագծերի նախապատրաստումը.
5. անձանց իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա արագ արձագանքման շրջանակներում կատարում է անհետաձգելի այցեր.
6. բողոքի ուսումնասիրության կամ քննարկման շրջանակում կատարում է անարգել այցեր այնպիսի վայրեր, որտեղ առկա են կամ կարող են լինել մարդու իրավունքների և ազատությունների ենթադրյալ կամ հաստատված խախտման դեպքեր.
7. կատարում է պարբերական և ըստ անհրաժեշտության այցեր պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններ կամ կազմակերպություններ, ներառյալ՝ երեխաների

խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատություններ.
8. մասնակցում է Պաշտպանի տարեկան հաղորդման և Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցների, ինչպես նաև արտահերթ հրապարակային զեկույցների կամ հաղորդումների նախագծերի մշակման աշխատանքներին՝ այցերի, ուսումնասիրությունների, արդյունքների վերլուծության և համակարգային խնդիրների վերհանման միջոցով.
9. կատարում է Բաժնի գործառույթներին առնչվող թեժ գծի կամ այլ հեռախոսահամարով ստացված տեղեկությունների հավաքագրումը, վերլուծումը և հանձնումը քարտուղարության փաստաթղթաշրջանառության ապահովման և դիմումների ընդունման վարչությանը:

Իրավունքները.

1. Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում անարգել այցելել իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ կազմակերպություն, ներառյալ՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատություններ.
2. իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրա պաշտոնատար անձից պահանջել և հնարավոր կարճ ժամկետում ու անվճար ստանալ Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքներին կամ սեփական նախաձեռնությամբ քննարկվող հարցին առնչվող անհրաժեշտ նյութեր, փաստաթղթեր, տեղեկություններ կամ պարզաբանումներ.
3. իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրա պաշտոնատար անձից, բացառությամբ դատարանների ու դատավորների, ստանալ Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքներին կամ սեփական նախաձեռնությամբ քննարկման ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ պարզաբանումներ.
4. Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում առաջարկել բողոք ներկայացրած անձին տրամադրել դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ.
5. դիմել իրավասու մարմիններին կամ կազմակերպություններին Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ քննարկման առնչությամբ պարզաբանման ենթակա հանգամանքների վերաբերյալ փորձագիտական հետազոտություններ իրականացնելու և դրանց արդյունքում կազմված եզրակացությունները ստանալու համար.
6. Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում ծանոթանալ քրեական, քաղաքացիական, վարչական, կարգապահական և այլ իրավախախտումների վերաբերյալ այն գործերին, որոնց վերաբերյալ ակտերն օրինական ուժի մեջ են մտել, ինչպես նաև այն նյութերին, որոնց կապակցությամբ մերժվել է քրեական գործերի հարուցումը, կամ կարճվել է քրեական գործի վարույթը, ստանալու դրանք էլեկտրոնային կամ այլ նյութական կրիչներով.
7. իր լիազորությունների շրջանակում օգտվել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, դրանց պաշտոնատար անձանց և ներկայացուցիչների մոտ անհետաձգելի ընդունելությունից.
8. արագ արձագանքման շրջանակներում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից, դրանց պաշտոնատար անձանցից և ներկայացուցիչներից ստանալ անհապաղ աջակցություն իր աշխատանքներին.
9. մասնակցել հասարակական, միջազգային կազմակերպությունների, պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, միջազգային և ազգային փորձագետների, ինչպես նաև այլ անձանց հետ հանդիպումներին ու քննարկումներին.
10. դիտարկման նպատակով ներկա լինել դռնբաց դատական նիստերին.
11. մասնակցել Պաշտպանին առընթեր խորհուրդների նիստերին.
12. առանձին բողոքների քննարկման և ուսումնասիրության նպատակով մասնակցել համայնքներում իրավասու պետական և ոչ պետական մարմինների ներկայացուցիչների հետ

քննարկումներին: Համայնքային մարմիններում այդպիսի մարզային ստորաբաժանումների ղեկավարմամբ կամ աջակցելով.
13. մասնակցել մասնագիտական քննարկումներին Պաշտպանին կարծիքի ներկայացված երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի իրավական ակտերի նախագծերի, անձանց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության իրավական միջոցների և ընթացակարգերի վերաբերյալ:

Պարտականությունները.

1. սահմանված ժամկետում կազմել համապատասխան որոշումների, գրությունների նախագծերը և ներկայացնել դրանք Բաժնի պետին.
2. գրավոր արձանագրել Պաշտպանին ներկայացվող բանավոր բողոքների բովանդակությունը.
3. ուսումնասիրել և քննարկել ներկայացված դիմում-բողոքները, ինչպես նաև ըստ անհրաժեշտության մասնակցել դրանց կապակցությամբ քննարկումներին.
4. ընդունել անձանց, տրամադրել իրավաբանական խորհրդատվություն՝ իրենց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության իրավական միջոցների և ընթացակարգերի վերաբերյալ.
5. ներկայացնել օրենսդրական ակտերի և պրակտիկայի կատարելագործման առաջարկներ՝ վերացնելու համար այցերի և բողոքների քննարկման արդյունքում վեր հանված համակարգային խնդիրները.
6. ուսումնասիրել անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտի միջազգային փորձը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների և այլ միջազգային փաստաթղթերի ուսումնասիրություններ և ներկայացնել առաջարկություններ դրանց արդյունքների հիման վրա.
7. Բաժնի պետին ներկայացնել հիմնավորումներ՝ երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի օրենսդրական խնդիրների և բացերի վերացման, ինչպես նաև ոլորտի օրենսդրության կատարելագործման նպատակով.
8. մշակել երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի՝ Պաշտպանին կարծիքի ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ նկատառումներ և առաջարկներ.
9. չհրապարակել Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների վերաբերյալ տվյալները կամ բովանդակությունը, բացառությամբ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերի.
10. արագ արձագանքման շրջանակներում կատարված այցերի արդյունքում և թեժ գծի կամ այլ հեռախոսահամարով ստացված տեղեկությունների վերաբերյալ կազմել տեղեկանքներ կամ համապատասխան այլ փաստաթղթեր.
11. նախապատրաստել Բաժնի գործառույթներին առնչվող առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, գրություններ և այլ փաստաթղթեր.
12. իր լիազորությունների շրջանակում իրականացնել պաշտոնական հաղորդակցություն:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Ուղղություն	Գործարարություն, վարչարարություն և իրավունք
Ոլորտ	Իրավունք
Ենթաոլորտ	Իրավունք
Մասնագիտություն	042101.00.6 Իրավագիտություն կամ 042101.00.7 Իրավագիտություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ իրավունքի բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Հաշվետվությունների մշակում
  - Բարեվարքություն
  - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Բանակցությունների վարում
  - Բողոքների բավարարում
  - Ժամանակի կառավարում
  - Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված՝ մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը:

Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր
05-8.5.Բ-Մ6-1 Մասնագետ(2022-09-07 -2023-01-05)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ | Կոնվենցիոն մանդատների ապահովման վարչություն | Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության բաժին | Մասնագետ, (05-8.5.Բ-Մ6-1)
1.2 Ենթակա և հաշվետու է

Բաժնի մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետը կամ ավագ մասնագետը:

1.4 Աշխատավայր

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Պուշկինի 56ա

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. անձանց տրամադրում է իրավաբանական խորհրդատվություն՝ իրենց իրավունքների և ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության հնարավորությունների վերաբերյալ.
2. իրականացնում է անձանց ընդունելություն.
3. մասնակցում է Պաշտպանի՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկման, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտումների կանխարգելման և պաշտպանության լիազորությունների ապահովման աշխատանքներին.
4. մասնակցում է օրենսդրության՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված կոնվենցիայի դրույթների համապատասխանության մշտադիտարկման աշխատանքներին.
5. մասնակցում է անձանց իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ Պաշտպանին ներկայացված դիմում-բողոքների ուսումնասիրությանը և քննարկմանը, ինչպես նաև համապատասխան որոշումների, գրությունների և այլ փաստաթղթերի նախագծերի նախապատրաստմանը.
6. անձանց իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա արագ արձագանքման շրջանակներում իրականացնում է անհետաձգելի այցեր.
7. բողոքի ուսումնասիրության կամ քննարկման շրջանակում իրականացնում է անարգել այցեր այնպիսի վայրեր, որտեղ առկա են կամ կարող են լինել մարդու իրավունքների և ազատությունների ենթադրյալ կամ հաստատված խախտման դեպքեր.
8. իրականացնում է պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության անարգել այցեր այն հաստատություններ, որտեղ գտնվում են հաշմանդամություն ունեցող անձինք.
9. օժանդակում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին առնչվող հրապարակային զեկույցների մշակման աշխատանքներին, ինչպես նաև Պաշտպանի տարեկան հաղորդման և Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցների, արտահերթ հրապարակային զեկույցների կամ հաղորդումների նախագծերի մշակման աշխատանքներին՝ այցերի, ուսումնասիրությունների, արդյունքների վերլուծության և համակարգային խնդիրների վերհանման միջոցով.
10. իրականացնում է Բաժնի գործառույթներին առնչվող թեժ գծի կամ այլ հեռախոսահամարով ստացված տեղեկությունների հավաքագրումը, վերլուծումը և հանձնումը քարտուղարության փաստաթղթաշրջանառության ապահովման և դիմումների ընդունման վարչությանը:

Իրավունքները.

1. Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում անարգել այցելել իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ կազմակերպություն.
2. իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրա պաշտոնատար անձից պահանջել և հնարավոր կարճ ժամկետում ու անվճար ստանալ Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքներին կամ սեփական նախաձեռնությամբ քննարկվող հարցին առնչվող անհրաժեշտ նյութեր, փաստաթղթեր, տեղեկություններ կամ պարզաբանումներ.
3. իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրա պաշտոնատար անձից, բացառությամբ դատարանների ու դատավորների, ստանալ Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքներին կամ սեփական նախաձեռնությամբ քննարկման ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ պարզաբանումներ.
4. Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում առաջարկել բողոք ներկայացրած անձին տրամադրել դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ.
5. դիմել իրավասու մարմիններին կամ կազմակերպություններին Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ քննարկման առնչությամբ պարզաբանման ենթակա հանգամանքների վերաբերյալ փորձագիտական հետազոտություններ իրականացնելու և դրանց արդյունքում կազմված եզրակացությունները ստանալու համար.
6. Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում ծանոթանալ քրեական, քաղաքացիական, վարչական, կարգապահական և այլ իրավախախտումների վերաբերյալ այն գործերին, որոնց վերաբերյալ ակտերն օրինական ուժի մեջ են մտել, ինչպես նաև այն նյութերին, որոնց կապակցությամբ մերժվել է քրեական գործերի հարուցումը, կամ կարճվել է քրեական գործի վարույթը, ստանալու դրանք էլեկտրոնային կամ այլ նյութական կրիչներով.
7. իր լիազորությունների շրջանակում օգտվել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, դրանց պաշտոնատար անձանց և ներկայացուցիչների մոտ անհետաձգելի ընդունելությունից.
8. արագ արձագանքման շրջանակներում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից, դրանց պաշտոնատար անձանցից և ներկայացուցիչներից ստանալ անհապաղ աջակցություն իր աշխատանքներին.
9. մասնակցել հասարակական, միջազգային կազմակերպությունների, պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, միջազգային և ազգային փորձագետների, ինչպես նաև այլ անձանց հետ հանդիպումներին ու քննարկումներին.
10. դիտարկման նպատակով ներկա լինել դռնբաց դատական նիստերին.
11. մասնակցել Պաշտպանին առընթեր խորհուրդների նիստերին.
12. առանձին բողոքների քննարկման և ուսումնասիրության նպատակով մասնակցել համայնքներում իրավասու պետական և ոչ պետական մարմինների ներկայացուցիչների հետ քննարկումներին: Համայնքային մարմիններում այդպիսի մարզային ստորաբաժանումների ղեկավարմամբ կամ աջակցելով.
13. մասնակցել մասնագիտական քննարկումներին Պաշտպանին կարծիքի ներկայացված հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտի իրավական ակտերի նախագծերի, անձանց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության իրավական միջոցների և ընթացակարգերի վերաբերյալ

Պարտականությունները.

1. սահմանված ժամկետում կազմել համապատասխան որոշումների, գրությունների նախագծերը և ներկայացնել դրանք Բաժնի պետին.
2. գրավոր արձանագրել Պաշտպանին ներկայացվող բանավոր բողոքների բովանդակությունը.
3. իրականացնել դիմում-բողոքների ուսումնասիրություն և քննարկում, ինչպես նաև ըստ անհրաժեշտության մասնակցել դրանց կապակցությամբ քննարկումներին.
4. ընդունել անձանց, տրամադրել իրավաբանական խորհրդատվություն՝ իրենց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության իրավական միջոցների և ընթացակարգերի վերաբերյալ.
5. մասնակցել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին վերաբերող իրավական ակտերի կամ դրանց նախագծերի կամ պրակտիկայի կատարելագործման վերաբերյալ առաջարկների մշակման աշխատանքներին՝ վերացնելու համար այցերի և բողոքների քննարկման արդյունքում վեր հանված համակարգային խնդիրները.
6. իրականացնել անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտի միջազգային փորձի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների և այլ միջազգային փաստաթղթերի ուսումնասիրություններ և ներկայացնել առաջարկություններ դրանց արդյունքների հիման վրա.
7. մշակել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտի՝ Պաշտպանին կարծիքի ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ եկատառումներ և առաջարկներ
8. արագ արձագանքման շրջանակներում կատարված այցերի արդյունքում և թեժ գծի կամ այլ հեռախոսահամարով ստացված տեղեկությունների վերաբերյալ կազմել տեղեկանքներ կամ համապատասխան այլ փաստաթղթեր.
9. նախապատրաստել Բաժնի գործառույթներին առնչվող առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, գրություններ և այլ փաստաթղթեր

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Ուղղություն	Գործարարություն, վարչարարություն և իրավունք
Ոլորտ	Իրավունք
Ենթաոլորտ	Իրավունք
Մասնագիտություն	042101.00.6 Իրավագիտություն կամ 042101.00.7 Իրավագիտություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Աշխատանքային ստաժ չի պահանջվում

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
  - Բարեվարքություն
  - Հաշվետվությունների մշակում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Բանակցությունների վարում
  - Բողոքների բավարարում
  - Ժամանակի կառավարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում է տվյալ մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև տվյալ մարմնից դուրս որպես ներկայացուցիչ շփվում է պատվիրակված լիազորությունների շրջանակներում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է մասնագիտական խնդիրների բացահայտմանը և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն:

Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

05-8.6-Ղ2-1 Կենտրոնի ղեկավար(2022-09-07)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ | Հետազոտական, փորձագիտական և կրթական կենտրոն | Կենտրոնի ղեկավար, (05-8.6-Ղ2-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

Կենտրոնի ղեկավարն անմիջական ենթակա և հաշվետու է Պաշտպանին:

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ

Կենտրոնի ղեկավարին անմիջական ենթակա և հաշվետու են Կենտրոնի աշխատողները:

1.4 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Կենտրոնի ղեկավարի բացակայության դեպքում նրան փոխարինում է Կենտրոնի ղեկավարի տեղակալը կամ գլխավոր մասնագետներից մեկը:

1.5 Աշխատավայր

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Պուշկինի 56ա

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. ապահովում է Պաշտպանի քննարկմանը ներկայացված իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերլուծություն և ներկայացնում է համապատասխան առաջարկություններ.
2. ապահովում է Պաշտպանի քննարկմանը ներկայացված՝ իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ Աշխատակազմի այլ ստորաբաժանումների առաջարկությունների քննարկումն ու համակարգումը.
3. Ապահովում է անձանց իրավունքներին և ազատություններին առնչվող օրենքների և այլ իրավական ակտերի կատարելագործման աշխատանքները.
4. ապահովում է մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող հարցերն օրենքով կամ որևէ այլ իրավական ակտով չկարգավորված կամ ոչ լիարժեք կարգավորված լինելու դեպքերում իրավական ակտը փոփոխելու կամ լրացնելու անհրաժեշտության ու շրջանակների վերաբերյալ Պաշտպանի առաջարկությունների մշակման աշխատանքները.
5. Ապահովում և սահմանված կարգով ընթացք է տալիս Պաշտպանին ուղղված դիմումներին, որոնք վերաբերում են օրենքի կամ որևէ այլ իրավական ակտի կատարելագործմանը կամ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու առաջարկներին.
6. ապահովում է Պաշտպանի՝ օրենսդրությամբ սահմանված՝ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու գործառույթի իրականացումը.

7. ապահովում է ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին վերաբերող դիմումների վերաբերյալ հատուկ դիրքորոշումների (amicus brief) մշակման ու նախագծման աշխատանքները.
8. Ապահովում է Պաշտպանի՝ դատարան ներկայացվող հայցերի, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարան ներկայացվող դիմումների նախագծերի համակարգման աշխատանքները.
9. Պաշտպանի հանձնարարությամբ ապահովում է Պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումների, ինչպես նաև հրապարակային զեկույցների մշակման համակարգումը:
10. Պաշտպանի հանձնարարությամբ ապահովում է հանրային հետաքրքրություն ներկայացնող՝ մարդու իրավունքներին ու ազատություններին առնչվող հարցերի ուսումնասիրման և վերլուծության աշխատանքները.
11. ապահովում է կանանց և տղամարդկանց իրավահավասարության, կանանց կարողությունների զարգացմանն ու խթանմանը, ինչպես նաև ընտանիքում բռնության ենթարկված անձանց իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերի ուսումնասիրության ու վերլուծության աշխատանքները.
12. Ապահովում է Հայաստանի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացված գանգատներով որպես երրորդ կողմ, ինչպես նաև Հայաստանի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման փուլում Պաշտպանի վերլուծությունների մշակման աշխատանքները.
13. ապահովում է Պաշտպանի աշխատակազմի, ինչպես նաև շահառու մարմինների և կազմակերպությունների՝ մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող հարցերով վերապատրաստումների անցկացումը.
14. ապահովում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը վերաբերող գիտատեսական և կիրառական նյութերի, ձեռնարկների, տեղեկագրքերի, մենագրությունների, ժողովածուների և այլ տեղեկատվական-վերլուծական աշխատությունների մշակման, ինչպես նաև դրանց հրատարակման կազմակերպման աշխատանքները.
15. Ապահովում է գիտահետազոտական և կրթական աշխատանքներ՝ անհրաժեշտության դեպքում, պայմանագրային հիմունքներով դրանց մասնակից դարձնելով այլ մասնագետների և կազմակերպությունների.
16. Աշխատակազմի աշխատողների գործունեությանն առնչվող հարցերով ապահովում է մեթոդական օգնություն, դրանց վերաբերյալ տալիս մեթոդաբանական բնույթի պարզաբանումներ և իրականացնում խորհրդատվություն:
17. Ապահովում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական, միջազգային և այլ կազմակերպությունների հետ համագործակցություն.
18. Ապահովում է երկկողմ և բազմակողմ կապերի հաստատում Հայաստանի Հանրապետության և միջազգային ու օտարերկրյա համապատասխան կազմակերպությունների և մասնագետների հետ, իրականացնում է համատեղ միջոցառումներ, կազմակերպում է համաժողովներ, գիտական խորհրդակցություններ, սեմինարներ, մասնակցում այլ կազմակերպությունների կազմակերպած միջոցառումներին, նրանց հետ համատեղ կատարում փորձի փոխանակում.

Իրավունքները.

1. Պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումների, ինչպես նաև հրապարակային զեկույցների մշակման աշխատանքները համակարգելու նպատակով հավաքագրել անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր
2. հավաքագրել և ամփոփել հանրային հետաքրքրություն ներկայացնող՝ մարդու իրավունքներին ու ազատություններին առնչվող հարցերի ուսումնասիրման և վերլուծության աշխատանքները.
3. ուսումնասիրել և վերլուծել կանանց և տղամարդկանց իրավահավասարության, կանանց կարողությունների զարգացմանն ու խթանմանը, ինչպես նաև ընտանիքում բռնության

ենթարկված անձանց իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերի հետ կապված աշխատանքները.

4. համագործակցել այլ կազմակերպությունների հետ՝ գիտահետազոտական և կրթական աշխատանքների կազմակերպման նպատակով, անհրաժեշտության դեպքում, պայմանագրային հիմունքներով դրանց մասնակից դարձնելով այլ մասնագետների.
5. Աշխատակազմի աշխատողների գործունեությանն առնչվող հարցերով իրականացնել մեթոդական օգնություն, դրանց վերաբերյալ տալ մեթոդաբանական բնույթի պարզաբանումներ և տրամադրել խորհրդատվություն.
6. Պաշտպանին ներկայացվող դիմումների ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում առաջարկել բողոք ներկայացրած անձին տրամադրել դիմումների ուսումնասիրության կամ քննարկման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ.
7. պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, հասարակական և այլ կազմակերպություններից պահանջել մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ ՀՀ սահմանադրական և վարչական դատարանների դիմումների նախագծերը կազմելիս

Պարտականությունները.

1. ներկայացնել համապատասխան առաջարկություններ Պաշտպանի քննարկմանը ներկայացված իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ.
2. Օրենսդրության կատարելագործման նպատակով առաջարկություններ է ներկայացնում անձանց իրավունքներին և ազատություններին առնչվող օրենքներում և այլ իրավական ակտերում խնդիրների ու իրավակարգավորման բացերի վերաբերյալ.
3. սահմանված ժամկետում իրականացնել դիմումների մակագրությունը, ուսումնասիրել համապատասխան որոշումների, գրությունների նախագծերը և ներկայացնել դրանք Պաշտպանին.
4. իրականացնել դիմումների ուսումնասիրության նկատմամբ անմիջական վերահսկողություն՝ կատարողին համապատասխան ցուցումներ, հանձնարարականներ տալու, ինչպես նաև դրանց կապակցությամբ ըստ անհրաժեշտության քննարկումներ իրականացնելու միջոցով.
5. իրականացնել անձանց ընդունելությունը.
6. Պաշտպանի քննարկմանը ներկայացված՝ իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ Աշխատակազմի այլ ստորաբաժանումների առաջարկությունների քննարկման ու համակարգման աշխատանքների կազմակերպում.
7. ապահովել մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող հարցերն օրենքով կամ որևէ այլ իրավական ակտով չկարգավորված կամ ոչ լիարժեք կարգավորված լինելու դեպքերում իրավական ակտը փոփոխելու կամ լրացնելու անհրաժեշտության ու շրջանակների վերաբերյալ Պաշտպանի առաջարկությունների մշակման աշխատանքների կազմակերպում.
8. քննության առնել և սահմանված կարգով ընթացք տալ Պաշտպանին օրենքի կամ որևէ այլ իրավական ակտի կատարելագործմանը կամ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու առաջարկներին ուղղված դիմումները.
9. Համակարգել Պաշտպանի՝ ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով և Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու գործառույթի շրջանակներում դիմումների մշակման ու նախագծման աշխատանքները.
10. համակարգել ՀՀ սահմանադրական դատարան դիմումների ներկայացման աշխատանքները, մասնավորապես՝ հավաքագրել Պաշտպանի աշխատակազմ մուտքագրվող դիմումներով բարձրացվող համակարգային խնդիրները, դիտարկել դրանք կիրառվող դրույթների սահմանադրականության լույսի ներքո, ինչպես նաև ըստ անհրաժեշտության տալ համապատասխան հանձնարարականներ սահմանադրական դատարան դիմելու գործընթաց մեկնարկելու վերաբերյալ.
11. ներկայացնել Պաշտպանին Սահմանադրական դատարանում.

12. համակարգել ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին վերաբերող դիմումների վերաբերյալ հատուկ դիրքորոշումների (amicus brief) մշակման ու նախագծման աշխատանքները՝ մասնավորապես՝ սահմանադրական դատարանի կողմից գործը քննության ընդունելու վերաբերյալ որոշման ստացման պահից հնարավորինս սեղմ ժամկետում քննարկել տվյալ գործով հատուկ դիրքորոշման ներկայացման նպատակահարմարությունն ու անհրաժեշտությունը և զեկուցել Պաշտպանին.
13. Ըստ անհրաժեշտության մշակել, ինչպես նաև Պաշտպանին ներկայացնել ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին վերաբերող դիմումների վերաբերյալ հատուկ դիրքորոշումների նախագծերը.
14. նախապատրաստել Պաշտպանի՝ դատարան ներկայացվող հայցերի, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարան ներկայացվող դիմումների նախագծերը.
15. կազմում է վերապատրաստման ծրագիրը, մշակում է համապատասխան նյութերը.
16. մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը վերաբերող գիտատեսական և կիրառական նյութերի, ձեռնարկների, տեղեկագրքերի, մենագրությունների, ժողովածուների և այլ տեղեկատվական-վերլուծական աշխատությունների մշակման, ինչպես նաև դրանց հրատարակման աշխատանքների կազմակերպում.
17. ուսումնասիրել Պաշտպանին կարծիքի ներկայացված, ինչպես նաև հանրային քննարկման ներկայացված իրավական ակտերի նախագծերն, անհրաժեշտության դեպքում վերլուծության արդյունքների հիման վրա պատրաստել տեղեկանքներ.
18. օրենսդրական խնդիրների (բացերի) վերհանման և վերլուծության արդյունքում ներկայացնել համապատասխան պետական մարմիններին ուղղված առաջարկների նախագծեր.
19. հանդես գալ որպես Պաշտպանի ներկայացուցիչ Սահմանադրական և Վարչական դատարաններում.
20. Պաշտպանին հասցեագրված դիմումներում բարձրացվող խնդիրների ամփոփման, ինչպես նաև լիազորությունների իրականացման արդյունքում բացահայտված համակարգային խնդիրների առնչությամբ, ըստ անհրաժեշտության Պաշտպանին ներկայացնել առաջարկություններ Սահմանադրական և Վարչական դատարաններ դիմումներ և հատուկ կարծիքներ ներկայացնելու վերաբերյալ.
21. հավաքագրել և կազմել Պաշտպանի տարեկան հաղորդման, ինչպես նաև հատուկ կամ արտահերթ զեկույցների վերաբերյալ նյութերի, հիմնավորումների և պարզաբանումների փաթեթները.
22. Կենտրոնի լիազորությունների շրջանակներում նախապատրաստել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ և զեկուցագրեր.
23. վերլուծել Պաշտպանի քննարկմանը ներկայացված իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերը.
24. իր լիազորությունների շրջանակում իրականացնել պաշտոնական հաղորդակցություն:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Ուղղություն	Գործարարություն, վարչարարություն և իրավունք
Ոլորտ	Իրավունք
Ենթաոլորտ	Իրավունք
Մասնագիտություն	042101.00.6 Իրավագիտություն կամ 042101.00.7 Իրավագիտություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ իրավունքի բնագավառում՝ հինգ տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Առաջնորդում
  - Ռազմավարական պլանավորում
  - Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
  - Որոշումների կայացում
  - Բարեվարքություն
  - Աշխատակազմի կառավարում (կատարողականի կառավարում)
  - Խնդրի լուծում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Բանակցությունների վարում
  - Փոփոխությունների կառավարում
  - Կոնֆլիկտների կառավարում
  - Բողոքների բավարարում
  - Ժամանակի կառավարում
  - Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
  - Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի գործունեության որոշակի ոլորտի ղեկավարման և այդ ոլորտի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման, համակարգման, վերահսկման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի գործունեության որոշակի ոլորտի ղեկավարման և այդ ոլորտի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն և ազդեցությունը սահմանափակվում է համապետական մակարդակով որոշակի ոլորտով:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակեպությունների ներկայացուցիչների հետ:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ:

Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

05-8.6-Ղ4-1 Կենտրոնի ղեկավարի տեղակալ(2022-09-07 -2024-04-01)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ | Հետազոտական, փորձագիտական և կրթական կենտրոն | Կենտրոնի ղեկավարի տեղակալ, (05-8.6-Ղ4-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

Կենտրոնի ղեկավարի տեղակալն անմիջական ենթակա և հաշվետու է Կենտրոնի ղեկավարին:

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ

Կենտրոնի ղեկավարի տեղակալը ենթակա և հաշվետու աշխատողներ չունի:

1.4 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Կենտրոնի ղեկավարի տեղակալի բացակայության դեպքում նրան փոխարինում է Կենտրոնի ղեկավարը կամ գլխավոր մասնագետներից մեկը:

1.5 Աշխատավայր

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Պուշկինի 56ա

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. համակարգում է Պաշտպանի քննարկմանը ներկայացված իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերլուծության աշխատանքները և ներկայացնում համապատասխան առաջարկություններ.
2. անձանց իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա արագ արձագանքման շրջանակներում իրականացնում է անհետաձգելի այցեր.
3. համակարգում է մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող հարցերն օրենքով կամ որևէ այլ իրավական ակտով չկարգավորված կամ ոչ լիարժեք կարգավորված լինելու դեպքերում իրավական ակտը փոփոխելու կամ լրացնելու անհրաժեշտության ու շրջանակների վերաբերյալ Պաշտպանի առաջարկությունների մշակման աշխատանքները.
4. համակարգում է օրենքի կամ որևէ այլ նորմատիվ իրավական ակտի կատարելագործման կամ Սահմանադրական դատարան դիմելու առաջարկների վերաբերյալ Պաշտպանին ուղղված դիմումների քննարկման և սահմանված կարգով ընթացք տալու հետ կապված աշխատանքները.
5. համակարգում է Պաշտպանի՝ օրենսդրությամբ սահմանված՝ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու գործառույթի իրականացման աշխատանքները.
6. համակարգում է Սահմանադրական դատարան ներկայացված՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին վերաբերող դիմումների վերաբերյալ հատուկ դիրքորոշումների (amicus

brief) մշակման ու նախագծման աշխատանքները.
7. համակարգում է Պաշտպանի՝ դատարան ներկայացվող հայցերի, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով Վարչական դատարան ներկայացվող դիմումների նախագծերի նախապատրաստման աշխատանքները.
8. համակարգում է տարեկան հաղորդման, ինչպես նաև արտահերթ հրապարակային զեկույցների մշակման աշխատանքները.
9. համակարգում է հանրային հետաքրքրություն ներկայացնող՝ մարդու իրավունքներին ու ազատություններին առնչվող հարցերի ուսումնասիրման և վերլուծության աշխատանքները.
10. համակարգում է կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովման, կանանց կարողությունների զարգացմանն ու խթանմանը, ինչպես նաև ընտանիքում բռնության ենթարկված անձանց իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերի ուսումնասիրության ու վերլուծության աշխատանքները.
11. համակարգում է Հայաստանի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացված գանգատներով որպես երրորդ կողմ, ինչպես նաև Հայաստանի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման փուլում Պաշտպանի վերլուծությունների մշակման աշխատանքները.
12. կազմակերպում է Պաշտպանի աշխատակազմի, ինչպես նաև շահառու մարմինների և կազմակերպությունների՝ մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող հարցերով վերապատրաստումների իրականացման աշխատանքները.
13. համակարգում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը վերաբերող գիտատեսական և կիրառական նյութերի, ձեռնարկների, տեղեկագրքերի, մենագրությունների, ժողովածուների և այլ տեղեկատվական-վերլուծական աշխատությունների մշակման աշխատանքները:

Իրավունքները.

1. համակարգել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց կազմակերպությունների, ինչպես նաև հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ համագործակցությունը.
2. համակարգել Հայաստանի Հանրապետության և միջազգային ու օտարերկրյա համապատասխան կազմակերպությունների և մասնագետների հետ երկկողմ և բազմակողմ կապերի հաստատման աշխատանքները, ինչպես նաև համատեղ միջոցառումների իրականացման, համաժողովների, գիտական խորհրդակցությունների, սեմինարների կազմակերպման, այլ կազմակերպությունների կազմակերպած միջոցառումներին մասնակցության, նրանց հետ համատեղ փորձի փոխանակման աշխատանքները.
3. Կենտրոնի առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացումն համակարգելու նպատակով համապատասխան մարմիններից և Պաշտպանի աշխատակազմի ստորաբաժանումներից պահանջել և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն, պարզաբանումներ, հիմնավորումներ, նյութեր և փաստաթղթեր.
4. Պաշտպանին ներկայացվող դիմումների ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում առաջարկել բողոք ներկայացրած անձին տրամադրել դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ.
5. կազմակերպել շահագրգիռ կողմերի հետ Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում, Պաշտպանին կարծիքի ներկայացված, ինչպես նաև հանրային քննարկման ներկայացված իրավական ակտերի նախագծերի, Սահմանադրական և Վարչական դատարաններ հատուկ կարծիքների և դիմումների կազմման համար, օրենսդրական խնդիրների (բացերի) վերհանման և վերլուծության քննարկումներ.
6. Սահմանադրական և Վարչական դատարանների դիմումների նախագծեր կազմելիս համակարգել մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ պահանջելու աշխատանքները.
7. համակարգել Պաշտպանի տարեկան հաղորդման, ինչպես նաև հատուկ կամ արտահերթ զեկույցների, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը վերաբերող գիտատեսական և կիրառական նյութերի, ձեռնարկների, տեղեկագրերի,

մենագրությունների, ժողովածուների և այլ տեղեկատվական-վերլուծական աշխատությունների մշակման և կազմման աշխատանքները.
8. համակարգել Պաշտպանի աշխատակազմի և միջազգային ու օտարերկրյա կազմակերպությունների միջև միջազգային ծրագրերի հետ կապված համագործակցության աշխատանքների վերաբերյալ պահանջված և ստացված անհրաժեշտ մասնագիտական կարծիքների և առաջարկությունների ամփոփումը:

Պարտականությունները.

1. համակարգել սահմանված ժամկետում դիմումների մակագրության, համապատասխան որոշումների ուսումնասիրության, գրությունների նախագծերի կազմման աշխատանքները.
2. համակարգել անձանց ընդունելության աշխատանքները.
3. համակարգել Պաշտպանին կարծիքի ներկայացված, ինչպես նաև հանրային քննարկման ներկայացված իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրման աշխատանքները.
4. համակարգել օրենսդրական խնդիրների (բացերի) վերհանման և վերլուծության արդյունքում համապատասխան պետական մարմիններին ուղղված առաջարկների նախագծերի ներկայացման աշխատանքները.
5. ներկայացնել առաջարկություններ Սահմանադրական և Վարչական դատարաններ դիմումներ և հատուկ կարծիքներ ներկայացնելու վերաբերյալ.
6. համակարգել Պաշտպանի տարեկան հաղորդման, ինչպես նաև հատուկ կամ արտահերթ զեկույցների վերաբերյալ նյութերի, հիմնավորումների և պարզաբանումների փաթեթների հավաքագրման և կազմման աշխատանքները.
7. համակարգել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը վերաբերող գիտատեսական և կիրառական նյութերի, ձեռնարկների, տեղեկագրերի, մենագրությունների, ժողովածուների և այլ տեղեկատվական-վերլուծական աշխատությունների մշակման աշխատանքները.
8. համակարգել Աշխատակազմի մասնագիտական վերապատրաստումների և մարդու իրավունքների վերաբերյալ կրթական ծրագրերի նախագծման և մշակման հետ կապված աշխատանքները.
9. Հայաստանի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացված գանգատներով որպես երրորդ կողմ ներգրավման, ինչպես նաև Հայաստանի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման փուլում Պաշտպանի ներգրավման գործընթացի, ներառյալ՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե ներկայացման համար համակարգել հատուկ դիրքորոշումների մշակման աշխատանքները.
